



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1510

16
4-57

185-7

2010

147

p 696

B 200 L

1500

Ս Կ Ջ Բ Ո Ւ Ն Ք

Ո Ւ Ղ Ի Ղ Խ Ո Ր Հ Ե Լ Ո Յ

Ե Ի

Բ Ա Ր Ի Ո Ք Կ Ե Լ Ո Յ

16

U-57

40

50

ՍԿՁԲՈՒՆՔ

ՈՒՂԻՂ ԽՈՐՀԵԼՈՅ

ԵՒ

ԲԱՐԻՈՔ ԿԵԼՈՅ

ԽՄԲԱԳՐԵԱՑ

Հ. Ա. Կ. Բ. *Հրատարակիչ*

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Printed in Turkey



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ԶԱԶԱՐ

1857—ՌՅԶ

9156

10
2

LIBRARY
OF THE
BOSTON PUBLIC LIBRARY
CITY OF BOSTON
MAY 19 1904

~~U. S. DEPARTMENT OF AGRICULTURE~~



in Turkey

1854
39

LIBRARY
OF THE
BOSTON PUBLIC LIBRARY
CITY OF BOSTON
MAY 19 1904

Յ Ա Ռ Ա Ջ Ա Ւ Ա Ն

Բանաւոր ստեղծեալ մարդս յարարչէն, որով
խոհուն է և բարոյական 'ի բնէ, առաջին պարտք
նորա է ուղիղ խորհել և ուղիղ կեալ. և քան զա-
մենայն՝ այդ պարտի լինել նորա ուսումն կարևոր :
Ջայդ օղիկ սկզբունս աւասիկ ուսուցանել առեալ
է գրկոյքս այս :

Որ ինչ զՈւղիղ խորհելոյն արժանի նախաշա-
ւիղ բանք իցեն, 'ի գլուխ անդ գրոցն աւանդեալ
է բաւականապէս. իսկ զՈւղիղ կամ Բարեոք կե-
լոյն՝ ասասցոք ինչ 'ի նախագրունս աստ, սուղ
բանիւ բազում ինչ բովանդակելով յունկն ար-
ժանաւոր լսելեաց :

Աստուած զմարդն ուղիղ արար, այլ մեղօք և
ախտիւք զառածեալ՝ կարօտ գտաւ օրինաց ուղ-
ղութեան, մանաւանդ յաստուածակոյս կողմա-
նէն : Բայց քանզի մտաց և եթ ուղղութիւն չէ ինչ
ինքնին գրեթէ բաւական առ լաւութիւն կա-
մաց և բարուց, և արարչին առաջին փոյթ էր
զկաման և զվարսն ուղղել 'ի շաւիղս արդարու-

Թեան, նմին իրի և աստուածեղէն գիրք գրեթէ
առ հասարակ ՚ի բարոյականն կէտ եդեալ ակ-
նարկեն, ճշմարիտ իմաստութեան անուամբն սա-
տուեալ:

Բազում օրինակօք հոգացաւ Աստուած կրթել
զմարդն իսկզբանէ* . նահապետօք, մարգարէիւք
և ազգաց ազգաց իմաստնուիք . և առանձինն ՚ի
ձեռն Մովսիսի տալով զհամառօտս ամենայն գի-
տելեաց կարևորաց ՚ի հրահանգս վարուց տասնա-
բանեայ պատուիրանօքն, որ ոչ այլ ինչ են՝ քան
թէ բնական լուսոյ և օրինաց թելագրութեանցն
բովանդակութիւն հակիրճ: Յետ այնորիկ և ՚ի
ձեռն իմաստնոցն Յունաց և այլոց ևս կրթական
ազանց՝ ոչ սակաւ նպաստ եղև յայն . զորոց և
գրեալ իսկ է, թէ “ Յորժամ հեթանոսք որ զօ-

* Յուստինոս վկայ չևզճէ քրիստոնեայ կոչել
զիմաստունս ազգաց, զամենեսեան՝ որ ըստ ուղիղ
բանի կեցին . զի « Բանն աստուածային, առէ, է
իմաստ ընդհանուր՝ որ լուսաւորէ զամենայն մար-
դիկ . և որ ինչ իմաստնաբար ասացեալն է առ
ազգս ազգս, քրիստոնէից անկ է » : Զաստ 4 .
ա, 7, 13, 46 :

Սուրբն Իրենէոս . « Ոչ եթէ ՚ի ծնանելն ՚ի
Մարիամոյ սկիզբն արար Բանն յայանել զհայր
իւր, այլ յամենայն ժամանակս ծանոյց զնա ամե-
նեցուն » : Ընդդէմ 4 երջ . 7, 6 :

Տերաուղիանոս . “ Արարիչն ազգի մարդկան
զնոյն օրէնս ետ ամենայն ազանց, և ընդ ժամա-
նակս ժամանակս ետ նորոգել և քարոզել ՚ի ձեռն
որոց կամեցաւն » : Ընդդէմ 3, 6 :

րէնան ոչ ունին, — իմա զգրական կամ զգրաւոր, —
քնուածեամբ զօրինացն գործիցեն, նոքա որ զօ-
րէնան ոչ ունին՝ անձանց իւրեանց իսկ են օրէնք .
որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ ՚ի սիրաս
իւրեանց վկայուածեամբ մտաց իւրեանց, : հոմ. Բ :
Սահայն և այնու ամենայնիւ ոչ որպէս պարան էր
կրթեցաւ մարդն :

Ի վախճան ժամանակաց առաքեաց Աստուած
զԲանն իւր յաւիտենական, որ եկն ուսոյց, թող
զանհաս խորհրդոցն յայտնուածին, ոչ այլ ինչ
կրօնս և խրատս ՚ի կրթութիւն ուղղութեան
մարդոյն, բայց զնոյն ինքն զքնական օրէնան և
զտասնբանեան պատգաման հանդերձ լմամբ նո-
ցին և կատարելութեամբ : Զի որ զերբայական
զխտրական օրէնան աստիտ առնելոց էր և խափա-
նելոց, ինքն իսկ ասաց, թէ “ Ոչ եկի լուծանել զօ-
րէնան, այլ ընուլ, ” . յայտ է թէ զքնականն, զի և
չգոյր ինչ այլ յայնժամ օրէնք աստուածային՝
բաց յերկուց անտի : Եւ Առաքեալք նորին և ա-
շակերտք յամենայն դարս զնոյն քարոզեցին ան-
զերաց : Բայց սահայն և այնպէս տակաւին ոչ հրա-
հանդեցաւ մարդն, կամ գէթ չեհաս ՚ի կատարե-
լութիւնն նկատեալ յարարչէն :

Այդմ պատճառք թերևս և այն թուիցի, զի
ընդ պարագայս դարուց յոլովից՝ չերևեցաւ առ
մարդիկ վարդապետութիւն մի համառօտ լի բո-
վանդակ, յորում ցիրուցան աւանդեալքն յաս-
տուածային Բանէն և ՚ի քարոզչաց նորա թեւա-
դրութիւնք և խրատք բարոյական ճշմարտու-

Թեանց՝ 'ի մի ձուլեալ և աղխաղխեալ կապեալ ի
 ցեն ընդ սկզբունս և հիմունս բնական լուսոյ և
 օրինաց, և այնպէս աւանդեալ և ուսեալ տար-
 րասցին 'ի միտս մարդոյն 'ի մանկութենէ : Որով
 վարդապետութիւնք Բանին մարմնացելոյ՝ մար-
 մնասցին իմն և ինքեանք . ցուցցին կառուցեալ 'ի
 վերայ օրինաց բնութեան, որ է ասել՝ 'ի վերայ
 նորին ինքեան աստուածակարգ բնութեան, և
 անսասան հիմամբքն հաստատուն կացցեն և ան-
 շարժ : Որպէս զի մի մտացածին ինչ և քմազարդ
 բան սոսկ և քարոզութիւն ճարտարակ կարծես-
 ցին մարդոյ՝ 'ի նուաճել զխոտորընթաց բնու-
 թիւնն, այլ ահա բուն իսկ անհրաժեշտ և անճո-
 ղոպրելի օրէնք և կարգ և օգուտ բնութեան հաս-
 տատելոյ յարարչէն՝ « Որ զամենայն մարդիկ կամի
 զի կեցցեն և 'ի գիտութիւն ճշմարտութեան եկես-
 ցեն », . ԹՅԺ . Բ . վկայեալ և 'ի ճշմարիտ լու-
 սոյ բանին՝ որ լուսաւոր առնէ զամենայն մարդ .
 ՅՎԷ . Թ :

Զայդ աւասիկ յանձն առեալ խոստանայ առ-
 նել գրկոյքս այս, համառօտութիւն մեծամեծ հա-
 տորոց . բայց ոչ թէ բովանդակ Ուղղախոհու-
 թեան արուեստ և Բարոյական, այլ հիմունք և եթ
 և սկզբունք նոցին . զոր ըստ կրկին մասանցն յեր-
 կուց նշանաւոր միախոհ միահաւան իմաստնոց
 եւրոպէականաց ազատօրէն ծայրաքաղ արարեալ
 է 'ի պէտս ազգիս, և հակիրճ աեղեկութիւնս 'ի
 նոյնս յաւելեալ, զոր փոքր 'ի շատէ ընթերցմունք
 մեր մեզ 'ի միտ արկին :

Ուղիղ միտք հիմն են ուղիղ կելոյ . վասն որոյ ,
յետ Ուղիղ խորհելոյն սկզբանց , սուղ բանից
պէտք ընկնին մեզ առ սկզբունս Բարեոք կելոյն :
'Նա զի և որ յառաջնունս հաստահիմն խարսխեալ
է սկիզբն և օրէն ճշմարտութեան , 'ի նոյն կառու-
ցեալ կայ և երկրորդն ըստ արժանի ուղիղ իմաս-
տասիրութեանն միաբանութեան . զոր և 'ի սա-
կաւ գլուխս հատցուք կարճառօտիւք :

Զոր բնաբոյս բանն և հանճար ինքնին ուսու-
ցանեն 'ի բանական և 'ի բարոյական կարգին՝ զայն
մեք մեզէն արասցուք . ապա 'ի վերայ եկեալ գե-
րաբուն և գերակատար աստուածայինն բան և
խրատ՝ կատարեսցէ զմարդն քրիստոնեայ : Եթէ
չէր մոլորեալ մարդկան 'ի ճանապարհէն Աստու-
ծոյ օտարոտի վարդապետութեամբք և օրինակօք ,
չլինէր ինչ պէտս գրոց առ ուսանել զճշմարտու-
թիւն , որ գրոշմեալ կայ յարարչէն 'ի տախտակս
սրտից նոցա :

Իսկ եթէ ըստ բնական և եթ խրատուց 'ի բա-
րոյական մասին այսբան և այսպիսի կատարելու-
թիւն պահանջի մարդ անդատին 'ի սկզբանցն ,
քանի՞օն ապա՝ ուր 'ի վերայ յաւելցին և քրիստո-
սականքն : — Այդ լիցի որո՞ճ մտաց ընթերցողին ,
իբրև 'ի վախճան գրոցս հասանիցէ :

Ասացուք ինչ և զճայ լեզուէս՝ որով վարե-
ցաքս : — Քանզի պերճ գրոցն բարբառ անիմա-
նալի է բազմաց , և աշխարհիկ խօսք միոյ միոյ գա-
ւառի՝ անծանօթ և անհաճոյ այլոց , թուեցաւ
մեզ՝ թէ միջին իմն ընդ նոսա ամենապարզ գրա-


ւոր լեզու , որպէս սարաի հաճոյական և ընդու-
նելի ամենեցուն լինել , իբրև հասարակաց հայրե-
նի , նոյնպէս և բաւականապէս հասկանալի բազ-
մաց . գէթ իբրև զմին 'ի գաւառացի խօսից անտի՝
զոր ջանան իմն ոմանք համաշխարհական ասել և
առնել . որ անհնարին թուի : Զի և այն՝ ոչինչ
ընդհատ յայլոց գաւառական խօսից՝ օտար և հե-
ռի է 'ի գրոց օրինաւոր լեզուէն յուռնին այլաձայ-
նից : Այսն որոյ լիցի դարձեալ իւրաքանչիւր
զիւրն պաշտել՝ 'ի վտանգ մեծ խափանելոյ 'ի սպառ-
հայրենաւանդ ազգային բարբառոյս , և 'ի խզումն
միոյ միայնոյ հազիւ ևեթ մնացելոյ յօդակապի ազ-
գիս վարատելոյ :

Ի դարման չարեացդ և 'ի հասարակաց հաճու-
թիւն , և բազմաց ազգասէր ուսըմնասիրաց հաս-
կացումն , յորոց աճումն յուսացուցանեն զմեզ
վարժարանք , մեք յայս կարևոր դրկոյք ըստ կա-
րի և ըստ ներելոյ նիւթոյն ընտրել ջանացաք զմի-
ջինն զայն ընդ դժուարահաս դրագիտականն և
ընդ գաւառայինն , զամենապարզ լեզուն հասա-
րակաց . բայց առանց աղաւաղելոյ զշնորհս բար-
բառոյն և վայելչասիրացն խոտան լինելոյ . այսմ՝
ևեթ թուեցեալ մեզ հնար օգտի բազմաց և ճողո-
պրելոյ 'ի վտանգէ անտի լեզուիս և ազգիս :

Որք բնաւ հայերէն չգիտիցեն , չիք ինչ մեր ընդ-
նոսա բան . իսկ ոյք բաւական գիտեն , և մինչև
ցայժմ՝ հասկանային բաւականապէս զլրագրաց և
զօրագրաց համաշխարհիկ կարծեցեալ ուամիկ լե-
զուն , առնոսա ասեմք . զի եթէ քայլ մի ևս կամ եր-

կու անտի այսր բանայցեն , թէ և ոչ ինքեանք , այլ որդիք իւրեանց , մտանեն 'ի պարզ լեզուն ազգային , որ անընդմիջաբար զինի կայ նորա՝ իբրև առաջին սանգղամատն յոքնորոշ աստիճանաց նորին , և գէթ փոքու ջանիւ դպրոցաց և ստէպ ընթերցամամբ դիւրիմաց եղիցի :

Որք մեծախոհոլթեամբ նախանձաւորքն են ազգային գրոց բարբառոյն , հաճ և հաւան գտցին անշուշտ ընդ մեր ընտրութիւնս : Իսկ որ աշխարհիկ խօսիցն սիրողք՝ իբրև շուրջ զիւրեամբք օգտակարի , և 'ի զարգացումն նորին նկրտեալք , քանզի ջան և դիտաւորութիւն է նոցա՝ որպէս ասեն՝ ըստ կարի 'ի գրաւորն մերձենալ խառնիլ , և ոտն առ ոտն յայն ընդէլուցանել զազգն , ապա և նոքին ուրեմն չունիցին արհամարհել զմեր խնամս , որ նոցա իսկ փութոյն նպատակ թուի և աւարտ :



ՍԿԶԲՈՒՆՔ


ՈՒՂԻՂ ԽՈՐՀԵԼՈՅ

Ս Կ Ձ Բ Ո Ւ Ն Ք

Ո Ւ Ղ Ի Ղ Խ Ո Ր Հ Ե Լ Ո Յ

Կ Ա Մ

Բ Ա Ն Ա Կ Ա Ն Ի Ն



Գ Լ Ո Ւ Խ Ա .

Ձինչ էր , և զինչ պարտի շինել օրենք

Ուղիղ խորհելոյ :

1 Անդամին 'ի վաղ ժամանակաց մինչև ցա-
ւուրս մեր՝ ոչ այլ ինչ էր գրով աւանդեալ օրէնք
ուղիղ խորհելոյ և ըստ այնմ՝ ուղիղ դատելոյ , բայց
եթէ արուեստ՝ օրինաւոր հեռուութիւն հանելոյ
'ի բանէ միտչէ , որ ճշմարիտ համարեալ իցէ և
խոստովանեալ :

2 Բայց թէպէտ և ուղիղ իցեն կանոնքն կար-
գեալք առ այդ , ջիք նոցա և ոչ մի երաշխաւորու-
թիւն՝ վկայ անսխալութեանն . ամենեքեան առ
հասարակ 'ի վերայ շարաբանութեան հիմնեալ
են : Եւ այլ և այլ ձևք շարաբանութեան՝ յայն ա-
նուանի սկիզբն հաստատին , թէ երկու իրք՝ հա-

ւասար են ընդ միմեանս, յորժամ երկոքին հաւասար իցեն երրորդի իմիք: Ուստի և շարաբանութեան արուեստ ոչ այլ ինչ է, բայց 'ի մէջ երկուց իրաց՝ զորոց հաւասարութիւնն կամիցիմք ցուցանել՝ միջնորդ կամ չափ մուծանել զերրորդ իմն, և համեմատել ընդ նմա: Օրինակ իմն, 'ի ցուցանել թէ Օդն է ծանր, ասել յայս շարս բանից, որ այն ինքն իսկ է շարաբանութիւն.

1 Մարմինք են ծանր,

2 Օդն է մարմին,

3 Ապա օդն է ծանր:


3 Օդն՝ ենթակայ խնդրոյն՝ կոչի փոքրոյն ծայր կամ եզր համեմատութեանն, վերադիրն ծանր՝ կոչի մեծագոյն, մարմին կոչի միջնորդ և ըստ ոմանց լաի, զի միջնորդ եմուտ և չափ համեմատութեան երկոցուն ծայրիցն: Աւաջին բանն կոչի մեծագոյն առաջարկութիւն կամ առած, երկրորդն՝ փոքրագոյն, երրորդն՝ հեփնո-իւն, որ 'ի նոցունց ելանէ:

4 Այս օրէնք ճշմարիտ են, բայց ոչ ինչ օգնեն յուղղախոհութիւն: Չի չէ իսկ ճշմարիտ, թէ մեծագոյն՝ փոքրագոյն և միջնորդ եզերք շարաբանութեան՝ ճշգիւ հաւասար իցեն ընդ միմեանս: Եթէ այնպէս ինչ էին, զմի և զնոյն ինչ և եթ յայտ առնէին: Նոյնպէս չէ ստոյգ թէ մեծագոյն և փոքրագոյն առածքն և հետևութիւնն՝ միմեանց հաւասար բանք իցեն: Չի եթէ ամենեւին հաւասարք էին, մին ոչ ինչ աւելի ասէր քան զմիւսն, ապա և ոչ աւելի ինչ վճարէաք յառաջ

նոյ բանէն մինչև ցերրորդն : Իսկ արդ, եթէ փոքրագոյն առածն այլ ինչ ասէ քան զմեծագոյնն, և հեռուութիւնն աւելի ինչ քան զնոսա երկօսին, ուրեմն չեն հաւասար ընդ մեանս : Այսմ չիք հակառակ կալ :

5 Առ խուսելոյ յանտեղութենէ այտի՝ ասեն, թէ մեծագոյն եզրն պարունակէ զմիջնորդն, և սա զփոքրագոյնն : — Հաւաստի է և այդ ըստ Բողոքական-Բեան, այս է՝ ըստ բազմութեան իրացն՝ որոց պատշաճի գաղափարն . բայց ոչ ըստ Բողոքական-Բեան, իմա ըստ բազմութեան գաղափարաց՝ զոր ամբողջ գաղափարն ողջոյն պարագրէ : Արդ՝ հայել պարս է՝ ոչ յընդարձակութիւն, այլ ի բովանդակութիւն գաղափարին . և միշտ մասնաւոր գաղափարն է որ ՚ի բովանդակութեան իւրում պարունակէ զընդհանուրն : Այսն որոյ և մարթիասել Մարդն է կենդանի, այլ ոչ ևս թէ Ահեղանին է մարդ . զի մարդն հարկաւ ունի զկենդանութիւն, բայց ոչ կենդանին զմարդութիւն : Սմին իրի ևս՝ պատճառ ճշմարտութեան ոչ յընդհանուր առածս կամ բանս է, այլ ՚ի մասնաւորսն, որոց միաբանութիւնն համարձակէ զմեզ յորինել զընդհանուրն, յորմէ հանեմք ապա դիւրաւ այլ մասնաւորս : Այս ամենայն՝ ճոխագոյն բացատրեացի ՚ի զինիսդ :

6 Ապա ուրեմն բնաւ իսկ օրէնք ուղղախոհութեան մերոյ և ուղղագատութեան իսխուտ է : Թող զի, թէպէտ և լիով արդարացուցանէր զօրէնսդ վերոյիշեալ սկիզբնն՝ (2) յոր հաստատի,



տակաւին մնայր ցուցանել զնոյն ինքն զսկիզբն զայն, և զայլ ևս սկզբունս ամենայն զանժխտելիս՝ յորոց ապացուցանի ինչ, և 'ի վեր բերել՝ թէ յիմ իմիք և իւ իցեն ճշմարիտ : Արդ յայդ՝ և ոչ ձեռնարկեաց անգամ ցայժմ ուղղախոհութեանն արուեստ . նա մանաւանդ առաջին սկիզբն զայս կարգէ, թէ Չէ պարտ վիճել զսկզբանց : Եւ սակայն արուեստին գրողք՝ իւրաքանչիւր առաւել կամ նուազ սկզբունս ընդունին քան զնախայաջորդս իւրեանց . ընդ կէսս հաւանին, զայլսն ըստ գտանեն : Բայց և ոչ որ ցուցանէ զբուն պատճառս ճշմարտութեան յանձն առելոցն, և զարտութեան խոտելոցն :

7 Ոմանք յուղիղ խելս ապաստան տունեն զայդ, 'ի հաւանութիւն հասարակաց մտաց, 'ի խոր իմացուած մտացեաց : Իսկ այլք՝ հաւաստի և աներկբայ ասեն զայն բան, որ յստակ և պայծառ իմաստ բերէ, կամ որ յայլ բառս փոխեալ չունի ինչ ապա յստակագոյն և ստուգագոյն իմաստ, կամ որոյ հակառակն՝ հակասութիւն և անտեղութիւն ունի . . .

8 Այդ ամենայն, թէպէտ և տարտամ և բիւրդ ժուարութեամբ լի առ 'ի պէտս, մարթի թէ ուղիղ և ճշմարիտ իցէ . բայց պիտոյ էր ցուցանել զայնր զտառճառն, զոր ոչ ուրուք է ցուցեալ : Եւ սակայն՝ այդք ևս առաճք են կամ բանք իբրև զայլսն, որոց ճշմարտութիւնն կարօտի ցուցման . և բացատրութեան նոցա և ցուցման՝ ապաքէն իցեն ինչ գամք հնարից . զի ոչ եթէ ընդոստ ինչ յայնս

ուրուք հասեալ իցէ : Հարկ է թէ հնարաւոր ի-
ցէ մեկին ցուցանել՝ որպէս որ հասեալ իցէ յայնս,
և յինչ պատճառս յայնտօիկ յանկուցեալ : Մինչ
չև ինչ դատեալ մարդոյն՝ յառաջագոյն՝ ՚ի հարկէ
զգացեալ է . մինչ չև կազմեալ բանս ինչ բա-
ցայայտս , դատմունս ինչ արարեալ է գէթ տար-
ատմագոյնս , և մինչ չև բանս ինչ ընդհանուրս յօ-
րինեալ , մասնաւորս ինչ յօգեալ է : Ահա այդ ա-
մենայն կարօտէր բացատրութեան :

9 Եւ քանզի չև է այդ եղեալ , խոստովանես-
ցուք՝ թէ ուղղախոհութեանն արուեստ , թէպէտ
և անըստգիւտ համարեալ յոճն իւր , ՚ի թիւր
կարծիս յեցեալ է ՚ի հանել զհետևանսն . հաստա-
տուն հիման կարօտի առ ՚ի կառուցանել զամենայն
սկզբունս իւր : Այսն որոյ և առանց իրիք հաւաս-
տի ստուգութեան է՝ յորմէ կարիցեմք սկսանել ,
և անդուստ ապա անշուշտ լինել ընդ ճշմարտու-
թիւն և ընդ աներկիւանութիւն ամենայնի՝ զոր գի-
տեմքս կամ գիտել կարծեմք :

10 Ահա և սմին իրի աղագաւ՝ ոչ որ կարողա-
ցաւ կարկէլ և ափ ՚ի բերան առնել ոճով զյան-
դուգն անհաւանսն . շատ համարեալ մերթել զնո-
սա , և արհամարհանս իմն պատճառելով՝ նկուն
առնել զնոսա . որ դալտ և յայտ՝ զանկարողու-
թիւն յաղթահարելոյ ՚ի գէմս բերէ . զի գիւրին
է ապաքէն անդոսնել , քան պատասխանի տալ և
պատգանձեցուցանել ըմբերանեալ :

11 Այս անկայուն հանդամանք հերիք համա-
րեցան երբեմն . թերևս այնպէս ինչ հարկ էր առ

ժամն, ցորչափ մարդկեղէն գիտութիւնն՝ դեռևս
թերակատար, և ՚ի գիւտս ինչ կեթ փոքր ՚ի շա-
տէ յաջողեալ, չոսյր իսկ ակն ունել մինչև ցաղ-
բերակն և ցառաջին բուն պատճառ ամենայն ըս-
տուգութեան հասանելոյ: Բայց զարդիս՝ յաճա-
խագոյն յաջողուածք յայտ արարին զկորովս մը-
տաց մարդոյն: Յոլովք ՚ի գիւտիցս ոչ ևս են ըստ
դիպաց ինչ արգասիք գուշակական հանճարոյ,
այլ արդիւնք հնարագիտութեան սրաաես մտաց:
Բազում ինչ ըստ կարգի ոճոյ կանխանկատ տե-
սութիւնք՝ հաւաստեցան ապա յարդեանց իրացն:
Ամենայն ինչ հաւատարիմ առնէ, թէ գոն մեզ
ստոյգ ճշմարտութիւնք, և զի գոյ մտաց արահետ
անմոլար և անխոտոր յամենայն հետազօտելի սահ-
մանս խնդրոց:

12 Ապա իրաւասպէս պահանջի, զի և ուղղա-
խոհութեան և ուղղագատութեանն արուեստ,
առաջնորդն համարեալ ամենայն հմտութեանցս,
իցէ և ինքն հաւաստի իմն ճիշդ գիտութիւն. ու-
նիցի անվրէպ մուտ ինչ և սկիզբն ընթացիցն. ա-
մենայն սկզբունք իւր իցեն միայն հետևութիւնք
միոյ իրիք նախագիւտ և նախահաւակ արդեանց ի-
րաց ճշմարտութեան՝ ՚ի բնութեան հաստատե-
լոց. ցուցցէ զպատճառս սխալմանցս և զուղղու-
թեանց. համայն ասել, իցէ ստոյգ գիտութիւն
ճշմարտութեան, և ՚ի լոյս յայտնութեան ածիցէ
մեզ զայն՝ թէ յո՞ գտանիցի: Եւ արդարև իսկ այդ-
պիսի պարտի լինել և զայդ վճարել. ապա թէ ոչ,
անտախ խաղալիկ համարեսցի, և քան զբնական

պատրողական : Հարկ է ուրեմն նորաստեղծուլ
զայն բոլորովին ¹ :

1 Պաքոն անգուստի վերուստ, յետ ըստգիւտ
լինելոյ հնոյ ոճոյն, ապա “ Հարկ է, աւել, ազ-
նուագոյն իմն և կատարելագոյն մուծանել ոճ”
յառաջնորդ մտաց և խորհրդոց ” :

Մի ինչ կարէ յերկբայս արկանել զվերիվե-
րոյ խորհող ոք . թէ ընդէր խոտիցի մեզ աստանօր
առաջին Տրամաբանութիւնն հինաւանդ, ուր ահա
նորա սկզբամբք վարեցեալքն յայնքան դարս՝ ու-
ղիղ առաջնորդեալք են ՚ի խոյզ և ՚ի խնդիր ճշ-
մարտութեան : Առ որ ասելի է նախ, թէ ոչ ա-
մենեքեան և ոչ միշտ ուղիղ առաջնորդեալք են,
որպէս առգնէ երկմտողդ այդ . այլ բազումք և
ոչ սակաւ ուրեք թիւր ընթացեալ են . յորմէ և
բազմադ իմի մոլորութիւնք և վէճք անսպառ ծա-
գեալ : Երկրորդ, թէ ուր ուրեք ուղիղ ինչ խոր-
հեալ իցէ յառաջինսն, որպէս բազում ինչ բա-
զում ուրեք, սակայն ոչ եթէ հնոյ Տրամաբանու-
թեան արուեստին շնորհիւն յաջողեալ է այն,
այլ մանաւանդ խոտորելով յոլով ուրեք ՚ի նմա-
նէ, կամ հակառակ այնմ հեռուելով շաւիղ, և
ոչ զայնր՝ այլ զայսր զմերոյ օրինացս կիրթ ունե-
լով զոճ :

ԳԼՈՒԽ Բ .

Առաջին ստորգործիւն՝ գոյործիւն մեր . և ե
այն 'ի զգալ :

13 Յասացելոցս յայտ է նախ , թէ ուղղախո-
հութեան արուեստն ոչ այլ ուստեք ծնանիցի ,
բայց 'ի մանր զննելոյ զխոհուն միտս մեր . զի խնդիր
այն է , զոճ գնացից մտացս առնուլ 'ի քնին և սահ-
մանել : Երկրորդ , զի առաջին փոյթ նորա լինե-
լոց է՝ 'ի խոյզանկանել թէ ո՞ր այն առաջին իր իցէ
հաւաստի մեզ և անյերկուանալի , զի անախ յայլան
որ 'ի նմանէն բղխիցեն՝ անցանիցեմք . որք և նոյն-
պէս ստոյգ իցեն մեզ այնուհետև և աներկբայելի :

14 Իսկ այս երկու խնդիրք ևս տանին զմեզ 'ի
քննութիւն անձանց մերոց . զի ո՞ւր գտանիցեմք
անշուշտ զիրն զայն առաջին , բայց 'ի ներքս 'ի
մեզ : Զանասցուք ուրեմն խորամուխ լինել 'ի մեզ
ինքեանս : — Զինչ գտանեմք անդ : — Զգտցումն :
Ոչ այլով իւրք կեամք , բայց միայն զի զգամք . ե-
թէ չէր մեզ զգալ , չէր և ոչ կեալ² : Այնու գի-
տեմք թէ գոմք և կեամք , զի զգամք զայն յամե-

2 Ասան այսորիկ ընտրէ մարդս չարաւ կեալ-
քան մեռանել . զի զգայութիւն չարեացն ևս՝ կեալ
է . զի որովհետև կեալն է զգայութիւն ունել , ա-
պա և զգալն որ զինչ և իցէ՝ է կեալ :

նայն հանգամանս գոյութեան կենացս . և միան գամայն աներկմիտ եմք՝ թէ զոր զգամքս , զգամք հաւաստեալ : Ապա առաջին իր՝ զոր գիտեմք , է գոյութիւն մեր . և զայդ աներկբայ գիտեմք :

15 Այդ է աւագիկ առաջին իր ստոյգ , առաջին ամենայն ստուգութեանց , և առաջին քայլափոխ անգեղևունն 5 :

16 Արդ՝ ստոյգ գիտեմք զի զգամք , և գոյութիւն մեր հաստատի ՚ի զգալ : Ապա առաւել անընդմիջաբար հաւաստի է մեզ մերս գոյութիւն քան զայլոյ ամենայնի : Սկսցուք ուրեմն զսոյն ինքն զգոյութիւնս ՚ի քնին առնուլ ուրոյն յայլմէ ամենայնէ . տեսցուք զինչ գտանեմք ՚ի զգացողութեան անդ՝ յոր հաստի այն :

17 Խնդրի միայն զննել զզգացողութիւն մեր , զգործս նորա , այս ինքն՝ զայլ և այլ յեղանակս նորա՝ պատճառս պէսպէս հանգամանաց գոյութեանս , և զհետևանս այնց հանգամանաց գոյութեանս : Չպահանջեմք՝ յարուեստիս յայսմ խոյզ

3 Ոմանք կարգեսեայ ընծայեն զայս գիւտ : Բայց նա յերկբայելոցն առնէ սկիզբն ինդրոյս , թէ՛ որ Երկբային՝ խորհի ինչ . և որ խորհին՝ գոյ և կեայ : Եւ նախ քան զնա՝ սուրբն Աւգոստինոս ասացեալ է . Խորհիմ , ուրեմն գում : Իսկ զգալն՝ նախ քան զերկբայելն և զխորհելն է . զի որ երկբային և խորհի , հարկ է թէ նախ զգացեալ և իմացեալ է ինչ : Բայց և նորս այս կարծեցեալ՝ հին է յոյժ , զոր ՚ի վեշտասան դարուն ուսոյց իսաւրիան թովմաս կամպանէլ :

և խնդիր առնել՝ թէ որ այն էակ է որ զգայն , զինչ նորա բնութիւն , զինչ սկիզբն նորա և կատարած կամ անդրագոյն վիճակ : Այդոքիկ՝ խընդիրք իցեն բնազանցականք , աստուածաբանութեան անկ , բայց արտաքոյ են ուղղախոհութեան արուեստին , որ զծնունդս ևեթ գաղափարաց որոնէ յոր ինչ և յորսլիսի ինչ եմքս : Թող զի և յայտ իսկ է՝ թէ չսլիտի մեզ աստէն և աստ այդհարցափորձ . զի զգացողութիւնս , որսէս և այլ ամենայն ինչ , արդեամբքն ևեթ յերևան գայ մեզ , և ոչ յանձանօթ մեզ բնութենէ իմացական էակին , որոյ գոյութեանն չիք ինչ երկբայութիւն . ապա թէ ոչ՝ չմարթէր և ոչ մի ինչ զգայութիւն . զի նիւթ , որսէս ինչ գիտեմքս զայն , անզգայ է ՚ի բնէ իւրմէ :

18 Առ ՚ի բուն պատճառս զգացողութեանն հասանել , զնա ինքն պարտ է ճանաչել յառաջագոյն . և առ ՚ի զինքն ճանաչելոյ , զարդիւնսն արժան է քննել : Ապա եթէ այնուհետև մատչել կամիցիմք ՚ի խոյզ և ՚ի խնդիր պատճառաց զգացողութեանս , յաջողեացի ժամանել և յայնս այնու ճանապարհաւ՝ զոր քննութիւն զգացողութեանս լաւագոյն ցուցանիցէ : Այսն որոյ և այդ հետազօտութիւն՝ ուղղախոհութեան արուեստին արգասիք իցեն , և ոչ թէ մասն :

ԳԼՈՒԽ Գ .

Այլ և այլ յեղանակք զգացողութեան :

19 Ատոյգ գիտեմք՝ զի զգամք . և հաւաստի է , թէ առանց բնաւոր հանգամանացս՝ որ տայ մեզ կար զգածելոյ իւրիք , չմարթեմք իմանալ ինչ կամ գիտել : Բայց ոչ ինչ ընդհատ հաւաստի է մեզ , թէ է մեզ բազում ինչ զգածմունս կրել զանազանս : Տեսցուք թէ ՚ի բազմութեան անդ կարեմք նշմարել յեղանակս ինչ յստակագոյնս , զորս որոշել կարիցեմք ՚ի դասս դասս զանազանեալս , ընդ որովք լինի դասակարգել զամենայն իմացմունս մեր . որպէս զի սկսցուք կարգ ինչ գնել ՚ի նոսա , և լոյս ծագել զնոքոք :

20 Տեսանեմք՝ նախ , զի յաճախ այնպիսի իմն կրի ՚ի մեզ զգածումն , զոր կոչեմք հոմք : Չայս յեղանակ գոյութեանս ՚ի փորձոյ և ՚ի զգացմանէ ճանաչեմք ամենեքեան , և գիտեմք՝ զի անձուկ կամ փափաք է այն՝ վայելելոյ ՚ի հանգամանս ինչ գոյութեանս , կամ խորշելոյ յայնց : Չմարթի մեզ շփոթել զայն զգածումն ընդ այլում իմիք . վասն որոյ և է իսկ այդ աւագիկ որոշ և յստակ յեղանակ զգացողութեան մերոյ , զոր և կոչեմք հոմս , և զգործս նորա՝ ցանկութիւնս կամ Բարձրան և Իշխ :

21 Նկատեմք ապա , զի ոչ ՚ի մեզ և ոչ յայլ ոք չնչաւոր չկարեմք իմանալ իրձս ինչ՝ առանց յայտնի կամ լռելեայն կանխաժաման դատման , որ ըն-

տրեալ սահմանիցէ՝ թէ այն ինչ ըզձալի իմն է կամ խորշէլի : Սակայն , յորժամ որ ցանկալի դատի ինչ , չև ևս այնու անդէն և անդ ցանկանայ նըմա : Ա՛յլ զգածումն է դատելն , և այլ ցանկալն . և միւս ևս գործ զգացողութեան է և այն : Այս նոր գործ , նոր պաշտօն , կոչի դասուսն կամ ընթացութիւն . և որ այնմ զհետն գան իմացուածք՝ կոչին նոյնպէս դասուսն կամ ընթացութիւն . զի ոչ յամենայնի զոյգ և հանգէտ ընթանան լեզուք ընդ գործողութիւնս մտաց : Զի առ ոչ բարւոք խրտրելոյն , չեն և ոչ բարւոք բացատրեալ⁴ :

22 Այս գործ գաաման է տեսանել , թէ գաղափար իրիք պատկանի՞ արդեօք առ այլոյ իրիք գաղափար : Յորժամ գատեմք թէ այս նիշ պտուղ անոյշ է կամ թէ չէ անոյշ , տեսանեմք իմանամք զգամք թէ յամբողջ գաղափարի անդ զոր ունիմք զպտղոյն՝ պարունակեալ կայ գաղափար անուշութեան կամ չանուշութեան : Ասն որոյ , իմացուածն՝ գատումն կամ ընտրութիւն կոչեցեալ , որ ծագի՝ ՚ի գործոյ անտի՝ գատումն կամ ընտրութիւն կոչեցելոյ , միշտ է իմանալ թէ այս ինչ գաղափար պարունակէ զմիւս այլ ինչ :

23 Այս առաջնորդէ մեզ յայլ իմն դիտողու

4 Իմա ՚ի սովորական լեզուիս . ապա թէ ոչ , մարթ էր աստ կոչել զառաջինն՝ գատողութիւն , ընտրողութիւն , զերկրորդսն՝ գատմունս , ընտրութիւնս . բայց և սոքին անխտիր իբրև զառաջինսն վարին :

Թիւն . այն զի առ իմանալ թէ գաղափար մի սա-
րունակէ զմիւս , հարկ է նախ առնուլ զազգ եր-
կոցունց : Ապա գոյ այլ իմն գործ զգացողու-
թեանս , այն ինքն է զգալ , առնուլ սոսկ և թ
զազգ գաղափարի , զիմացուածոյ իրիք : Այս
գործ՝ ոչ գատել է և ոչ ցանկալ , այլ որիչ ինչ
յայնցանէ , և հարկաւ յառաջ է սա , թէ և վայր-
կենիւ չափ իցէ : Եւ զսա մարթ է յատկապէս
կոչել զգալ կամ իմանալ :

24 Բայց ազգումնն՝ զոր առնումք , գաղա-
փարն՝ զոր իմանամք , կամ անմիջական գործ է
պատճառի՝ անգ մերձ եղելոյ , կամ անդրէն դարձ
կանխազգաց ազգեցութեան , նախիմաց գաղա-
փարի : Այս հանգամանք քաջայայտ էն և յոյժ
նշանաւոր , որով որոշին կրկնատեսակ արգասիք
սոսկ զգալոյն՝ առանց տակաւին գատելոյ և ցան-
կալոյ : Յերկուց անախ եղանակաց զգալոյն՝ երկ-
րորդն , որ է անդրէն դարձ ազգեցութեանն ,
կարէ կոչիլ յիշու-թիւն , յիշել , և արդիւնք նորա՝
յիշարար :

25 Ուստի , թէպէտ և ամենայն արգասիք զգա-
ցողութեանս , ամենայն գործ խորհրդոցս , ամե-
նայն յեղանակ գոյութեանս՝ միշտ է զգալ ինչ ,
սակայն ՚ի գործն անգ զգալոյ՝ կարեմք որոշել
չորս պէսպէս փոփոխմունս բնաւին զանազանս ,
և էն , սոսկ զգալ , յիշել , Դարբել կամ ընթել , և կաթել :
Եւ զարդիւնս նոցա կոչեսցուք զգայութիւն , իմա-
ուղղորդ անմիջական զգածումն , յիշարար , Դարբումն
կամ ընթումն , և Բողջանք :

26 Այս զանազանութիւնք են մի մի նոր նոր արգիւնք իրաց , զորոց այնպէս աներկմիտ եմք որպէս զառաջնոյ ընդհանրականէն , որ է զգալն : Եւ աներկմիտ եմք նովին օրինակաւ , այս ինքն զի զգամք . որ և է մի միայն օրինակ աներկևան հաւաստութեան յամենայն բանաւոր գիտելիս բնականաց :

27 Բազումք 'ի քննըչաց մարդոյս՝ նկատեցին այլ ևս յոլով զանազանութիւնս զգացողութեան , զորս որոշել պարտ վարկան . որպիսի են մտածութիւն , բաղդատութիւն , երևակայութիւն , և այլն : Ոչ ժխտեմ թէ և դոքին այլ և այլ հանգամանք են զգացողութեանս , կամ գործք խորհրդոցս , զատուցեալք 'ի միմեանց ճշմարտիւ . բայց ոչ ծագեն մեզ յայնցանէ անընդմիջաբար նորասեւ զգածմունք , զորս իցէ անուանել մտածութիւնս , բաղդատութիւնս և երևակայութիւնս : Ի բաղդատելն երկուս գաղափարս , ոչ ինչ այլ առնեմք՝ բայց զգալ և դատել զնոսա : Զնոյն իմա և 'ի մտածելն : Յերևակայելն՝ ժողովեմք այլապէս զյառաջագոյն ստացեալ գաղափարսս . է զոր բաժանեմք , է զոր միաւորեմք , կազմեմք նոքօք նորանոր յօդաւորութիւնս . այլ զայդ ամենայն՝ 'ի ձեռն զգալոյ զնոսա և դատելոյ : Ասան որոյ , թէպէտ և այդոքիկ ևս մի մի այլ և այլ գործք իցեն մտաց , եթէ այդպէս ումեք հաճոյ թուիցի , բայց չեն սարղական և նախասկիզբն գործք . վասն զի առհասարակ լուծանին 'ի նախանշանակեալդ : Նոյնպէս գտանիցին և այլք ամենայն , եթէ ու

մեք կամք իցէն աշխատասիրաբար մանրախուզիւ
'ի քնին մտանել :

28 Ապա արրապէս ոչ այլ ինչ աւնեմք մեք բը-
նաւ , բայց ղիտլ կամ իմանաւ , ընդ որով է և յիշէն
(24) , Գաբէլ և Կաբէլ : Ջանասցուք այլ ևս 'ի խորս
մտանել :

Գ Լ Ո Ւ Խ Դ .

Իմացմուռք կամ գաղափարք :

29 Յառաջ վարեմք զքննութիւն գոյութեանս
մերոյ . զի այն միայն է որ դէպ ուզիլ անմիջաբար
հաւաստին իցէ մեզ :

30 Գոյութիւնս մեր յայն կախի՝ զի զգամք .
և դարձեալ նկատեմք զնա որիչ և անջատ յայլոց
ամենեցունց էիցս գոյութենէ . վասն զի զսոցա
գոյութիւն ըստ նմանէ և միջնորդաբար և եթ ճա-
նաչեմք : Յետոյ տեսցուք՝ որպէս գտանեմք զերկ-
րորդս զայս գոյութիւն՝ զայլոց էակաց , զինչ է ,
զինչ գիտեմք զնմանէ , և զինչ արժան իցէ խորհել
զայնմանէ : Բայց առ տեղեաւս՝ այնպէս խօսեա-
ցուք զմարմնոց , որպէս թէ ստոյգ գտակաւ կայ-
ցեն : Ասան զի հասարակաց կարծիք են թէ կան .
և տեսցուք ընդ հուպ , զի վաւեր և հաստատուն է
կարծիքդ :

31 Ամենայն իմացմուռք կամ գաղափարք՝ զորս
զգամք կամ իմանամք , և ըստ որոց ապա Գաբէլ և Կաբէ-
լամք , զանազանեալ են յոյժ 'ի միմեանց :

32 Ունիմք նախ զգոյութիւնս՝ առանձնակի

յայդ անուն կոչեցեալս , որ են լոկ ազգմունք տուեալք յէից՝ որ զգածեն զզգայականութիւն մեր , ընդ որս իմա և զմեր մարմինս . այսպիսի է , օրինակ իմն , իմացունն այրման կամ խայթման : Ունիմք գաղափարս զէիցն՝ որ ազդեն 'ի մեզ , գաղափարս յօդեալս 'ի գումարութենէ ամենայն զգածմանց՝ զոր արկանեն 'ի մեզ , զոր օրինակ գաղափար տանձի ծառոյ կամ քարի : Ունիմք նոյնպէս գաղափարս զյատկութեանց , զգործոց և զհանգամանաց նոյն էիցն . և այն ամենայն ևս ոչ այլ ինչ է՝ քան թէ ազգմունք 'ի նոցանէն եկեալք . և մտածեալք՝ ոչ 'ի մեզ , այլ յէսն անդ՝ յորոց գան . որպիսի է , օրինակի վասն , գաղափարն ջերմութեան կամ ծանրութեան :

33 Այս ամենայն գաղափարք 'ի մի ինչ իր սպառկանին նախ . յատուկ առանձնաւորք են 'ի միում իմիք որոշեալք և մասնաւորք : Ապա յետոյ առեալ մտօք ընդարձակեմք զնոսա յամենայն նման իրս՝ առանց հայելոյ 'ի զանազանութիւնս նոցին , և լինին ընդհանուրք՝ հասարակք և չանձնաւորք : Ըստ այսմ՝ գաղափարն աշխարհն ինքնուրոյն՝ ոչ ևս է այս ինչ այրման գաղափար , այլ առ հասարակ ամենայն այրմանց . գաղափարն ծառոյ չէ այս նիշ ծառոյն , այլ համօրէն բոլոր ծառոց . գաղափարն ջերմութեան ոչ է այսր կամ այնր մարմնոյ ջերմութեան , այլ համայնից ջերմ մարմնոց՝ մեկուսեալ անջատեալ մտօք , և անկցորդ յէից ինքնուրոյն տեսեալ ըստ հաւասար նմանութեան և եթ :

34 Ապա այնուհետև յընդհանուր և 'ի չանձնա

ւոր իմանալի գաղափարսն անդ կարգս որոշեմք ,
և կազմեմք գաղափարս տեսակաց , սեռից և դա-
սուց , ինչ ինչ յընդարձակաբար պարագրելոցն 'ի
նոսա մի ըստ միողէ 'ի բաց տանելով . այնպէս՝ զի
որչափ սակաւուց էից որոշեալ պատշաճիցին դա-
ղափարքն , այնչափ առաւել ունին զիւրաքանչիւր
նոցա առանձնակ սեփական հանգամանս . և ընդ
հակառակն՝ որչափ առ բազումս ընդարձակիցին ,
այնչափ նուազագոյն պարունակեն զմիոյ միոյ յա-
տուկ առանձնաւոր տարերսն : Այսպէս ահա յօ-
րինեմք տակաւ մի ըստ միողէ զգաղափարսն քան-
ձնի , Ժառ , Բոյս , Տարին , և հուսկ ուրեմն էակ , որ
ընդ հանրագոյն քան զամենայն գոլով , ոչ այլ ինչ
յատկուծիւն ունի , բայց զմի և եթ հասարակաց
ամենայն էից , որ այն ինքն է ել , գոլ , որպէս զի-
արդ ինչ և իցէ :

35 Այդ ամենայն ոչ ուրեք երբէք 'ի գիրս ինչ
հնոց գրեթէ յսասկ տեսեալ է . և սակայն փոքու-
իւիք մտադրուծեամբ մարթէր , եթէ քննող միտք
չէին կանխակալ կարծեօք պաշարեալ :

36 Զխորդ և է , բազում ազգի ազգի իմացմունք
են այդոքիկ , թուով և զանազանուծեամբ զարմա-
նալիք . սակայն , եթէ չիցեմք ըմբռնեալ յանբը-
ժըչկելի մոլուծիւն փոխանակելոյ զվարկագրու-
ծիւնս և զկարծողական գուշակուծիւնս ընդ
սաոյգ զննուծեան , 'ի բացատրել զօրինուած
գաղափարացդ այդոցիկ մի համարեցուք՝ թէ գե-
րաբուն իմն զօրուծեամբ սարգէին մեզ դոքա առ
հասարակ անընդմիջաբար և յամենայն ժամու ,

կամ թէ կային ամենեքեան յերբեմն ժամանակի՝ զոր չգիտեմք նշանակել, 'ի մասին ուրեք հոգւոցս՝ զոր չկարեմք յայտ առնել, որոյ և մուսացեալ զբընաւան՝ յուշ ածէ ասլա ըստ դիպաց գիպաց զարթուցանելոյ զայնս և 'ի միտ արկանելոյ, կամ թէ Գոհութիւն Աստուծոյ, զի յաւուր յայսմիկ չէ ինչ պիտոյ յամել մեզ 'ի ցնորսգ յայդոսիկ, որովք լի էին երբեմն խելասպատակք զբազում այնքան ժամանակս :

37 Եթէ զմեզ ինքեանս մանր նկատիցեմք, դիւրին իցէ մեզ տեսանել, զի այդ ամենայն գաղափարք հեշտեաւ ձևանան 'ի մեզ լոկով գործողութեամբ զգալոյ և դատելոյ : Զի յօգուածք են և կրկին յօգուածք սակաւաթիւ իմն տարերց նախնականաց, պարզ զգայութեանցս ասեմ. որք թէ և կարի իմն փոքու զանազանեալք, սակայն անթիւ անհամար յօգուորութիւնս ընծայեն. գրեթէ որպէս երեսուն կամ քառասուն տառք բաւեն կազմել զամենայն մարթելի բառս առհասարակ խօսեալ և խօսելի լեզուաց : Կնիք ապացուցին այն է, զի յանթիւ բազմութեան անդ գաղափարաց՝ անհնար է ամենեւին գտանել մի՝ որոյ հեռի կամ մերձ ծագումն չիցէ 'ի զգայութեանց անտի⁵ : Եւ զի 'ի հակառա-

5 « Զգործնական կանոնս ոչ 'ի նախակարգ տրամարանութեանց հանելի է, թէ և հաւանականք ինչ իցեն, այլ 'ի բանաւոր փորձոյ : Դատումն յիշողութիւն իմն է, որ ժողովէ և կարգա-

կէն՝ անկար է մեղ մարթեւ Հնարեւ մի և եթ նոր
զգայութիւն կամ զգայարան բնաւին օտար յորոց
ունիմքս : Ամենայն ինչ ՚ի բնութեան՝ ՚ի մերոց
զգայութեանց , և առանց նոցա և ոչ ինչ . այդ ա-
ւագիկ է մարդս . և անյեղլի օրէնք յօրինելոյ մեզ

ւորէ զազգամունս զգայութեանց . զի մինչ չև խո-
հականութեան երևեալ . յօրինիչք նորա անցեալ
էն ընդ զգայութիւնսն՝ որոց է զնիւթան ՚ի միտան
հասուցանել , . Հիդուրս :

“ Չիք ինչ ՚ի միտս՝ որ չիցէ ընդ զգայարանսն
անցեալ , . Արիստոսի :

“ Ի զգայութեանց ծնանի հմտութիւնն , . Գա-
նիւն անյաղի :

“ Գազախարք ոգւոց և մարմնոց առ հասարակ
յայնս յանգին , զորս զգայութեամբ և մտածու-
թեամբ ստանամք , . Լոս :

“ Առանց օգնականութեան զգայարանաց չժա-
մանէր մարդս և ոչ ՚ի ճանաչել զգոյութիւն ան-
նիւթական էից , . Պուլէ :

“ Աներևոյթք նորա (Աստուծոյ) արարածովքս
իմացեալ տեսանին , . Հոսիւն . ւ :

“ Ի կուրանալ աչաց , զհեա գայցէ անգիտու-
թիւն ամենայնին . սորօք զԱստուած ճանաչեցոք
և ճանաչեմք , զի աներևոյթք նորա խիղբանէ աչ-
խարհի արարածովքս իմացեալ տեսանին , ասէ ե-
րանելի Առաքեալն : Ապա ուրեմն՝ ոչ եթէ միայն
մարմնոյն է ճրագ աչքն , այլ և հոգւոյն է յա-
ռաջ քան թէ մարմնոյն , . Ոսիւն : Եթէ տեսանե-
լեաց և եթ անգործութիւն՝ անգիտութիւն ասէ
ամենայնի , զինչ ապա ոչ լինիցի առ չգիւտ բոլոր
ազգեւէացս :

այնուհետև զայնս՝ է յիշել ըստ զգալոյ, և կամել ըստ Դասիւնոյ կամ ընտրելոյ :

38 Յայդ վայր հասեալ իրացդ, յուսամ թէ բարւոք յստակեցան գործք զգացողութեան մերոյ, և ներքին գոյութիւն մեր ծանուցաւ բարւոք, և ծանուցաւ նովին ստուգութեամբ՝ ի հանգամանսն՝ որովք ՚ի բողորումն :

39 Սակայն զինչ է որ զայս գոյութիւն կցորդեալ խառնէ ընդ գոյութեան այլոց մասանց բնութեան : Արդեօք ցնորք ինչ իցեն դոքա առ աչք, եթէ իրաց հաստատութիւնք : Այժմ ժամ թուի բացատրելոյ զայդ :

40 Յորժամ զմեզ ինքեանս յստակ տեսանիցեմք, իմա զմեր հնարս հմտութեան, կարեմք յստակ նշմարել և զոր ինչ հնարքն այն մարթեն մեզ ուսուցանել : Չիք ինչ այլ ճանապարհ յայն ժաման լինելոյ : Չայս միշտ է մեզ ընդ ուշի կապելի :

ԳԼՈՒԽ Ե .

Գոյոչրիւն եից արտաքոյ անձանց մերոց :

41 Այնու կեթ զի զգամքս, աներկմիտ եմք զգոյութենէ մերմէ, զգոյութենէ զգայուն անձին մերոյ : Եւ քանզի այս գոյութիւն մեր՝ է զգալ կեթ, այլոց էիցն արտաքոյ մեր, թէ գուցեն, ոչ այլ ինչ մարթէ առ մեզ լինել գոյութիւն, բայց զգալի լինելն նոցա, կամ որպէս ասի սովորաբար՝

ազգեւէն 'ի մեզ : Յայտմ' չիք ինչ յերկուանք : Սա-
կայն այս երկրորդ գոյութիւն , ղէիցն ասեմ , ճըչ-
մարիտ ինչ իցէ արդեօք , թէ առ աջօք սատար ե-
րևոյթ : Այս է որ խնդրի առ տեղեաւս : Ոմանք
յիմաստասիրաց փոխանակ այսր 'ի խոյզ անկանե-
լոյ , ցնորեցան զհետ էութեանց և գոյացու-
թեանց ⁶ . և ձեռն յանձինս հարին սահմանել
զբուն ներքին իսկութիւն իրին , զոր չէր ըստ ար-
ժանի 'ի քնին առեալ :

42 Եթէ զգացողութեան մերոյ չգոյր ինչ այլ
յատկութիւն , բայց միայն իմացմունս՝ զգացմունս
ծնանել 'ի մեզ , բաց յիմացմանց անտի այլ ինչ
ոչ ճանաչէաք . ոչ գիտէաք անշուշտ և ոչ 'ի կար-
ծիս անգամ՝ լինէաք երբէք՝ թէ ուստ ուստեք գան
մեզ այնոքիկ , և զինչ է որ գործէ 'ի մեզ զայնս :
Վարող լինէաք ապաքէն զգալ զայնս և յիշել ,
գատել և կամիլ ըստ այնմ , յորինել զայնս , և
կազմել բիւր յօդուածս , բայց չկարէաք ընծայել
իմիք արտաքոյ մեր , և ոչ այնպիսի ինչ զմտաւ ա-
ծել : Զգոյութիւն մեր և եթ ճանաչէաք՝ որպէս
ինչ ծանուցաքս , և ոչ այլ ինչ . առնել առնէաք
զամենայն զցուցեալսդ յառաջին գլուխսդ , և ոչ

6 Գոյացութիւն իմանային զանզննելի ենթա-
կայն՝ յորում կանն և երևին զգալի հանգամանք
էից : “ Հնգիկ ոմն իմաստասէր ասաց երբեմն .
Երկիր կայ 'ի վերայ փղի , փիղն 'ի վերայ կրայի ,
կրայն 'ի վերայ չգիտեմ էր իրիք : Զայս չգիտեմ
զինչ՝ խնդրէին իմաստասէրքդ ” . Լ¹⁴ :

այլ ինչ : Ապա պարտ է մեզ գտանել 'ի զգացու-
ղութեան մերում զայլ իմն յատկութիւն՝ գեռ ևս
մեզ անծանօթ , որ իբրև թէ զմեզ 'ի մէնջ հա-
նեալ՝ 'ի կցորդութիւն տարցի այլոց մասանց արա-
րածոյն : Զայս տեսցուք աստանօր :

43 Ե՛կ համարիմ ես զիս էակ մի զգայական
միայն , անհատ և անբաժին մի միութիւն զգայ-
ուն , անարդ , անկերպարան , մեկնակ անկցորդ ի-
միք . միով բանիւ՝ էակ մի այնպիսի , զոր չմար-
թեմք բնաւ նկարել 'ի միտս , որոյ ոչ այլ ինչ
յատկութիւն գուցէ ամենեկին , բայց զգալ և զու-
գակցել զիմացմունսն : Յայտ է թէ ճանաչեմ
յայնժամ զիմացմունս իմ , և նոքօք՝ զգոյութիւն
իմ , բայց և ոչ ընդ միտ հարկանի ինձ՝ թէ այլուս
գայցեն այնոքիկ , և ոչ յիս ինքնին ծնանիցին ա-
ռանց արտաքին պատճառի : Քանզի չիք ինչ իմ
յայնժամ գործողութիւն 'ի մերայ ուրուք էակի ,
չմարթեմ կարծել թէ իցեն էակք՝ որ յիս ինչ
գործիցեն և 'ի միմեանս : Ունիմ միայն զգաղա-
փար կրելոյ , և ոչ զգործելոյ . զզգալոյ և եթ , և
ոչ զազգելոյ ինչ յայլս : Յայդմ պայմանի՝ եթէ
կամքս կատարեսցի , չիմանամ զպատճառն . իսկ ե-
թէ չաջողեսցի , չմարթեմ գուշակել զվասն էրն :

44 Բայց ոչ այդպիսի ինչ ոք է մարդ : Որ զինչ
և սկիզբն իցէ զգացողութեանս , սերտ միացեալ
է սա ընդ յօրինուած ինչ անգամոց , ընդ մարմնոյ ,
ընդ գործարանաց : Առաւել ջլային մասամբքն
յարդիւնս գայ , մանաւանդ ընդ միջուկ ուղղոյ՝
որ գերագոյն կազմարանն է խորհրդոց մտաց :

Յորչափ 'ի ջլային մասունսն և եթ գործէ զգացո-
ղութիւնն ինքնին, և անդէն ապա փոխարէն յետ
ընդդէմ գործէ, զգամք՝ իմանամք միայն, և ոչ
այլ ինչ աւելի: Սակայն է նորա և այլ իմն յա-
կութիւն, զի և փոխանակ անգրէն ընդդէմ գոր-
ծէ 'ի դնդերսն: Ամբն կծկէ զգնդերսն և շար-
ժէ խաղալեօքն զանդամսն, և զգացմամբ իւրիք իրա-
զեկ լինիմք այնմ: Ղառաջինն ապաքէն չգիտեմք,
թէ շարժումն իցէ որ լինին և զոր զգամքս. բայց
ապա ուրեմն խելամուտ լինիմք՝ թէ յաճախ կրի
'ի մեզ զգացումն այն երբ և կամիցիմք, և է ու-
րեք՝ զի թէ և իղձ լինիցիմք, ոչ կրի:

45 Իսկ և իսկ ապա բազում փորձք ուսուցա-
նեն մեզ, թէ այդմ զգացման լինի արդիւնանալ
եթէ գիմակացութիւն իրիք ՆԻ-Բ կոչեցելոյ՝ աւ-
ղի աայցէ կամացս, և շարդիւնանալն յառաջ գայ՝
յորժամ նոյն գիմակացութիւն՝ անպարտելի գը-
տանիցի: Եւ հաւաստի գիտեմք, զի որ ընդդէմ
ինչ կայ կամացս՝ այլ է քան զզգայուն զօրութիւն
մեր որ կամի. ուստի և կայ այլ ինչ քան զզգայուն
զօրութիւնն՝ որ զմեր անձն կացուցանէ: Այդ ա-
ւագիկ է յայտնապէս ըստ մեզ հիմն գոյութեան
այնր ամենայնի՝ զոր ճարֆն յորջորջեմք, և այդ ա-
ռաջին շաւիղ գիւտի նոցին 7:

7 Բայ 'ի գիմակացութենէ առ կամս մեր՝ իմս
և զհնչտալի կամ՝ ցաւաբեր ազգմունս իրաց իրաց,
որ և սոքին բաւական թուին սմանց առ իմանալ
մեզ՝ թէ օտար ինչ իրք արտաքոյ մեր կայցեն, և

46 Թէպէտ և այդ միայն էր փորձ հանդիսի, և ոչ ինչ այլ. Թէ և մարմինք չցուցանէին մեզ այլ ինչ յատկութիւն բաց 'ի գիմակացութենէ առ գործունեայ կամս մեր, սակայն և այնպէս գոյութիւն նոցա ոչ ինչ ընդհատ 'ի մերմէս հաւաստի լինէր առ մեզ և ճշմարիտ: Այն զի ըստ մեզ՝ կեալ է ունել իմացմունս. և գոլ առ մեզ՝ է ազգել մեզ իմացմունս. և մեզ չիք բնաւ ճանաչել ինչ՝ առանց կցորդ լինելոյ նորա ընդ մեզ և ընդ զգացողութեանս: Բայց 'ի մարմինսն անդ գտանեմք վաղ վաղակի այլ ևս բազում յատկութիւնս. իբրև զի են շարժուն, տարած, ձևաւոր, ծանր, ձայնական, գունեղ, այլովքն հանդերձ. և յոմանս՝ զի են շնչաւոր, զգայուն և կամեցող իբրև զմեզ: Զայս ամենայն յատկութիւնս տանիմք յարեմք յառաջին անգր՝ 'ի գիմակացութիւնն, և 'ի գումարութենէ նոցա կազմեմք զգաղափարսն՝ զոր ունիմք զէակացն այնոցիկ: Զի գաղափար էակի իրիք 'ի մեզ ոչ այլ ինչ է, բայց բովանդակութիւն իմացմանցն՝ զորս ազգէ 'ի մեզ, հանգամանացն զորս ճանաչեմք 'ի նմա:

47 Ոչ մանր քննեցից, Թէ որով օրինակաւ հասանեմք մի ըստ միօջէ 'ի ծանօթութիւն այնր ամենայնի յատկութեանց մարմնոց, և ուսանիմք խորեղանդիմագարձ հլուն կամաց մերոց՝ յորում

'ի նոցանէ գայցեն մեզ հեշտութիւնքն կամ՝ ցաւք: Օրինակդ բաւական է 'ի բացատրութիւն իրացն, և գիպողագոյն:

և գործէ զգացողութիւնս, յայնցանէ՛ որ օտար և
ապստամբ են 'ի նմանէ : Անօգուտ է այդ յուշ
նպատակիս : Ոչ այլ ինչ էր 'ի ճառիս կարևոր ,
բայց միայն սահմանել՝ թէ զինչ նշանակէ Գոյու-
ցուցանել՝ թէ շրջակայ էիցս գոյութիւն ճշմարիտ
է ամենևին , և 'ի յայտ ածել թէ յինչ հաստա-
տեալ կայ : Ասան զի խաւար պատեալ զինդրովքդ՝
մթացուցեալ էր զմեկնութիւն օրինաց գնացից
մտացն : Կորին աղագաւ պարտ է մեզ յաւելու-
այլ ևս բացառութիւնս ինչ զկազմութեանէ եր-
կուց կամ երից գաղափարաց , որ վասն ընդ ա-
ռաջինան կցորդակցութեան՝ չարաչար մեկնաբա-
նեալ են միշտ :

ԳԼՈՒԽ Զ .

Գաղափարք Ժառանակի , շարժման , տա-
րածոչրեան :

48 Տեսաւ յինչ յանգի անուանի ինդիրն , զոր
փոխանակ նկատելոյ՝ վարկածիւ և ցնորիւք գնալ
միշտ կամեցեալ ոմանց՝ այնչափ խառնակեցին :

49 Եթէ կամքս չգործէր ինչ բնաւ ուղղակի և
անընդմիջաբար՝ ի մարմին ինչ , ոչ երբէք՝ ի կարծիս
լինէաք գոյութեան մարմնոց : Բայց ընդ ելանէլն
'ի գործ՝ զգայ գիմակացութիւն ինչ , է որ յաղթե-
լի , և է որ անյաղթելի , ըստ գէսն սալոյ : Որ
ընդգիմանայ նմա՝ այլ ինչ է քան զինքն . և որ

ընդդիմանայն, ասպաքէն էակ հաստատուն է. զի
ընդդիմանալ՝ է դիմակաց լինել, է գոլ, է կալ:

Յ0 Այս էակ, մանաւանդ թէ այսոքիկ էակք
դիմակացք՝ բիւր փորձով ճանաչին ասլա ունակք
բազում յատկութեանց, որ է զի երևին, և է զի
աներևոյթ լինին, ըստ որում զի դիւաւոր յատկու-
թիւնն դիմակալութեան կայ մնայ, փոփոխի կամ
չիք լինի:

Յ1 Մինչ չև զայս նախնական գործ բնութեան
յայդ պարզութիւն անհնար էր զմանց
'ի գաղափարացս զճնունդն և զբուն զօրութիւնն
'ի միտ առնուլ. որսլիսի են գաղափարք ժամանա-
կի, շարժման, տարածութեան: Լաւ իցէ մեզ
փոքր մի յամել 'ի դոսա. վասն զի այնչափ հասա-
րակ համատարած են, զի ցորժամ՝ աղօտ և տար-
տամ՝ մնայցեն՝ զամենայն մասունս հմտութեանցս
խանդարել գիտեն:

Յ2 Էակ զգայուն, որոյ զիւր ևեթ գոյութիւն
ծանուցեալ՝ անհնարաւոր իցէ 'ի ճանաչել այլ
ինչ էակս արտաքոյ իւր, կարէ ունել զգաղափար
տևողութեան. առ այդ շատ իցէ նմա յիշողութիւն
ունել, ունել զերկք յիշողի, և 'ի վերայ հասանել՝
թէ յիշատակ է: Դատէ՝ թէ տևեաց անգատին
յառաջին անգամու զայն զգալոյն, և թէ յինքեան
տևեաց ազգումն զգայութեանն: Բայց էակդ այդ
չմարթէ ունել զգաղափար ժամանակի, որ է տևո-
ղութիւն չափեալ. կամ գէթ չմարթէ ունել
զյստակ գաղափար ժամանակի ճշգիւ սահմանե-
լոյ: Զի առ անցաւոր և փախստական լինելոյ ի-

մայմանցս, յաջորդութիւն նոցա 'ի միտն չսայ
ինչ գամն բաժանելոյ զնոցա և զմեր տւեղութիւնն
յորոշ մասունս՝ միօրինակ և ճշգիւ զատուցեալս :

Տ3 Սմին իրի տեսանեմք՝ զի միշտ շարժմամբ
չափեմք զտւեղութիւն . ժամանակն՝ միշտ շարժ-
մամբ իւրք եղելով երևի : Օրն և տարին կրկին
շարժմամբք երկրի⁸, և մանր բաժանմունք նոցա՝
շարժմամբք ժամացուցի : Բայց էակն զոր ասա-
ցաք՝ չկարէ ունել զգաղափար շարժման . գործա-
րանք պիտին առ ստանալ զայն, որպէս և զտա-
րածութեանն :

Տ4 Նա և գործարանօք հանդերձ՝ յորս անընդ-
միջաբար ազգէ կամքս, անդէն ընդ առնելն շար-
ժումն ինչ՝ չլինիմք խելամուտ թէ զինչ իցէ շար-
ժումն : Ի շարժել անգամնցս առնումք զգացումն
ինչ, բայց չառնումք 'ի միտ՝ թէ շարժումն նոցա
է խաղալ անցանել 'ի կիտէ 'ի կէս վայրաց, ընթա-
նալ ընդ մասն ինչ տարածութեան, բայց եթէ
ուսանելով թէ քաղաք-Բիւն ասացեալ յառ-
կութիւնն էից այն է, զի մարթի ընթանալ ընդ
նոսա շարժմամբ . վասն զի շարժիլ պարտ է առ
'ի գնալ 'ի միոյ մասնէ նոցին յայլ մասն : Յորժամ
ածեմք զձեռն մեր ընդ երեսս մարմնոյ իրիք, ու-
նելով ցանգ զզգացումն շարժման բազկիս և ըզ-

8 Զորս գործէ՝ զառաջինն զտուանցիւքն առա-
ծեալ, և զերկրորդն՝ տարևոր շրջանաւն ընդ պա-
րունակ իւր զարեգակամբ, հանգոյն այլոց մոլո-
րակաց :

գիմակացու թեան մարմնոյն, գտանեմք անդէն՝
թէ մարմինն այն՝ տարածութիւն է, և թէ շար-
ժումն մեր՝ է ընթանալ ընդ այն: Կրկին այս գա-
ղափարք հարկաւ 'ի բնէ ամենևին յարակիցք են
ընդ միմեանս, և միումն առանց միւսոյն չմարթի-
կալ⁹:

55 Աստի երկու ինչ 'ի յայս գայ. մի՝ զի զեր-
կոսին գաղափարսդ 'ի միասին ստանամք. երկրորդ՝
զի ամենայն եղեալ շարժումն ճշդիւ չափի միշտ
քանակաւ տարածութեանն ընթացելոյ. վասն զի
մի և նոյն իր է՝ կրկնակի նկատեալ. 'ի մարմինն
ընթացող և 'ի մարմինն ընթացեալ. յայն որ գոր-
ծէ, և յայն յորում գործի¹⁰:

9 Էակ ինչ զգայուն՝ որոյ չիցէ կարողութիւն
շարժումն ինչ առնելոյ, չիք վասն նորա տարա-
ծութիւն. զի ոչ գոյ նմա ընդ այն ընթանալ. և
էակ ինչ անտարած՝ անկարող գտանի 'ի շարժումն.
զի հարկ է գրաւել զտեղի ինչ, առ 'ի փոխիլ 'ի
միոյ յայլ:

10 Վասն այսորիկ մարթի ասել, թէ գատար-
կութիւնն և ոչինչն տարած է: Ոչինչն չէ ինչ,
բայց մարմինք կարեն շարժիլ 'ի նմա՝ եթէ չիցէ
ինչ արգել. և այնու ընթանան ընդ տարածու-
թիւն, որոյ չիք գոյութիւն՝ բայց միայն առ նոսա:
Պարզ երկրաչափութիւնն սպարապի յայս չանձնա-
ւոր տարածութիւն ամենայն էից, յորում մար-
թի ումք ձգել գիծս շարժմամբն. վասն որոյ և
յամենայն տեսութիւնսն անարգել ընթանայ յե-
րեսաց առանձնաւորութեան որոյ և է մասնա-
ւոր էակի:

56 Արդ՝ յամենայն յատկութեանց մարմնոց՝ տարածութիւնն միայն ունի առաւելութիւն ինչ անգին . այն զի կարի յոյժ բաժանելի է և անյլայլակ : Կարեմք ճշգրտ և կայուն բաժնիւք յորոշ մասունս զայն հատանել, որ հանասլազ պայծառ և անփոփոխ առաջի աչաց կայցեն : Այսու դերքան զամենայն ընդ չափով անկանի . զի մարթի միշտ համեմատել զնա ընդ միոյ մասին իւրում՝ առեւելոյ փոխանակ միութեան . և ահա այդ իսկ է շփէլ : Իսկ զայդ չմարթի առնել ընդ գոյն, ընդ ջերմութիւն, ընդ կարծրութիւն, և ընդ այլս, որպէս և ոչ ընդ տեղութիւն :

57 Սակայն, քանզի զսահեալ անցեալ տեղութիւնն՝ ի դէմս ածեմք շարժմամբ իւրիք եղելով, և շարժումնն այն հարկաւ ընթացեալ տարածութեամբն յանդիմանի, ապա երկոքին ևս հաղորդ գտանին սքանչելի բաժանմանց տարածութեան : Բայց առ ՚ի ճշգիւ չափել զերկոսեան՝ պակասէ տակաւին սլայման մի : Ասան զի ընդ մի և նոյն ընթացեալ տարածութիւնն՝ որքանութիւն շարժմանն կարէ մեծ և սաստիկ լինել, և տեղութեանն՝ փոքր և սուղ . կամ՝ ընդ հակառակս իրերաց, այս է՝ որքանութիւն շարժմանն փոքր և յամր, և տեղութեանն՝ մեծ և երկար :

58 Ի դարման այսր անյարմարութեան՝ շատ է զամենայն տեղութիւն համեմատել ընդ միօրինակ և անփոփոխ շարժման միում, որ միշտ նոյն իցէ . և զմի ՚ի շրջանաց նորա առնուլ ՚ի միութիւն տեղութեան, օրինակ իմն զօր . և այդ իսկ է զոր

առնեմքն : Յայնժամ ամենայն տևողութիւն լինի չափելի . նովին պատճառաւ՝ ընդ չափով անկանի և ամենայն շարժումն . զի յորժամ 'ի ձեռին ունիցիմք զտարածութիւնն զոր ընթանայ և զտևողութիւնն զոր տևէ , ունիմք զհամեմատութիւն նորա ընդ օրական շարժման :

59 Այսպէս ահա տևողութիւնն և շարժումն չափին ամենայն ճշգրութեամբ 'ի ձեռն տարածութեան . նոյնպէս , յաւէտ կամ նուազ կշիռ գտակաւ , այլ ամենայն յատկութիւնք էից , ըստ իւրաքանչիւր արգասեացն հնարաւոր պայմանի ընդ տարածութեան չափովք անկանելոյ :

60 Յետին այդ հանգամանք յայտ առնեն մեզ զպատճառսն , ոյր աղագաւ զանազան գիտութեանց այլ և այլ չափք ստուգութեան են , կամ թէ գէթ այլ և այլ չափք դիւրութեան 'ի ստուգութիւն : Զի ստուգութեան մարթի միշտ ունել տեղի . բայց որչափ ճշգրութիւն չափոցն գրծուարին իցէ և ապստամբ , այնչափ դիւրին է խաբել 'ի զօրութիւնս և 'ի մանր մանր զանազանակա քննելի իմացմանցն :

61 Յեղանակէ անտի՛ որով ճանաչեմք զտարածութիւն , յայտնի է ևս՝ զի չզգամք անընդմիջաբար զկերպարանս և զձևս մարմնոց՝ որոց տարածութեանն հանգամանք են այնոքիկ , և ոչ զհեռաւորութիւն նոցա և զգիրս՝ որ պատահքն են նորին , որպէս զգամքս զգոյն նոցա , զհամ կամ զհոտ . այլ զի գտանեմք զնոսա տակաւ հետ զհետէ փորձովք , կամ զի գատեմք զնոցանէ 'ի ձեռն համեմատութեանց :

62 Բայց չէ տեղւոյս 'ի քնին մտանել այդոցիկ :
Իմ կամք են աստանօր զսկզբունս Ուղղախոհու-
թեան աւանդել, և ոչ զայլոց ևս առ հասարակ
գիտութեանց : Արդ մեզ շատ իցէ, թէ զհիմունսն
արկաք : Թերևս արդէն իսկ թուիցին սոքա լուսա-
ւոր առնել զբազում գաղափարս, որ երբեմն
յոյժ տաքնապեցին զբնագէտս, զչափաբերս և
զբնազանցախօսս, որոց չէր մտեալ 'ի քննութիւն
գաղափարաց :

63 Յետ ցուցանելոյ զբուն գոյութիւն մեր՝,
զպէսպէս յեղանակս զգացողութեանս, զծնունդս
խմացմանցս՝ որ 'ինմանէ, զկցորդութիւն նորա ընդ
գոյութեան այլոց էից, և զգլխաւոր հետևու-
թիւնս այնր կցորդութեան, համառօտասել՝ զհա-
սարակ ընթացս մտաց մերոց, թուի թէ չմնայ
ինչ մեզ այլ՝ բայց հանել անտի վճիռս յուղիղ ա-
ռաջնորդութիւն մտացս : Սակայն կայ և այլ ինչ
կարևոր նախաշաւիղ՝ յոր արժան է մեզ ուարա-
պել յառաջագոյն : Պարտ է ճառել զգգալի նը-
շանակաց գաղափարացս. զինոքօք յերկրեմք զա-
ռաջին գաղափարս մեր¹¹ : Յորոց ունիմքս՝ բազումք
կամ բնաւ և կազմէին իսկ ոչ առանց նոցա, կամ

11 “Արուեստն բանական (որ այն ինքն է ուղ-
ղախոհութիւն) է գիտութիւն նշանակաց գաղա-
փարացս” Լ⁺ : Յոր յաւելու Անտոն Ճէնովէ-
զի. “Եւ է արուեստ ընդելուզանելոյ զնշանսն
ընդ գաղափարս 'ի պէտս գիտութեանց, և զգլխ-
տութիւնսն՝ 'ի պէտս կենաց” :

էտ ընդ էտ անհետ լինէին. և հանապազ 'ի ներ-
քոյ նշանակաց երևին մեզ, և նոքօք յօրինեմք նոր
յօգաւորութիւնս: Ասան որոյ յուղիզ քննու-
թիւն սոցա՝ սկիտոյ է նախ բացաարել զծնունդ,
զքնութիւն և զգործս նշանակացն: Յետ վճարե-
լոյ խնդրոյդ՝ լաւ ևս ծանիցի հարկաւորութիւն
դորա, որոյ աղադաւ յայդ իսկ մխմօք աւատիկ:

ԳԼՈՒԽ Է.

Նշանակք գաղափարաց. յեզոչ բնական և
հարկաւոր:

64 Այնպիսի էմք մեք անգստին 'ի բնէ ստեղ-
ծուածոյս, թերևս և այլ զգայունք, զի 'ի ստա-
նան զգաղափար ինչ, եթէ ոչ փութով կապի-
ցեմք զնա ընդ զգալն նշանի, փախչի 'ի մենջ վաղ-
վաղակի. և չկարեմք՝ ոչ յիշել զայն ըստ կամս,
ոչ պահել 'ի մտի՝ առ 'ի մանր կրկաւել զայն, լու-
ծանել և առնել զնմանէ խորախորհուրդ քննու-
թիւնս: Ասան որոյ զգալն նշանակքն՝ ընդ որս ա-
մենայն գաղափարք մեր կապեալ են, յոյժ կարե-
ւոր են մեզ 'ի յօրինել յօգաւորել զնոսա, 'ի կազ-
մել նոքօք խումբս խումբս՝ որ մի մի նորնոր գաղա-
փարք իցեն, և առ 'ի զնորսն զայն գաղափարս մեզ
յանդիման կացուցանել: Ասան որոյ բազում ինչ
զօրութիւն է նոցա 'ի վերայ գործոց մտացս. և
դմին այդր իրի աղադաւ պարտ է մեզ աստանօր

զնոքօք դալ ալ ոչ էթէ և 'ի դոյն աղագս ստեղծեալք ինչ իցեն 'ի բնէ :

65 Էակ կենդանի շնչաւոր՝ ընդ իմանալն թէ կան այլ ևս իբրև զինքն զգայուն և կամեցող էակք, ապաքէն զգայ զանձուկ և զկարօտ հազորդելոյ նոցա զիմաստս իւր և զզգածմունս, թէպէտ 'ի հեշտու թիւն և եթ աղապատանաց ընդ նոսա, և թէ առ յինքն յանկուցանել զկամս նոցա, կամ գոնէ արգելուլ զայն առ 'ի չմնասելոյ անձին իւրում: Այսպիսի էր մարդս յառաջնում՝ անդ վիճակի աստուածազոյգ ընտանութեան առն և կնոջ:

66 Բայց գաղափար ոչ այնպիսի ինչ է՝ զի գէս ուղիղ առանց իրիք միջնորդի 'ի միոյ յայլ էակ անցանել կարիցէ. ինքնին ներքին ինչ է ամենևին և անփոխանցելի: Ապա առ 'ի հազորդել զգայուն էակի զգաղափար իւր յայլ էակ զգայուն, պարտ է նմա ազգել ինչ 'ի զգայարանս նորա՝ որ զգաղափարն զայն նմա 'ի գէմս տծիցէ: Այգմ՝ գոյ հընար, էթէ միաբանիցեն երկոքեան 'ի մի կամս, զի այս ինչ ազգումն նշանակ իցէ այս նիշ գաղափարի: Բայց և առ այդ միաբանութիւն՝ պիտի նախ իմանալ զմիտս իրերաց, այս ինքն է հազորդել միմեանց գաղափարս: Ապա այդ գաշն՝ զլինելոցն իբրև զյառաջագոյն եղեալ պահանջելով, չմարթէ սկիզբն լինել լեզուի: Եւ գաղափարացս չգոյր ունել նշանս ինչ կամայականս և դրականս, էթէ չկային նոցա կանխաւ հարկաւորք և բնականք: Այլ ահա այգմ բարւոյ մասին բախտի հա

սեալ գտանին 'ի յատկութենէ անտի կամացս , որով անդրէն ընդդէմ ներգործէ 'ի գործարանս մեր , և զշարժմունս մեր ուղղէ :

67 Այնու ևեթ զի գործքս արգասիք են եղև լոցն 'ի խորհուրդս , նովին և նշանակք են նոցին : Իբրև կամի ոք առ ինքն մերձեցուցանել ինչ կամ հեռացուցանել , կարկառէ զբաղուկսն առ 'ի ձրգել զայն կամ մերժել . ուստի այն շարժմունք յայտ առնեն՝ թէ այրն այն ցանկայ իրին յոր ճրկտի , կամ թէ հերքէ զայն : Յորժամ նոյն այր ուրախութեամբ զգածեալ իցէ կամ ցաւով կամ երկիւղիւ , ձայնս արկանէ , և ձայնս պէսպէս ըստ երից կրիչն . ուրեմն այն ձայնք յայտ առնեն որով կարեօք զգածեալ իցէ : Ասան որոյ շարժմունքն այն և ձայնք՝ բնական և հարկաւոր նշանք են զգացմանցն յորոց ծնանին , և զայնս անշուշտ 'ի դէմս ածեն այլում ումք՝ որ զնոյնս զգայցէ , և փորձով գիտիցէ՝ թէ նոյնպիսի անցք և ընդ ինքն անցանեն , յորժամ նոյնպիսի կարեօք զգած իցի :

68 Այսու ևեթ հասանէ մտրդս՝ թէ են և այլ էակք զգայունք և խորհեցողք իբրև զինքն . զի սեսեալ թէ զնոյն գործեն՝ զոր ինչ ինքն 'ի մտածութիւնս ինչ և 'ի կիրս , 'ի վերայ բերէ՝ թէ համակարիք են : Այսպէս ընդ առնուլն 'ի միա՝ թէ են էակք զգայունք , անդէն առ ձեռն ունի զտարերս հաղորդակցութեան ընդ նոսա . և 'ի կամելն յայտնել զոր յինքն կրի՝ առանց իրիք դաչին կարէ առնել ինքնին զնոյն գործս , զոր առնէր 'ի ընուլ զկամսն կամ 'ի հպատակել կարեացն :

69 Այս ամենայն, որպէս զմարդկանէ, հաւաստի է և զայլոց կենդանեաց: Ի և նոցա ամենեցուն լէզու հասարակաց, մի քան զմի ընդարձակ՝ ըստ յարմարելոյ կազմուածոց նոցա՝ ի յայտնութիւն զգացմանցն, և մի քան զմիւս մանրապատում՝ ըստ չափոյ նմանութեան բնութեանց նոցին: Ամենեքեան իմանան զմիտս հոմոցեղիցն, իսկ զայլասեռիցն՝ չափ և եթ: Եւ առ հասարակ ընդանկենդանս գնեն զէս՝ որոց չիք ինչ հնար ի յայտ բերելոյ զգոյութիւն իւրեանց, կամ որոց բնութիւն օտար յոյժ է ի նոցանէ: Նա և այս ամենայն ի գործոց անտի նոցա գուշակաւոր և ծանօթական է մեզ:

70 Բայց քաջակազմքն իսկ ի կենդանիս ոչ թուին գրեթէ բնաւ լծորդել յայանի ինչ դաշն ընդ բնական և հարկաւոր լէզուին. ի վար միայն արկանեն զայն բնութեամբ, և ոչ կատարելագործեն: Իսկ մարդ՝ ի վերայ հիմանդ այգորիկ կառուցեալ է բազում ազգի ազգի կարգս այնպիսի բազմամանուած արուեստաւոր և լոկ կամայական նշանակաց, զի ոչ ևս դիւրին է զառաջին սկիզբն նոցա ի վեր բերել և զճննդակարգան: Սակայն պարտ է գամագիւտ այնմ լինել, եթէ կամ իցէ մի ըստ միովէ ճանաչել զգործս մտացն՝ յորոց ծագեալն են այն ամենայն նշանակաց կարգք, և զանգրէն բնդդէմ ազգեցութիւն նշանացն ի գործս անդր ըստ նմին համեմատի:

ԳԼՈՒԽ Ը.

Նշանակք գաղափարաց . շեղոչ արուեստական
և կամաւորական :

71 Քանզի գործք են բնական նշանք գաղափարաց , լեզուն բնական իրաւամբք Գործնական լեզու կոչեցաւ յիմաստասիրաց անտի , որ նախ հասու եղեն գոյութեան նորա և հետեանայն : Ձեւնայ այն 'ի շարժուածոց և 'ի ձայնից :

72 Լեզուն արուեստական ոչ ընդ վայր 'հարեալ թողու և ոչ զմի 'ի հնարից այսի : Քանզի մեք իսկ ինքնին՝ որ խօսիւք ամենակաաար լեզուաց վարիմք , գրեթէ հանապազ առնումք մեզ 'ի նրպաստ զշարժուածս՝ որ յաւելուն 'ի զօրութիւն բանիցս , և յողով ուրեք այլ իմն տիպս կերպարանաց զգեցուցանեն նոցա . և այլ բազում ուրեք փոխեն բողբոջին զմիտս խօսից . և է գարձեալ՝ զի բնաւ իսկ զտեղի նոցա ընուն , մանաւանդ ուր եռանդն կրից չներէ շատանալ յամրագնաց և խոհական բանիւ :

73 Սակայն լեզուն կամամտածական առաւելապէս 'ի ձայնական նշանակաց կազմեալ կայ . որ զի դիւրինք են , և անթիւ փոփոխմանց և մանր մանր նրբին երանգոց ընդունակք . և զի թերևս առաւել անընդմէջ բացատրութիւն են կրիցն զգածման : Վասն զի շարժումն է 'ի գործել , և ձայն 'ի խօսել :

74 Ամենայն խօսեալ լեզուք 'ի ձայնից յօդանան. այլ իբրև յայդ պայման հասանեն, նախ նական նշանք մեր այնչափ կերպարանափոխ գըտանին, մինչ զի հազիւ նշմարի՝ զիւրդ յայն են եկեալ: Բայց գուն գործեսցուք հասու լինել:

75 Ոչ սառագաբանութեան է մեզ աստանօր խնդիր, գտանել զծագումն բառից 'ի միմեանց և 'ի բուն նախնական վանկից ինչ և ձայնից: Այդ քննութիւն՝ յիրս իրս օգտակար է, բայց ծննդաբանութիւն սերնդեան ձայնից է այդ, և ոչ գաղափարաց: Մերս այժմու խնդիր այն է, թէ որպէս բնական ձայնքս լեզու լինիցին. այս ինքն որով գործողութեամբ մտաց փոխիցին ձայնք 'ի բան յօդաւոր 'ի բառից, որոց և ոչ մին իմաստ ինչ կատարեալ ունի ինքնին, և յուովք առանձինն չունին և ոչ մի ինչ նշանակութիւն: Ետ զեաէ բաղմակարգ փոխաձևութեանցն աողան՝ որով ձայնք 'ի լեզու դառնան, թերևս չիցէ ինչ դժուարագիւտ՝ որպէս թուի զառաջինն:

76 Սկիզբն յայժմու հանդամանացն արարեալ, տեսանեմք նախ՝ զի ամենայն խօսք մեր 'ի բանից հիւսի, և ամենայն բանք՝ որչափ և այլատարազք իցեն՝ կարեն փոխիլ առ հասարակ 'ի պարզ աստարարական բան: Զի յորժամ՝ ասեմք արա զայդ, կամ զի՛նչ է այդ, է ասել՝ կամի՛մ զի արասցես զայդ, կամ հարոյանե՛մ ի՛նչ այդ զի՛նչ է:

77 Արդ՝ զայդ 'ի սկզբանէ՝ միով միայնով ձայնիւ յայտ առնեմք, հանդերձ շարժուածով իւրիք՝ եթէ այնպէս հաճոյ իցէ: Ուրեմն, ձայնքս նա

խուստ յայտ ածեն ամբողջ բան յայտարարական , որպէս 'ի բարբառս մեր ձայնքն՝ յայնարկութիւն 'ի քերականաց ասացեալք , նա և այլք ևս՝ որոց չտան զայդ անուն , թէպէտ և արժան էր , զի նոյն գործ է և նոցա . օրինակ իմն այ՞ , ոչ , և այլն . զի այ՞ ասել է հաւանիմ , այդ այդպէս է . իսկ ոչ ուրա նամ , չէ այդ այդպէս¹² : Ապա առաջին օրինակ խօսից՝ ձայնարկութեանցն է , որ մէն մի յայտարարական բան 'ի մէջ բերեն :

78 Իսկ արդ զի՞նչ է յայտարարական բանն . — Է յայտաբերութիւն գատման : — Իսկ գատումն զի՞նչ : — Է իմանալ , թէ գաղափար ինչ՝ մասն կամ տարր է այլում , և ընծայելի նմին : Ապա կրկին գաղափարս սլարունակէ միշտ բանն . զէն թակայ՝ որում ընծայի ինչ , և զվերադիտ՝ որ ընծայի նմա , և 'ի սկզբանէ ձայնարկութիւն կամ ճիշն զերկոսին ևս յայտ առնէ :

79 Մարթի ևս ասել , թէ որովհետև ամենայն զգալ մեր և գիտել և ճանաչել՝ ըստ մեզ միայն է , գաղափարն՝ բուն ենթակայ բանին՝ հարկաւ հուսկ

12 Հեղինակն լեզու՝ փոխանակ զմակբայսն ընդ ձայնարկութիւնս գասելոյ , զսոսա ընդ մակբայսն կարգէր երբեմն . վասն որոյ և առ նախնիս մեր չիք բառ քերականական՝ ձայնարկութեան նշանակիչ : Բայց և 'ի կարգէ բանիցս քննութեան յայտ լնի , թէ արդարացեալ է ձայնարկութիւն ասելս . որպէս և արդի Յոյնք ἐπιφώνημα կոչեն , որ է վերաձայնութիւն , աղաղակ :

ուրեմն անձն մեր է. զի յասե՛լն ծառն է կանաւ,
արդեամբք ասեմք, է՞ գգամ՝ գիպե՛մ՝ փեւտե՛մ զի
ծառն է կանաւ: Այլ քանզի առաջին մասն բանիդ
հարկաւ իմանի միշտ յամենայն խօսս, նմին իրի
իսկ զանց առնի սովորաբար, և ամենայն դաղա-
փար ունի լինել ենթակայ բանի: Դարձցուք 'ի
կարգ ճառիցս:

80 Աստ ուրեմն ճիւղք կամ ձայնարկութիւնք
նախնականք՝ անդստին 'ի սկզբանէ զամբողջ բան
յայտ առնեն, նոքօք սկսանիմք յայտնել զմիտս:
Վաղ ընդ փոյթ կարեմք յաւելուլ յայնս զյեղա-
նակ ինչ, այս ինքն զայլ իմն ձայն, 'ի նշանակել
որոշակի զնկատեալ իրն, զոր յաճախ և շարժուա-
ծով իւրք ցուցանեմք: Այս ձայնք յաւելեալք
յառաջոյ կամ զկնի առաջնոյն՝ լինին անուանք
իրաց. սոքա են գոյականք մեր. և կարեն աստ
առ հասարակ լինել ենթակայ նորոց բանից:

81 Իսկ զի՛նչ լինիցի՝ յորժամ անուն ինչ զեն-
թակայ բանին յայտ առնիցէ: Աւասիկ յասել
կամ: Յորժամ ասեմ Վայ, այդ ձայն նշանակէ է՞
Վայե՛մ, կամ է՞ Վայ քամ. ամբողջ բան յայտ առ-
նէ: Իսկ յասե՛լն է՞ Վայ, է՞ զենթակայն ցուցանէ,
Վայ զվերագիրն միայն: Այդպէս ահա ձայնար-
կութիւնն բայ եղև. զի բայն միշտ զվերագիր բա-
նին յայտ առնէ:

82 Այդ է իսկութիւն բայի, որ այնչափ 'ի
տագնասպի կացոյց զքերականս, գժուարահաս
ինչ թուեցեալ. և սակայն ահա բնաւորաբար ծա-
դէ 'ի նախնական ձայնէն՝ յետ միանգամ իրաց

իրաց անուանս գնելոյ : Ի ձեռն անուանցն այնու-
ցիկ կարեմք անսահմանարար զանազան ենթա-
կայս արկանել ընդ մի և նոյն վերագրաւ, կարեմք
ևս լրացուցանել զնշանակութիւն նորա :

83 Գամ մի ցայս վայր հասեալ, դիւրին իցէ
մեզ այնուհետեւ հնարել նորանոր ձայնս կամ
միավանկս՝ ի յայտնել զամենայն կերպարանս գո-
լոյ . և ընդ հուսւ զձայն մի ևս՝ ի նշանակել միայն
Ե՛ւ առանց զորպէսն ինչ ստելոյ : Առաջինքն լի-
նին ածական Բայ, և վերջինն՝ Էական կամ Գայական
Բայ, որ միայն է տիրապէս բայ կամ վերագիր, և
այլք առ հասարակ ՚ի նմանէ առնուն զայդ զորու-
թիւն 13 :

84 Ստեղծանեմք նոյնպէս ձայնս կամ միա-
վանկս առ ՚ի ցուցանել զամենայն իր զգալի, որ-
չափ ինչ միանգամ շարժուածովքս ՚ի յայտ բե-
րիցեմք . և այս բառք լինին նոցա առանձինն սե-
փական անուանք : Աստ այնուհետեւ ընդհանրա-
ցուցեալ զնոսա, լինին անուանք դասուց, սեռից
և տեսակաց : Կարեմք տալ նոյնպէս այլ և այլ

13 Զի օրինակ իմն՝ Սիրեմ՝ է ստել Ես եմ
սիրող . իսկ Է՛մ ոչ լուծանի, կամ զնոյն նովին յայտ
առնէ, Ես եմ է կամ Էակ : Յէական բայն նախա-
գիւտ թուի սահմանական ներկայ եղանակն, յա-
ծականան՝ հրամայականն, բաց յորոց չեն մարդոյ
անկ . յորս սահմանական ներկայն զառաջին տե-
ղին ունի :

հանգամանաց իրաց անուանս՝ որք լինին մասնա-
ւորք, և ապա դառնան յընդհանուր ¹⁴ :

85 Զ յետին անուանագ զայգոսիկ կարեմք յե-
տոյ ածականաբար վարեւ՝ իբրև հանգամանս գոյ-
ականի կամ լրումն Եւ բային, ապա մուծանել
զնոսա 'ի ձև ածականի՝ առ 'ի ցոյց նորոյ այսր ըս-
պասու պաշտաման. որպէս և բայից զգեցուցա-
նեմք զանազան կերպարանս 'ի նշանակ եղանա-
կաց, ժամանակաց և դիմաց : Ուստի ասեմք նախ,
օրինակի աղաքաւ, այծեասն ԲեԲե-Բի-ն Էւ կամ
Էւ՝Վ Գեւ, և ապա՝ այծեասն ԲեԲե-Է կամ Էր Գեւդեցիկ :

86 Այսպէս յոմանց ածականաց անտի առ-
նեմք նախադրութիւնս 'ի կապ գոյականաց, թե-
րևս և շաղկապս 'ի զօդ ասից. և 'ի գոյականաց ինչ
առնեմք դերանուէնս և իսկ կամ յատուկ անուանս
անձանց : Եւ այսպէս ոտն առ ոտն գտանեմք տա-
կաւ զամենայն տարերս կամ մասունս բանի, որ-
պէս քերականքն կոչեն, և բանքն լինին ապա տա-
րերք կամ մասունք խօսից :

87 Այնուհետև ստեղծանեմք ևս զեղման ձևս
կամ ճարտասանականս, և զպէսպէս հնարագի-
տութեան մարթանս՝ զորս քերականութիւն և
ճարտասանութիւն հայթայթեալ մատուցանեն
յարագ և յաշխոյժ բացատրութիւն իմաստիցս. և
ստանամք լեզուս՝ թէ ոչ ամենայարգարս, գէթ

14 Յայտ՝ ազգէ բառից առաջինք յամենայն
բարբառս յոյժ հաւանաբար այնոքիկ են, որք 'ի
ձայնից և 'ի հնչմանց արարածոց առեալք են :

բազմադրուադեալս : Այս ամենայն ինքնին դիւրահաս է, և աւելորդ է մանրապատում առնել :

88 Ծանուցուք ևեթ, զի այդ ամենայն՝ ՚ի ձեռն մի ըստ միոջէ դասմանց վճարի, որովք ընարեմք զզանազան մասունս գաղափարին, այս է՝ զայլ և այլ մասնական գաղափարս յորոց յօդեալն է, և ՚ի ձեռն կարողութեանն՝ որով անջատեմք զազգի ազգի մասունսն՝ առ անջատ և ինքնուրոյն զնոսա նկատելոյ, կամ պէսպէս գունակ գունակ միաւորելոյ և կազմելոյ նոքօք նորանոր գաղափարս : Այս է որ մեկուսել մտօք կամ անջատանել ասի, որ և ծնողն է ընդհանուր գաղափարաց (33) : Եւ ինձ թուի թէ այս իմացական կարողութիւն մտօք մեկուսելոյ և սոսկ աննիւթաբար և իմանալապէս զիրն յինքեան նկատելոյ՝ որով ընդհանրանայ, պակասի յայլ կենդանիս 15, և այս իսկ է որ որոշէ զմեզ յայնցանէ, և տայ մարդոյս լեզու ընդարձակ և պարզախօս :

89 Որպէս տեսաք, այս լեզուն՝ կարևոր պիտոյ է մեզ, ոչ միայն ՚ի հաղորդել զգաղափարս մեր, այլ և ՚ի յօրինել և յօդաւորել : Զի գաղափարք մեր ընդհանուրք, որպիսի են ամենեքեան առ

15 Ի սոյն միտս է և ՚լոք՝ մեծ իմաստասէրն անգլիացի : Զնոյն ասէ գրեթէ և Պլատոն այլով բանիւ . “ Հոգւոյ, ասէ, յատուկ է իմանալ զընդհանուրն . զայն ասեմ, զոր ՚ի պէսպէս զգացմունս մարթի ըմբռնել ընդ միով իւրիք բանեղէն միութեամբ ”, ՚ի Փետրոս :

հասարակ՝ բայց միայն յորոց ի սկի անուամբքն նշա-
նակին, չունին ինչ իւրեանց նախատիպս ՚ի բնու-
թեան: Չիք նոցա ՚ի միտս մեր այլ ինչ յոր յե-
նուցուն՝ բաց ՚ի բառէն որ զնոսա յանգիմանէ,
վասն որոյ վաղանցուկ յոյժ են. և ընդ կերպա-
նայն պակասէին արդեօք իբրև զայնս՝ զորս հա-
նապազօր ստեղծանեմք առանց անուն ինչ սեփա-
կանելոյ նոցա: Գարձեալ, զի բառք ՚ի ձայնից
յօդեալք՝ տան նոցա զյատկութիւն զգայու-
թեանց, խոր իմն ազգումն առնելով ՚ի մեզ, ո-
րով դիւրի յիշատակ նոցին:

90 Արդ՝ նշանակացն օգուտք մեծամեծք են .
բայց տակաւին անկայուն են և դիւրանցուկ: Մը-
նայ մեզ պատշաճել զնոսա յանկորուստ պահ-
պանութիւն գաղափարաց՝ առ ՚ի մշտնջենաւո-
րել զնոսա և հանել ընդ ամենայն ուրեք: Կրկին
հնարք են առ այդ, զորս տեսցուք մի ըստ միոջէ:

91 Բառք ՚ի ձայնից կան. իւրաքանչիւր ձայն
՚ի բնէ յօդաւոր բարբառ է, և ունի նուրբ իմն
կամ թանձր հագագ՝ որ և այն յօդաւորութիւն
իմն է. ունի և հնչումն և եղանակ և ամանակ:
Չյօդաւոր բարբառն ՚ի դէմն ածեմք նշանա-
գրան՝ որ Բողախայն կոչի. զհնչումնն՝ այլով իւրիք
նշանագրաւ խայնաւոր անուանելով. զեղանակն՝
ուրախ յորջորջեալ նշանաւ. և զամանակն՝ այլով
իւրիք նշանաւ, որ ասի նշան քանակի:

92 Գոնեայ այսպէս միշտ արժան էր մեզ առ-
նել. և յայնժամ չերևէր ՚ի քրուածս մեր՝ ոչ կըր-
կին բաղաձայն կից, ոչ ձայնաւոր առանց նախտ-

դաս բաղաձայնի, ոչ բաղաձայն առանց յաջորդ-
ձայնաւորի, և ոչ վանկ մերկ և լոկ յոլորակին և ՚ի
քանակին նշանէ : Ա՛յլ որպէս զիարդ և է, այդ
հանդամանք են ձայնին զոր նկարեմք, և այդ իսկ
է որ Գրէնն ասի :

93 Ինձ հաւանելի թուի, թէ նախ յեղանա-
կաց սկսեալ իցեն մարդիկ գրեւ զի կանխադոյն
երգեալ է նոցա, և նախկին լեզուք նոցա քաջո-
լորակք են. և այդ է տիրապէս խազն : Ի խազն
յաւելեալ իցեն նշանագիր մի ՚ի յայանել զյօդա-
ւոր բարբառն, թողեալ զձայնաւորն իմանալ զօ-
րու թեամբ. և այդ գրու թիւն է հնոյ երրայակա-
նին և այլոց ոմանց արևելեան լեզուաց : Ա՛յլ ու-
րեք անշուշտ սկսեալ իցեն նշանագրաւ իւրք՝ որ
զամբողջ վանկ ցուցանիցէ, և ապա ջոկեալ. սա-
կայն նոյն մի ոճ է և այդ : Ա՛յս օրինակ կայուն և
մնայուն առնելոյ զյողգողդ նշանակս գաղափա-
րաց՝ սքանչելի է, և անայլայլակ սպահէ զգաղա-
փարսն. վասն զի, որպէս տեսաւ, ձայնիցն նշա-
նագրու թեամբ՝ նշանակք յերևան գան, և ոչ գա-
ղափարք ինքնին գլխովին :

94 Է մեզ և այլազգ յանդիման առնել զգա-
ղափարս մեր, այն որ յոյժ իմն անճահս սրբա-
գիր և խորհրդականն յորջորջեալ. որպէս հին
եգիպտականն, ճենացին և սինէացին¹⁶, որպիսի

16 Թուի թէ ճենք առ մեզ են Չին, զի նման
իսկ է ձայնդ. և սինէացիք ըստ իս են յապոնա.

և հանրագրութիւնք՝ որ ուրուակերպ ստուերա-
գիրք միայն են : Այս ազգ՝ նշանագիծք են՝ ցու-
ցակք միոյ միոյ բառից լեզուին , կամ գէթ արմա-
տականացն , առ անհնարութեան ամենայնին յե-
րեսաց խուռն համարոյ բազմութեանն : Որ ապա
այն նախաստեղծ նշանագիծք պէսպէս կերպա-
ձևին՝ ՚ի ցուցանել զածանցս բառիցն զանազան
խեցխեղեփօք . որով ՚ի նոր նշանագիծս փոխին
արդեամբք : Այդ ամենայն նշանագծաց հանդէս՝
յօրինի ըստ օրինաց շարադասութեան խօսեալ
լեզուին , յոյր վերայ ձևակերպի այդ լեզու նկա-
րէն :

95 Բայց , թող զի նշանագիծքդ ուրուապէս և
եթ ունին տալ զանթիւ անօր դարձուածս իմաս-
տից բառիցն ՚ի բարբառս լեզուաց , յայտ է ևս
թէ չէ այդ գրել . և այլ է բնաւին էութիւն գոր-
ծոյն : Զի անդ՝ ոչ ձայնք բառին են նշանագրեալ .
այլ գիծ ինչ գրչի եգեալ ՚ի տեղի բառին , նոր իմն
նշանակ տուեալ գաղափարին : Միով բանիւ՝ ըս-
տոյդ թարգմանութիւն է այդ , յեղեալ ՚ի լեզու՝
հարկաւ աղքատ , անյաջող , խառնափնդոր և ան-
պէտ , իբրև անպատկան ՚ի խօսս : Յընթեռնուէն
զայն՝ պիտի դարձեալ փոխել ՚ի լեզու խօսեալ . և
լինիցի այդ երկրորդ պատճառ սխալանաց :

ցիք կամ ճափնադիտ . զի Սին-Նու ոմն նախահայր
և հիմնադիր է սոցա , և ՚ի նմանէ յորջորջեալ
թուին սինէացիք :

96 Այդպիսի նշանակաց վնասք անսպասելի են և անթուեղի, և ըստ նկատելն՝ անբաւուր թիւն նոցա երևի. և վկայէ պատմութիւնն, զի որ նոքօքն վարին աղգք՝ չզարգանան բնաւ: Եթէ ուշիւ միտ գնիցեմք, կարծիս տայ ևս՝ դուզնաքեայ հմտութեանց նոցա յայլուստ կցկտուր մնացորդս լինելոյ առ նոսա. զոր և պահել անգամ՝ չգիտելով՝ աղօտացուցեալ են: Առ սոքօք՝ նկարակերպ լեզուքդ անյարմար ևս են առ ՚ի պէտս պատուական գիւտի տարագրութեան՝ յերեսաց անհուն բազմութեան նշանագծացն. որով ուսումնասէր ոք՝ զմեծ կէս աւուրց կենացն տաժանելով՝ ոչ ժամանէ մտաուել զնոսա անթերի:

97 Սակայն գիտելի է, զի քանակի գիտութիւնն՝ նմանօրինակ լեզուաւ վարեցեալ, որոյ նշանագիրք են գծածք և նիշք գրահաշուին, և քերականութիւն՝ համարողութեանն օրէնք, ոչ միայն առանց ինչ անպատեհութեան է, այլ և զարմանալի օգտութեամբք լի: Բայց այդմ՝ պատճառ՝ բնութիւն գաղափարացն է յորս գիտութիւնն այն պարապի. զի միշտ առ հասարակ համասեռ են՝ քանակի գաղափարք, ընդ միով տեսութեամբ քանակի և եթ նկատեալք, և այնպէս ճիշդ և ճշգրիտ՝ զի ոչ երբէք շփոթին, և ՚ի շնորհէ գրահաշուական ձևոց՝ ամենայն սաստիկ զեղէմանց համարձակութիւն տան, և փոխանակ անուանց իրացն՝ վարելոյ այլս իմն կարի հեռաւորս յայնցանէ յորս ակնարկենն:

98 Իցէ այդ որպէս և է, ունիմք մեք աւասիկ

մանրակրկիտ նշանս գաղափարաց և նշանս յարատևս, որոց օգուտն ակներև կայ: Փորձիւ իմանամք ամենեքեան, զի յորժամ զկոյտ մի գաղափարաց ընդ միով բառիւ ամփոփեմք, կոյտն այն միահամուռ՝ լինի մեզ մի և եթ գաղափար՝ որ դիւրաւ ենթակայ լինի այլոց գատմանց, և նովաւ հեշտեաւ կազմեմք այնուհետև գաղափարս նորս: Այնպէս հաւաստի է այդ, զի ոչ երբեք խորհիմք ինչ առանց բառից նպաստաւորութեան, գէթ ոմանց կարծիք այդ են. թէպէտ և իցեն՝ որ զանձինս բաւականս համարիցին՝ ի մտածել և խոհնտիր լինել մտաւորաբար և եթ, առանց ինչ բառից ՚ի նոյն նպաստ լինելոյ. բայց հաւանելի է թէ անձամբ զանձինս խաբեն: Գոնէ հաւաստի է, թէ բազմաց ոչ է այդ կարողութիւն, որ ոչ միայն ըզբառսն ՚ի պէտս առնուն խորհելոյ, այլ և յաճախ կրկնեն զայնս յինքեանս ցած ձայնիւ, երբեմն և բարձր, իբրև զուշ մտացն յառել կամիցին: Օգտէ յայնժամ գաղափարն բառիւն նշանակեալ բախելով զգայութիւն լսելեացն: Իսկ յորժամ ՚ի գիր ելանիցէ, առաւել ևս օգնէ՝ ընդ տեսանելեացն զգայարանս հարկանելով: Եւ որ կուրացեալքն իցեն՝ փորձ են այդմ զօրութեան և փնասու զրկանացն. և ամենայն որ կարող է նկատել, զի քան զլուեալն դիւրին է դատել զընթերցեալն:

99 Յաճախութիւն գրոյ, մանաւանդ սպառարութեան, մեծ զգուշութիւն է յերեսաց դիւրաշարժ փոթորկաց պերճաբանութեան, ևս առաւել ժողովրդական ճարտարխօսութեան: Թող

զի և նա ինքն է հզորագոյն 'ի հնարս հրահանգաց վարժից և հազորդակցութեան, և միայն յիշատակարան՝ յորձանագրել և յամրի պահել ըզգործս մեր և զխորհուրդս 'ի դարս դարուց:

100 Ապա ուրեմն կարևոր պիտոյ են մեզ նշանք գաղափարաց . և զայս ոչ շատ իցէ բիւր անգամ յեղյեղել: Բայց չէ հաւանելի, որպէս ասացին ոմանք, թէ բացէ 'ի բաց հարկաւորք իցեն աս սկսանել խորհիլ: Ձի թէ չէին մեր կանխաւ լեալ գաղափարք, և ոչ նշանաց 'ի խնդիր լինէաք ստեղծանելոյ: Եւ ոչ դարձեալ հաւանութեան ինչ է, թէ իբրև գամ մի հնարեսցին նշանքն՝ յառաջոյ իսկ գաղափարաց և կամ ասանց նոցին իսկ ընթանայցեն: Ձի իմ իմիք նշանք իցեն յայնժամ:

101 Սակայն չէ պարտ ժխտել, թէ չիցեն համբուն ասանց իրիք վնասու . ոչ միայն յորժամ անձահ իցէ արար նոցա, և չպահիցեն զհամեմատութիւն և զկցորդութիւն գաղափարաց, և անծանօթ կացուցանիցեն զածանցումն նոցին, որպէս 'ի լեզուս ինչ յաճախ պատահէ ¹⁷, որ և պատահա

17 Արարիսի է բազում ուրեք գաղղիականն լեզու . զի, օրինակ իմն, զհայր և զմայր՝ ասէ père, mère, քէ, մէ, և զհայրութիւն և զմայրութիւն, paternité, maternité, քաթէտնիլի, մաթէտնիլի . զտեղի՝ ասէ lieu, լիէօ, և զտեղական՝ local, լոպու . զօրէնս՝ loi, Լու, և զօրինական կամ զօրինաւոր՝ légal, légitime, լէկալ, լէթիտիմ . զգիշեր՝ nuit, նի-ի, և զգիշերային՝ nocturne, նօքթիւռն . զհաւատ՝ foi,

կան փնասն կեթ է, և զգուշանալն՝ թէպէտ և սահմանաւ չափ՝ հնարաւոր . այլ է նոցա միւս ևս փնաս կարևոր, յորմէ և ՚ի սպառ զգուշանալն անհնարին : Այն զի բազում անգամ առաջի արարեալ բազմաման և դիւրասաճ գաղափարս, զանկատար ինչ կեթ նշմար յիշատակի նոցա յուշարկանեն : Ինքեանք միշտ նոյն կան մնան, իսկ գաղափարացն՝ որոց սրտկերքն են՝ յաւելեալ կամ կորուսեալ բազում ինչ տարերք ՚ի խելս մեր, փոփոխեալ գտանին առանց ինչ մեր զգաստ լինելոյ : Սեք կամք խորհիմք ՚ի վերայ նոյն բառի, կարծելով խորհել զնոյն գաղափարէ, և չէ այնպէս :

102 Այսու հանդերձ, ուսեսալ իւրաքանչիւր ումեք զբառին նշանակութիւն յայլ և այլ դէպս և հանգամանս և այլ և այլ առթիւ, և միշտ սրտաշարար, անհնար իմն է գոգցես միում միում ըզ-

Քոս, և զհաւատարիմ՝ fidèle, ֆէպէլ. զմտն՝ doigt, փոս, և զմտնեղէն՝ digital, փթթիւսլ. ըզխաղաղութիւն՝ paix, փէ, և զխաղաղել՝ pacifier, փփթիէ. զքիթ՝ nez, նէ, և զքթական՝ nasal, նսլ. զջուր՝ eau, օ, և զջրային՝ aquatique, ափոս, Բիփ. զկիր՝ chaux, շօ, և զկրային՝ calcaire, փսլ. փոս. զանտառ՝ bois կամ forêt, պոս կամ ֆօտէ, և զանտառային՝ sauvage, սօլաթ. զգլուխ՝ tête կամ chef, ԲիԲ կամ շէֆ, և զգլխաւոր capital, capitaine, փթթիւսլ, փթթիւսլ. զլուել՝ se taire, սըԲէո, և զլուութիւն՝ silence, սիւսնս. և այլն :

նոյն ճիշտ և ճշգրիտ իմաստ կապել ընդ նմա :
Յայնապոյն երևի այդ մանաւանդ յանօսր և
յաղօտատեսիլ իրս :

103 Այլ որ ամենայն սխալմանց և վիճից սլաա-
ճառքն են ծանր ծանր վնասքդ՝ առաւել 'ի գա-
ղափարաց անտի ծնանին՝ քան թէ 'ի նշանաց նո-
ցին , և յանկատարութենէ մտաւոր կարողու-
թեանցս քան յառաջ : Այս զմեզ 'ի քնին ածէ
հեռութեան գաղափարացս :

ԳԼՈՒԽ Թ .

Հանկ հետևոյրևան գաղափարաց :

104 Եթէ 'ի նախակարգ գլուխսդ խելամու-
արարաք՝ զինչ գոյութիւն մեր իցէ , ոյք հաւաս-
տեաւ գլխաւոր գործողութիւնք մտաց , որպէս
յօրինիցին նոքօք ամենայն գաղափարք , զիարդ ու-
սանիցիմք նոքօք վերագրել զնոսա արտաքին մարմ-
նոց՝ որ սկզբնապատճառքն են նոցին , և որպէս
զգաղափարսն ընդ զգալի նշանակս կապիցեմք առ
'ի պէսս զուգաւորելոյ զնոսա և բազմացուցանե-
լոյ , սուղասակաւ ինչ մնայ մեզ ասել այսուհետև
զհետեմանէ հանելոյ գաղափարացս , (որ այն ինքն
է արուեստիս անուամբ արհմարտնաբան , և հայե-
րէն՝ Բանակարգութիւն կամ Կարգաբանութիւն) ,
և զպատճառաց ստուգութեան և մոլորութեան :

105 Ապաքէն գոյութիւն մեր է զգալ , և ներ-

քին և արտաքին զգայութեամբքս միայն կեամք :
Գոյութիւն էից արաաքոյ մեր , որ օտար են 'ի
մէնջ , առ մեզ ոչ այլ ինչ է , բայց ազգմունք նո-
ցա 'ի մեզ . զազգմունս նոցա և էթ ճանաչեմք , և
նոցա համարիմք՝ վասն հակառակ կալոյ նոցին ըզ-
գալի և կամուոր շարժմանցս : Այսպէս ստանամք
միահաղոյն զ'ի բնէ կցորդական գաղափարս շարժ-
ման և տարածութեան , և ապա յետոյ զհնարս չա-
փելոյ տևողութեան , որ մեզ յաջորդութեամբ
զգացմանցս 'ի ծանօթս գայ :

106 Զամենայն զոր զգամք և իմանամք՝ ճշմա-
րիտ և ստոյգ է մեզ , և այլում իմիք ճշմարտու-
թեան և ստուգութեան բնասկս չեմք բաւական :
Ապա ամենայն՝ զոր յառաջին զգացմանցս կազմեմք
գաղափարս՝ ստոյգ իցեն և նոքին և զոյգ ճշմար-
տութեան , էթէ որովք կազմեմքն զնոսա՝ անըստ
գիւտ իցեն գատմունք : Բայց նոքին իսկ գա-
մունքն տեսակ ինչ զգացման են , որ է տեսանել՝
զգալ թէ գաղափար ինչ ընծայելի է այլում , ո-
րոյ էնիակայ գոլով՝ պարունակէ լուելեայն 'ի բո-
վանդակութեան իւրում՝ զգաղափարն վերադիւր ,
կամ զի զսա գէթ մարթի ածել զնովաւ : Այս
ևս իմացուած՝ զգացումն է . չմարթէ պատրանք
լինել . յորժամ կրի 'ի մեզ՝ կայ ճշմարտիւ :

107 Վասն որոյ՝ գատումն ինչ չէ երբէք սուս
յինքեան . բայց կարէ սուտ գտանիլ առ այլովք ,
յորժամ գաղափարի ումէք այնպիսի ինչ ընծայի-
ցէ՝ որ հակառակ ելանիցէ այլոց յառաջագոյն
ստոյգ գտակաւ ընծայելոց նմա՝ 'ի մէնջ այլով գատ .

մամբք: Բայց և յայնժամ՝ Էնթակայ գաղափարն , որպիսի ինչ զգամքս զայն առ ժամն , թէպէտ և նովին նշանաւ յայտնեալ , սակայն չէ ճշդիւ որպիսի զգացեալս եմք զայն յառնել առաջնոց դատմանցն : Ոչ է նոյն ճշմարտիւ , անկատար ունիմք 'ի մտի զլիշատակ նորա : Եւ տեսաք՝ քանի դիւրաւ և յաճախ հասանէ մեզ այդ 'ի վնաս , և քանի անհնարին է խորշել միշտ անտի : Այդ իսկ է պատճառ ամենայն մոլորութեանցս , և այլ ինչ չմարթէ լինել :

108 Կնքեսցուք՝ թէ կրկին միայն ազգ յայտնութեան է մեզ , զգացման և հետևութեան : Ըզգացմանն՝ ամենաստոյգ է . ուստի ոչ ինչ ընդհատ և հետևութեանն , եթէ ըստ օրինի հանեալ իցէ անտի . այս է՝ եթէ ոչ ինչ հակառակ 'ի ներքս իցէ սարգեալ : Բայց չար այն է , զի բազում անգամ վիհ մեծ է ընդ ստուգութիւն զգացման և ընդ ստուգութիւն հետևութեան հանելոյ , կամ թէ ասել՝ ընդ նախիմաց ինչ ճշմարտութիւն և ընդ վերջին հետևանս իւր . և 'ի միոջէն 'ի միւսն՝ լպիրծ է և գայթոտ ճանապարհն :

109 Եւ արդ զինչ արասցուք առ անդթելի ընթանալ . և զոր նեցուկ մատուցանեն մեզ առ այդ՝ ուղղախոհութեան արուեստողք : Տեսցուք : — Իսկ զինչ արդեօք . 'ի շարաքանութեան արուեստէն և 'ի տրամաբանական ձևոցն խնդրեցեմք օգնութիւն : Սակայն վտանգն յայտնապէս 'ի խորս բնութեան իրացն կայ , այս ինքն 'ի գաղափարսն , և ոչ 'ի ձևսն կամ , որ նոյն է , 'ի սոյն .

մանս զուգաւորութեան գաղափարաց ընդ իրեարս :

110 Առ այդու , և բովանդակ շարաբանականն արուեստ առ հասարակ ոչ այլ ինչ է , բայց մասնաւոր հետեութիւն ինչ հանել յընդհանուր բանէ : Այլ ո՞վ հաւաստեցէ մեզ զուղղութիւն ընդհանուր բանին : Աստանօր արուեստն լքանէ զմեզ . Առաժ է այն , ասէ , և սկիզբն . և զսկզբանց չէ արժան վիճել . յուղիղ խելս ապաւինելի է , 'ի հասարակաց միտս , 'ի ներքին զգայութիւն . և այլ ինչ բիւր սոցին նման բանք : Ար է ասել , թէ նոցա օրէնքն ուղղախօհութեան՝ յայնժամ՝ ևեթ առաջնորդեն մեզ , յորժամ յոչինչ պէտս իցեն , և 'ի բուն կարիս մեր թողուն զմեզ :

111 Յաւել և զայն , զի օրէնքն այն ամենայն՝ հիմնեալ են 'ի սկիզբն ինչ կրկնավրէպ . այն թէ՛ ընդհանուր բանքն իցեն պատճառք ուղղութեան մասնաւորաց . և թէ՛ ընդհանուր գաղափարքն ըզմասնաւորան պարունակիցեն . զոր և կանխաւ հաւմառօտս յանդիմանեցաք ¹⁸ (5) :

18 “ Ստուգութիւն ընդհանուր ճշմարտութեանց հիմնի բովանդակ 'ի ծանօթութեան գաղափարացս , , . Լ¹⁴ :

“ Ընդհանուր բանից չիք ստուգութիւն , բայց միայն ըստ չափոյ գաղափարացն՝ զոր յայտ առնեն , , . Ն¹⁵ն :

“ Առաջին յայտնի ճշմարտութիւնք են 'ի գաղափարսն անդ , որ նախժինքն են 'ի հոգւոջ . և ո՞

112 Եւ նախ՝ սուտ է թէ սլատճառք ուղղու-
թեան մասնաւոր բանից՝ ընդհանուրքն իցեն : Ընդ-
հակառակն՝ մասնաւոր իրք մանր քննեալք և ու-
ղիղ դատաստանքն արարեալք զնոցանէ՝ սկիզբն
են ամենայն ճշմարտութեան . և ընդ իրեարս հա-
մեմատեալք զգուշաւոր մանրախուզիւք՝ համար-
ձակեն զմեզ յընդհանուր տեսութիւնս ելանել .
իմա , զնոյն առնել դատաստան զբազմաց ինչ այ-
լոց իրաց , որչափ նկատիցեմք՝ թէ ուղիւ գտանի
այն զմիոյ միոյ ՚ի նոցունց :

113 Երկրորդ , սուտ է ևս՝ թէ ընդհանուր գա-
ղափարք զմասնաւորսն պարունակիցեն . կամ գէթ
մեկնութեան կարօտի բանդ : Ի ճառել մեր զկաղ-
մութենէ մերկ անանձնաւոր գաղափարաց՝ (33 ,
34) տեսաք զի ՚ի բազում նիւթաւոր անձնաւոր
գաղափարաց անջատելով մտօք զյատուկս նոցին ,
և զհասարակսն միայն պահելով , կազմեմք նոքօք
զգաղափար տեսակի . ապա առեալ ՚ի ձեռս զբա-
զում աեսակաց գաղափարս , և զատուցեալ ՚ի նո-
ցանէ զնոցին սեփականսն , կազմեմք զգաղափար
սեռի . և այսպէս մեկուսելով և ՚ի բաց տանելով
մտօք՝ ելանեմք յընդհանրագոյն գաղափարս կար-

չգիտիցէ՝ թէ մասնաւոր գաղափարք յառաջա-
գոյն քան զընդհանուրսն են ՚ի նմա : Ընդհանուրք
ոչ այլ ինչ են , բայց նմանութիւնք յոգունց ի-
րաց մասնաւորաց . ապա մասնաւորքն յառաջ են
քան զնոսա , և նոքա չեն առաջին սկզբունք հրմ-
տութեանցս , , Երկուն :

գի և դասու : Ապա ուրեմն , ընդհանրագոյն գաղափարք ձգին ապաքէն առ բազմագոյն էակս , որ է ասացեալն ընդարձակութիւն գաղափարի . բայց մասնաւոր գաղափարք ունին յինքեանս յուրովագոյն գաղափարս յորինիչս իրին , և այս ինքն է Բովանդակութիւն գաղափարի :

114 Արդ՝ ոչ ՚ի թիւս էակաց ընդարձակութեան գաղափարին կախի գատումն , այլ ՚ի գաղափարս բովանդակութեանն . և ըստ այնմ՝ կարեմք կամ՝ ոչ՝ ընծայել նմա այլ ինչ . այս ինքն՝ զայս ինչ կամ՝ զայն գատումն առնել զնմանէ : Սմին իրի մարթի ասել՝ ճարդն է ինչդանի , վասն զի գաղափար մարդոյ բովանդակէ զամենայն գաղափարս սեփականս գաղափարի կենդանւոյ . այլ չմարթի ասել՝ ինչդանին է ճարդ , վասն զի գաղափար կենդանւոյ՝ թէ և առ բազումս ընդարձակեալ՝ ոչ պարունակէ զամենայն գաղափարս յատուկս գաղափարի մարդոյ : Ապա ճշմարիտ է , դարձեալ միւսանգամ , թէ ընդարձակութիւն գաղափարին ոչ ինչ օգնէ ամենևին առ դասամուսնսն որ առնիցին զնմանէ :

115 Առ այսու գիտելի է ևս , զի ՚ի համեմատելն երկուս գաղափարս ընդ միմեանս ՚ի բանի ուրեք , ընդարձակութիւն ընդհանրագունին փոխի լուեկեայն յընդարձակութիւն կամ ՚ի չափ և ՚ի սահման մասնաւորագունին : Զի ահա յասելն՝ ճարդն է ինչդանի , ասել կամիմք անշուշտ՝ թէ է կենդանի ՚ի մարդկային տեսակէ , և ոչ թէ յայլմէ ամենայնէ . ապա թէ ոչ՝ այլանդակ յիմարութեան բարբաջանք լինէին :

116 Է և այլ ինչ ըստգիւտ շարաքանութեան արուեստակողացն : Զի եթէ ըստ նոցա գալ և ասել իցէ , թէ ընդհանուր բանք են պատճառք ուղղութեան մասնաւորաց , և թէ ընդհանուր գաղափարք պարունակեն զմասնաւորան , հակառակ անձին խօսել է այնուհետև ասելն ըստ նոցա , նախ՝ թէ միջնորդ եզրն՝ զոր 'ի շարաքանութիւնն մուծանեն՝ հաւասար իցէ երկուց եզերացն համեմատելոց . և երկրորդ՝ թէ մեծագոյն առածն և հետևութիւնն հաւասար իցեն և նոյն . զորոյ զանտեղութիւնն ցուցեալ է յառաջին գլուխ գրորոցս (4) :

117 Բայց 'ի շարաքանական արուեստական այնչափ պարսաւելիք կան ¹⁹ , զի համարձակ մարթ է խաբէական ասել զայն : Եւ ոչ ևս այլ զայդու դեգերէաք , եթէ ոչ ընդ առաջ ելանէին մեզ մանք 'ի արամաքանակաց , որոց ընկալեալ զերկրորդ սկիզբնդ հաւասարութեան և նոյնութեան , մերժեն միայն զառաջինն՝ որ նմին հակառակ ելանէ :

19 “ Շարաքանութիւն նոյնպէս սխալական է , որպէս զպարզ և հասարակ տարազ արամաքանելոյ : Փորձն Կէթ ուսուցանէ՝ թէ արուեստական հնարքդ գիտողագոյնք են 'ի սլաօրել և չփոթել զմիտս , քան 'ի լուսաւորել և յիմաստուն առնել : Եթէ ումէք պիտոյ թուիցի , վարեացի , բայց մի զամենայն աչս՝ իւրում՝ աչոցացն համարեացի կարօտ » . ' Լոս :

118 Բայց և այդ իսկ երկրորդ սկիզբն կարծեալ նոյնութեան՝ զոր պահէցին և առաւել քան զառաւել մեծացուցին, մինչև ասել՝ [Թէ ծանօթն և անծանօթն նոյն մի ինչ են, 'ի տագնապ տարակուսի մղեաց զնոսա և նահանջեաց յընթացից : Զի ոչ այլ ինչ էր այն ասպքէն, բայց զկէս ճանապարհին ևեթ առնել : Փոխանակ զի պարտ էր զհակառակ յետս ընդդէմն նախկի շաւղացն գընալ. զաղբիւր ամենայն ճշմարտութեան տեսանել 'ի մասնաւոր իրան, և զընդհանուր գաղափարն՝ 'ի մասնաւորն բովանդակեալ. և ասել համարձակ՝ [Թէ ընդհանուր վճիռք չեն բուն պատճառք հմտութեան²⁰, և [Թէ շատ՝ յետ քաջ հաւաստելոյ ևս զուղղութիւն նոցին՝ իբրև կարճաբոս իմն ճանապարհ ևեթ առնուլ զնոսա 'ի պէտս, առ արագ ժամանելոյ 'ի հետևութիւնս ինչ պարունակեալս յընդարձակութեան նոցա :

119 Այնպէս ասա յաջողեալ լինէր յայնժամ 'ի ներքս բերել 'ի տեսականն ուսմանց զնորոգութիւնն ցանկալի, որ հուսկ ուրեմն 'ի կիրարկաւ արդեամբք 'ի գործնականն : Զի յամենայն ազգի ազգի քննութիւնս՝ ոչ այլ ինչ հիմն

20 “ վճիռք կամ առածք ոչ միայն չեն ըսկիզբն հմտութեանցս, այլ և նոքին իսկ 'ի սարգական գաղափարաց ծնեալք են, յորոց յօդանան : . . . կարծեալ սկզբունքդ հմտութեանցս՝ չեն ինչ նոցա պիտանացու , , ’ Լ : + :

դնի, բայց միայն դիտողութիւն և փորձ²¹. զոր
թերևս բազումք կուրաբար հեռեմամբ ևեթ առ-
նեն՝ առանց զպատճառան դիտելոյ. վասն որոյ և
զարտուղին յաճախ յանըստերիւր ճանսպարհէ
աստի. ցասնուն ևս ընդ այնոսիկ՝ որ լոյս ընդ այն
ծագել և զիրաւունս անսխալութեանն ցուցանել
գուն գործիցեն :

120 Ապա ուրեմն նախնի արամաբանակք՝ օ-
րէնս թիւրս և կամ գէթ անպիտանս ևեթ տուեալ
են մեզ յառաջնորդութիւն պայմանաց ուղղա-
խոհութեան : Ասան որոյ և շարաբանութիւն՝
լիցի թերևս ուրեք պիտանի՝ ի համառօտ և ճշդիւ
յայանել զուղիղ խորհեալն, այլ ոչ և յուղղա-
խոհութիւն²² : Տեսցուք թէ յաջողեալ իցեն ու-
սուցանել մեզ գոնէ յստակել զգաղափարս՝ որ
նիւթք և ատաղձքն են ուղղախոհութեան. զի այդ
իսկ է խնդիր կարևոր :

121 Զայս միայն տան նոքա մեզ խորհուրդ ՚ի
վարանս մեր, սահմանել զքննելի և զվիճելի գա-
ղափարսն : Բարի է խրատդ. այլ նոքա խանգա-
րեցին և զայդ : Նախ, զի համարեցան՝ թէ քաջ

21 Առաջնորդ այդր ոճոյ եկաց Պաքոն՝ մեծա-
հանճար իմաստասէրն անգղիացի, և գործօն՝ Նեւ-
տոն, միւս ոմն վսեմամիտ՝ ի նմին ազգէ, և այլք
յայլոց :

22 “ Զեն շարաբանական՝ անզօր ՚ի դիւտ ճըշ-
մարտութեան, իբրև ոճ ուսուցանելոյ չէ արհա-
մարհելի ”. Պալմէն :

սահմանեալ է գաղափարն , յորժամ գտանիցի կամ գտեալ կարծիցի՝ իւ իւիք իցէ այն ՚ի սեռէ իմեքէ , և իւ որոշիցի ՚ի մերձաւոր տեսակէն . երկրորդ , զի զանազանեցին կրկին սահմանս , բառի և իրի . երրորդ , զի յամառեալ սնդեցան՝ թէ սահմանքն սկզբունք իցեն , ուստի և չիցէ արժան վիճել զնոցանէ :

122 Իսկ մեզ թուի ընդ հակառակն , թէ՛ սահմանք չեն սկզբունք , և եթէ էին ևս , պարտ էր մանր քննել տեսանել՝ ճշմարիտ իցեն եթէ սուտ . — թէ՛ բնաւ իսկ սահման՝ է կամ պարտի լինել բացատրու թիւն գաղափարին , ուստի և որոշողու թիւն զորու թեան յայտարար նշանի նորուն , — և թէ՛ անշահից խնդիրք են միշտ՝ և բազում այն է զի և անհնարին ՚ի հասանել ճշգիւ գտակաւ՝ իւ յայս ինչ սեռէ իցէ գաղափարն կամ յայս ինչ տեսակէ :

123 Իսկ արդ զինչ կարգեսցուք մեք փոխանակ այսր ամենայնի սկզբանց՝ զորս զազփալփուն և խոտելի դատեցաք : — Մի և եթ գիտողութիւն , զոր տայ մեզ մտադիւր քննութիւն մտաւոր կարողութեանցս և գործողութեանց , և կազմութեան գաղափարացս . և է այս աւաստիկ :

124 Նկատեմք , զի ամենայն գաղափարքս ՚ի զգայութեանցս գան , — և զի ոչ ևս գոն մեր բոլորովին պարզ գաղափարք , այլ առ հասարակ կոյտք են գաղափարաց միացելոց ՚ի ձեռն դատմանց եղելոց զպարզիցն , — և զի ամենայն դատմունքս են տեսանել՝ և բանք բացատրիչք նոցին՝ են

ասել, թէ գաղափարն ենթակայ դատմանցս և բանից՝ պարունակէ զգաղափարն վերագիր ընծայեալն մին, — և զի յամենայն տրամաբանութիւնս՝ առաջին վերագիրն լինի ենթակայ երկրորդի, երկրորդն՝ երրորդի, երրորդն՝ չորրորդի, և այսպէս կարգաւ մի ըստ միովէ՝ ցոր վայր պիտոյ իցէ 'ի մէջ առնուլ արկանել գաղափարս յառաջնոյն մինչև ցվերջինն. այնպէս զի եթէ ուղիղ իցէ կարգաբանութիւնն, վերջինն բովանդակեալ գտանիցի յառաջնումն. իսկ եթէ հակառակն պատահիցէ, թիւր է բանակարգութիւնն, և հետևութիւնն մոլար:

125 Որ է ասել, թէ տրամաբանութիւնք մեր են միշտ, ըստ գալորցական յորջորջմանն, հաճաքաբար «ի-ն-ի-ն-ի» կամ լաւ ևս ասել ըստ մեզ՝ կուտակ բանից: Եւ յիրաւի իսկ, անուանի շարաբանութեանն առաջին ձև, յորում առանց ճարտար զպատճառն գիտելոյ՝ զհիմն ուղղութեան այլոցն ամենեցուն առգնէին, ոչ այլ ինչ էր՝ քան թէ կուտոց բանից, զոր յերիս եզերս ամփոփէին միշտ, զի զկերպարանս իմն շարաբանութեան բերիցէ²⁵:

126 Կնիք բանիցս, չէք ինչ ասել զպայմանաց տրամաբանութեանցս, զի մի միայն է նոցա ճշմա-

25 « Բովանդակ արուեստն շարաբանական՝ է 'ի կարգ և 'ի շար արկանել զնախաժանութ փաստսըն » . Լ^ո 4 :

րիտ պայման՝ տուեալ նոցա 'ի բնէ մտաւոր կա-
րողութեանցս, և անհնար է մեզ այլ ինչ տալ
նոցա ուղղութեամբ, [Թէպէտ և բազում ուրեք
զէղջման և ճարտարխօսական մանուածովք պա-
ճուճեալ գասնի :

127 Իսկ յազագս գաղափարաց, զէն[Թակայե
ասեմ՝ և զնիւթոյ տրամաբանութեանց, չգիտեմ
ինչ այլ զգուշութիւն, բայց խնամով կազմել ըզ-
նոսին, քննել ստէպ՝ [Թէ չիցէն ինչ արդեօք այ-
լայեալ, և նոյն կայցեն միշտ 'ի միտս ընդ նովին
նշանակաւ : Եւ իբրև գուցէ տեղի երկբայելոյ
կամ կասկածելոյ ընդ առաջին ուղղութիւն նո-
ցա, կամ տեսանիցեմք զայլս ոչ քաջ խելամու-
տըս նոցին, կամ հակառակ մեզ հետեանս հա-
նեալ, չիք ինչ այլ հնար՝ բայց ե[Թէ, չասեմ սահ-
ման ինչ տալ իմաստակական և ըստ քիմս, այլ
ըստ կարի մանրախուզիւք հանդէս առնել և հա-
մար ճշգրտագահանջ՝ միոյ միոյ առանձին յօրինուա-
ծոյ մասանց նոցա և տարերաց : Եւ յսու որոշի ևս՝
[Թէ զօրութիւն գաղափարին, և [Թէ նշանին իւրոյ :

128 Յայտ է [Թէ այս հանդէս և համար չու-
նին երբէք ամենակատար լինել. զի առ այդ՝ պի-
տոյ իցէ [Թերևս վասն միոյ գաղափարի 'ի հանդի-
սի անցուցանել գոգցես զբոլորեսին զոր ունի-
ցիմք. այնչափ յեռեալ և սողեալ են ընդ միմեա-
նըս : Բայց հարցուփորձդ և փուրսիջ՝ առնիցի
մանաւանդ զերկբայելի մասանց, և զորոց առ-
ժամն 'ի խնդիր մեր և 'ի հակաճառութիւն հուսդ
և յար ինչ իցեն :

129 Յետ հարցաքննութեանդ առնելոյ, եթէ տարտամ ինչ կամ թիւր 'ի գաղափարսս հանդիպեսցի, պարտ է լռել յամենայն հետևութենէ հանելոյ, և վերստին 'ի հարցփորձ անկանել, 'ի խոյզ և 'ի խնդիր այլոց ևս արդեանց իրաց. զի կարող լինիցիմք յառաջ խաղալ. ասպա թէ ոչ, հետևութիւնն լինի գէթ անհիմն և խարխուլ: Մարթի թէ չիցէ ամենայնիւ թիւր. զի 'ի յօգուածոյ գաղափարէ, յորում գտանիցին տարերք սուտք և ճշմարիտք, մարթի հանել ուղիղ հետևմունս, եթէ օրինօք 'ի ճշմարտից անտի ծագիցեն. մարթի դարձեալ 'ի ծուռ գատմանէ հանել ուղիղ հետևանս, եթէ յանգէտս ինչ ոչ անտի ելանիցէ այն արդեամբք: Երկոքեանդ իսկ ստէսլ պատահեն մեզ. բայց չիք ինչ անդ յայնժամ ստուգութիւն. և ճշմարտութիւն թէ գտանիցի, յաջող դիպուածոյ արգասիք իցեն:

130 Այդ ամենայն յայս բովանդակի, թէ՛ ամենայն ստուգութեան հիմն է յայտնութիւն զգացմանց²⁴, զոր մանր և զգուշաւոր դիտողութեամբ և

24 Նախընծայ զճշմարտութիւն 'ի զգայութեանց գըտանիցես,

Եւ զըզգայունս իբր յաւէտ վաւերական՝ անհերքելիս,

Որ ինքնին ըստուգութեամբ յաղթահարել գիտեն ըզուտ, . . .

Որ թէ չեն հաւատարիմ, միտքն իսկ բոլոր պատիր լինի: . . .

փորձով ստանամք . — Թէ՛ ստուգու թիւն հետևու-
թեան նոյնպէս ամենեին անթերի է , եթէ վրե-
պականութեամբ այլոց 'ի վերայ եկեալ դատ-
մանց չայլափոխիցի առաջինն , — և թէ՛ չիք մեզ այլ
ինչ քան զայդ ստուգութիւն , և ոչ այլ ինչ մո-
լորութեան պատճառ՝ բաց յանզգալի փոփոխու-
թեանց յանզգաստ սպրդելոյ 'ի գաղափարսն ,
զորս որպէս անփոփոխս ինչ նովին նշանակօք
յայտ առնեմք միշտ :

ԳԼՈՒԽ Ժ .

Վերջին խրատք առ ոչիոյ խորհել :

131 Յորժամ մեզ զնշանաց գաղափարացս ճառք
անկան , տեսաք նախ՝ (102) զի իւրաքանչիւր ոք
յայլ և այլ գէպս ուսանի զնշանակութիւն նոցա ,
և բազում այն է՝ զի ըստ պատահման . վասն որոյ
և դժուարին է , չասեմ անհնարին , ընդ նմին բա-
ռի զնոյն գաղափար կապել ամենեցուն , ոչ ա-
ւելի և ոչ սրակաս : Տեսաք ևս 'ի ճառս գատ-
մանց (101) , զի գաղափարք 'ի գլուխս մեր այլայ-
լին յաճախ յանգէտս , ուստի և բառն յայանիչ

Ուստի զուր են քեզ համայն ճոռովք բա-
նիցըն կուտական

Որ ընդգէմ ըզգայութեանց կազմ և պատ-
րաստ կան յօրինեալ . Լ՛-կրէր :

նորին՝ փոխի ՚ի նշանակութենէն ՚ի բերանս մեր
յանդգաստից :

132 Յաւելուլ արժան է աստանօր, թէ այդ
ձախող անցք անցանէն ընդ մեզ մանաւանդ յայ-
լայլութենէ ներքին զգայութեանցս, յընդհա-
նուր հանգամանաց անձանց մերոց, ՚ի դժուա-
րոտ կամ յանարդեւ գործողութենէ զգայարա-
նացս, և թէ անհրաժեշտ հեռանք են զանազա-
նութեան հասակի, սերի և խառնուածոյ, առող-
ջութեան կամ հիւանդութեան և ազգի ազգի
տեսակաց տկարութեան, սովորական ազդեցու-
թեանց և զգացմանց և բնակ ախտից :

133 Քանզի անհնար է թէ, օրինակ իմն, բառն
«էր՝ ամենեւին զնոյն գաղափար զարթուցէ՝ ՚ի միտս
տղայոյ կամ ծերոյ, կնոջ ցանկասիրի կամ երկ-
չոտի կամ սչրուի կամ շահասիրի, զեղև կամ
փափուկ՝ տաժան կամ հուժկու երիտասարդի :
Յայլոց հանգունատիպ պատճառաց՝ անկար է թէ
անուն գիտութեան իրիք, զոր օրինակ բառն
«բարբառ-ծոռ-իւն», զնոյն գաղափարս ծնանիցի ՚ի
խելս գիտնոյ կամ տգիտի, բարեկիրթ առն կամ
չինականի, թէպէտ և ոչ մին հմուտ իցէ տարրա-
խուզութեան . դարձեալ և մարդոյ՝ որ առ սէր
գիտութեանն կամ մարդկութեան զայնու գայ-
ցէ, կամ որ միայն ՚ի գիւտ շահից :

134 Այդ օրինակաց չիք սպառուած . բա-
զում այն է զի մանր մանր խտիրք՝ կարի իմն անօր
են, բայց առ հասարակ պատճառք են մոլորու-
թեանց և հակառակութեանց, և անթիւ ՚ի բազ-
մութենէ :

135 Յայտ է ևս՝ թէ դասք ինչ գաղափարաց առաւել քան զայլս սխալոտ են . և այլ և այլ գիտութեանց յայգմ է, ոչ ստուգութեանն չափ, զի ուր տրամաբանութիւնք ուղիղ իցեն՝ զուգաչափ անթերի է յամենեւին ստուգութիւն, այլ գիւրութեան կամ դժուարութեանն չափ՝ յամենեւին ուղիղ տրամաբանելոյ : Օրինակի վասն, բարոյական գաղափարք յոյժ փոփոխականք են ակամայ յանգէսս՝ ՚ի հանգամանաց իւրաքանչիւր զգացմանց, բարուց, հասակաց և փորձոյ . և ահա դմին իրի բարոյական գիտութիւնք դժուարին են, և կարծիք ՚ի նոսա պէսպէս և յողգողդ : Զգալեաց բնագիտութիւնք զինելիք՝ չեն այնչափ դիւրապատիրք, բայց և ոչ ամենևիմբ անվրէպ :

136 Իսկ չափաբերութիւն ²⁵ յամրի կայ յերեսաց գոգցես ամենայն սխալմանց : Յինչ կիրս հոգւոյ և գտանիցիմք, անմարթ է թէ ըստ արժանի միտ եգեալ՝ չմանայցեմք զուղղութիւն կամ զթիւրութիւն հաշուին, կամ զապացուցի երկրա-

25 Զոր ՚ի բանական արուեստին Սոաւէի ըստգտեալ և խոտեալ էր մեր զձայնսդ «*αυτοψαλαλαλα*», «*αυτοψαλαλαλα*», «*αυτοψαλα*», զնիւթական թարգմանութիւնս յունին *μάθημα, μαθηματικός*, — *χή*, զնոյն արարեալ գտանեմք այժմ ՚ի մեծանուն մատենագրէ աստի . զի ստորև ծանօթս տուեալ տեղեակս՝ առնէ, թէ «*Յանգէսս կոչեցաւ այն գիտութիւն մաթեմատիկա*, որ նշանակէ ուսողութիւն, ուսեալ իր . և ո՞ր այն իր իցէ՝ զոր չուսանիցի մարդս, բայց միայն զոր ինքն հնարիցէ » :

չափական առաջարկութեանն : Ասան զի, առ մեծի զանազանութեան գաղափարացդ յայլմէ ա մենայնէ՝ անհնար է խառնիլ նոցա ընդ իրեարս, և կամ կրից մերոց այլայլել զնոսա : Ասան այտրիկ՝ չափաբերական ուսմունք միայն օգտակար դատեալ են յոմանց առ ուղղախոհութիւն և ուղղագառութիւն :

137 Բայց այլք 'ի դէպ ևս առ այդ համարին զբնաբանական գիտութիւնս, և մանաւանդ զտարրալուծութիւն, և զբնախօսութիւն մարդոյս՝ ըստ հոգւոյ մասանց և ըստ մարմնոյ : Զի չափաբերութիւնք, թէպէտ և ինքնին անխալք և ճիշդք, բայց կարի իմն նիւթական են և 'ի մի ինչ և եթ կապեալ՝ 'ի քանակ, և լեզու նոցա դիւրին և անաշխատ՝ ընդ անփոփոխ հարկաւ կաշկանդեալ : Իսկ բնաբանականքն՝ ազատ յայնմ՝ ամենայնէ, աստորէս ընդարձակ մատուցանեն փորձոյ և դիտողութեան, որով և սրելոյ զուշ մտաց 'ի դիւտ ուղիղ հետևութեանց, և 'ի զգուշութիւն յերեսաց բազմագիմի մոլորութեանց, որ միայն կարևոր խնդրելն է մեր :

138 Յայդմ՝ ամենայնէ ցայս վայր ասացելոց՝ բովանդակութիւն խրատուց և վախճան բանիցս այն լիցի մեզ յորէնս բնաբուն ուղղախոհութեան զի պարտ է յամենայնի 'ի զգալի և զննելի ազգեցութեանց առնել սկիզբն, այս ինքն է յարդեանց իրաց . մտադիւր ուշի ուշով քննել զայնս՝ առ 'ի չտեսանելոյ այլ ինչ քան զոր էն . հոգ մեծի խնամոյ տանել՝ ըստ իրացն արդեանց կազմելոյ մեզ

գաղափարս յօգուածոյս, որ նոցին հարազատ հե-
տևանքիցեն . և զամենայն հնարաւոր զգուշութիւն
'ի գործ արկանել, զի որ գամ մի որոշեալ հաս-
տատեցան գաղափարք՝ մի բնաւ այլափոխեսցին
յանզգաստից 'ի միաս մեր՝ յորժամ մի ըստ միով
զհետևութիւնսն հանիցեմք :

139 Այդ միայն է ահա անմոլար և հորդ ճա-
նապարհ ուղիղ խորհելոյ և ուղիղ դատելոյ, և
այս կնիք բանից գոյզն գրուածոյս . որ ոչ այլ ինչ
է՝ քան թէ համառօտ վարդապետութիւն կարևո-
րագոյն սկզբանց ուղղախոհութեան և ուղղադա-
տութեան, կամ թէ ասել՝ ճառ զգլխաւոր ար-
դեանց իրաց ճշմարտութեան առ իմացականու-
թիւն սլատկանելոց, որ և այդ այլով բանիւ զնոյն
է ասել :

Վ Ե Ր Զ

ՍԿԶԲՈՒՆՔ

ԲԱՐԻՈՔ ԿԵԼՈՅ

Ս Կ Զ Բ Ո Ւ Ն Ք

Բ Ա Ր Ի Ո Ք Կ Ե Լ Ո Յ

Կ Ա Մ

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ի Ն

Գ Լ Ո Ւ Խ Ա .

Ձիւն է Բարոյակիսն և զիւն է ևորս գործն :

1 Բարոյականն է գիտութիւն, որ ուսուցանէ բարւոք կեալ և մարդ բարի լինել յամենայն կարգի վարուց կենցաղոյս՝ ըստ աստուածագիր օրինաց բնութեան, և ըստ գիտութեան բարւոյ և չարի խղճի մտացն¹, յոր բնաւորեալ է յարարչէն բանական հոգիս :

1 Մտացն խղճ՝ դատաստանն է զոր առնեմք զգործոցս, և վիայեմք արդարութեան և բարութեան կամ անիրաւութեան և չարութեան նոցա ըստ լուսոյ բանին և զգայութեան սրտի, աորս ստեղծեալ եմք՝ ի բնէ, բայց հմտութեամբ ստանամք որպէս և զամենայն իմաստ :

2 Բարւոք կեանք և մարդ բարի լինելն՝ է այնպէս ուղղել զամենայն յօժարութիւնս և զգործս մեր յօրէնս Աստուծոյ և բնութեան, զի միշտ արդարք իցեն և գոհ գտանիցիմք մեք զանձանց և այլք զմէնջ : Որով և հաճեսցուք զԱստուած զօրինադիրն բնութեան, որ զամենեցուն զմեր և զայլոց բարին կամելով յաւիտենական օրինօքն, հաստատեալ է ըստ այնմ՝ օրէնս և իրաւունս ՚ի բնութեան մերում, և զսպասանութիւն նոցին արդար և բարի գրէ, և զլուծումնն՝ անիրաւ և չար : Այնչափ կարևոր է այս գոհութիւնս զանձանց և հաճութիւնն Աստուծոյ, որչափ բարւոք կան կամ բարեկեցութիւնն, առ որ միշտ և անարգելաբար բերիմք ՚ի բնութենէ՝ ըստ հանապազորդ ազդեւոյ զգայութեան մերոյ և օրինադէտ մտացս խղճի :

3 Այնու կարեմք գոհ լինել մեք զանձանց և այլք զմէնջ, և հաճել զԱստուած, եթէ զմեր և զայլոց իրաւունսն պահիցեմք՝ որ յաստուածակարգ օրինաց անախ բնութեան ելանեն, որպէս տեսցուք այժմ՝ ՚ի մօտոյ : Ասան զի, արդարութեամբն՝ զոր պարտիմք առ անձինս մեր, զմեր իրաւունքս պահելով՝ ոչ ինչ գործեմք մեզ ՚ի վնաս . այլ մանաւանդ՝ որ ինչ սպասանէ և լաւացուցանէ զմեր բարեկեցութիւնն՝ զայն առնեմք : Իսկ զայլոց իրաւունսն պահելով արդարութեամբ զոր պարտիմք առ այլս՝ ոչ գործեմք ինչ նոցա ՚ի վնաս . այլ մանաւանդ՝ որ ինչ սպասուի և լաւացուցանէ զնոցա բարեկեցութիւնն՝

զայն գործեմք. որով առաւել արժանի լինիմք
յարգի և սիրոյ յԱստուծոյ և 'ի մարդկանէ :

4 Մեզ այն է մնաս, որ ինչ տկարացուցանէ
զմարմնոյ կամ զհոգւոյ զօրութիւնս մեր, կամ
զքնաւորական նոցա զարգացումն խափանէ, կամ
գէթ ոչ աճեցուցանէ : Իսկ այլոց այն լինի մնաս,
որ ինչ նոյնպէս զնոցա զօրութիւնն տկարացու-
ցանէ՝ զմարմնոց կամ զհոգւոց, կամ արգելու
զքնական զարգացումն, և կամ գոնէ չաճեցու-
ցանէ որչափ 'ի ձեռս մեր է : Այսպէս ահա զմեր
իրաւունս պահելով գոհ լինիմք մեք զանձանց. և
զայլոցն պահելով նոքա գոհ լինին զմէնջ, և ոչ
կրեմք 'ի նոցանէ զեան ինչ յիրաւի. և երկոքումք
օրինակօք զաստուածագիր օրէնս բնութեան լի-
նիմք կատարեալ :

5 Եւ ոչ այգչափ միայն, այլ և որպէս ասա-
ցաք՝ յարգի և սիրոյ ևս լինիմք արժանի վասն ուղ-
ղութեան և արգարութեան մերոյ և վարուցս ան-
մեղութեան. ևս առաւել վասն պարզամտաբար
գործակից լինելոյ մերոյ 'ի պահպանութիւն և, թէ
պիտոյ լինիցի, յաճումն մարմնաւոր և հոգևոր
զօրութեանցն այլոց : Վասն զի այս գործակցու-
թիւն մեր՝ այնչափ պատուական է յաչս մարդ-
կան, որչափ սահպանութիւն և զարգացումն
այնց զօրութեանց, յորս է նոցա և մեր բովանդակ
բարեկեցութիւնն :

6 Իսկ թէ յետ այսպէս բարիս ընդունելոյ գը-
տանիցին տակաւին ապերախօք և անշնորհակա-
լուք առ բարերարան, չէ ինչ զարմանք. զի ապե-

րախառուծիւնդ այդ և անշնորհակալուծիւն՝ ախտից ծնունդք են, զորոց զիսկն և զպատճառսն չէ տեղւոյս ցուցանել: Առ այժմ՝ շատ լիցի գիտել, զի այդոքիկ ՚ի բարոյական կարգի խոտորմունք են:

7 Իսկ մարմնոյ և հոգւոյ զօրուծիւնս ասելով՝ իմանամք զայն ամենայն ինչ, իւ կեանքս կայ յաստիս յուժի՝ որ կարևոր է մարդոյս ըստ պայմանի բնական ստեղծուածոյն և քաղաքական վիճակին՝ առ ՚ի կատարել զպաշտօն պարսուցն առ Աստուած՝ առ ինքն և առ այլս:

8 Մարմնոյ զօրուծիւնք այն են, որ կան յանդամս մարմնոյն և ՚ի զգայարանսն. իսկ հոգւոյ զօրուծիւնք այն՝ որ կան ՚ի հոգւոջ և ՚ի սրտի, կամ ՚ի միտան և ՚ի կամսն:

9 Այս մարմնոյ և հոգւոյ զօրուծիւնք՝ պիտոյ են մարդոյս առ ՚ի գործ դնել զիրաւունսն: Ասանորոյ, առ ուսանելոյ լինել մարդ բարի՝ հարկ է ճանաչել զիրաւունս մեր և զայլոց, այս ինքն զաստուածադիր օրէնս բնուծեան: Զի առանց այդր ծանօթուծեան՝ չկարեմք պահել զմեր և զայլոց իրաւունս, և չպահելով զնոսս՝ ոչ կարեմք գոհ լինել զանձանց, ոչ զայլս գոհ առնել զմէնջ և ոչ հաճոյ լինել Աստուծոյ. որ է ասել՝ թէ չարւոք կամք և ընդ հակառակս անդադար և անարգել բերման բնուծեանս ՚ի բարեկեցուծիւն:

Արդ՝ յետ ՚ի միտ առնլոյ զինչ է Բարոյականն և գործ նորա, ճառեսցուք այժմ՝ զիրաւանց, որ առաջին հիմունքն են նորա:

ԳԼՈՒԽ Բ .

Իրաւունք մարդոյ ² :

10 Աղբիւր իրաւանց՝ օրէնք աստուածայինք են : Այդ օրէնք՝ կրկին են . յաւիտենական և բնական : Յաւիտենական օրէնքն է բանն աստուածեղէն իմաստութեան յինքեան , իբրև յօրինիչ և ուղղիչ գործոց և շարժմանց արարածոց առ հասարակաց բարին տիեզերաց : Բնութեան օրէնքն

2 “ Առաջին պարտք մեր առ մեզ ինքեանս են . նախկին զգացմունք մեր 'ի մեզ ամբիօփին . ամենայն բնական շարժմունքս՝ նախ 'ի մեր պահպանութիւն և 'ի բարեկեցութիւն բերին : Վասն որոյ , առաջին իմացուած արդարութեան՝ ոչ անտի ծնանի 'ի մեզ՝ զի մէք պարտիմք ինչ ումէք , այլ անտի՝ զի այլք պարտին ինչ մեզ : Եւ այս ևս մի է յընդդիմակազմութեանց հասարակաց դաստիարակութեան . զի առ մանկտին՝ միշտ զպարտուց իւրեանց ճառելով , և ոչ երբէք զիրաւանցն , ըսկիզբն 'ի հակառակէն առնի առ նոսա խօսելոյ , զոր չիմանան , և ոչ փոյթ ինչ առնեն ” : Իմաստաւէր Գրի :

“ Օրէնք և իրաւունք յաջորդեն միմեանց իբրև հիւանդութիւն իմն մշտնջենաւոր . բանն յանմտութիւն դառնայ . վասն զի զբնածին մեզ իրաւանցս , աւանդ , չիք ինչ ուրեք երբէք խօսք և խընդիր ” : Կէնէ , Գերմանացի Բանաստեղծ Իմաստասէր :

է կարգն աստուածային իմաստութեան հաստատեալ 'ի բնութիւնս, թելադրութեամբ բանին և խղճի մտաց յայտնեալ բանական բնութեան, պատուիրելով զպատշաճսն ուղիղ բանի, և արգելով զանպատշաճսն 'ի յօրինուածութիւն 3, անշուշտ փոխարինաց խոսամամբ:

11 Ապա ըստ այդմ՝ սկիզբն բնական իրաւանց՝ նոյն իսկ բանն է և պատճառ աստուածահրաման օրինաց բնութեան, զոր միտք ըմբռնեն կամ տեսանեն 'ի յաւիտենական և աստուածային էութեան նոցա, յոր հիմնի պարտականութիւն մարդոյ հպատակելոյ նոցա զանձնիչխան կամսն և ըզգործսն՝ աւետեաց վարձուցն ակնկալութեամբ: Չիք և չմարթի լինել իրաւունք հակառակ իրաւանց, և ոչ օրէնք ընդդէմ օրինացն օրինաց. բնութեանն ասեմ օրինաց:

12 Արդ՝ որպէս պարտն է ճշդիւ քննելով զաստուածագիր օրէնս բնութեան մարդոյն, ութ են մարդոյ իրաւունք, զորս պարտական է պահել յանձին իւրում և յայլս. Աստուածպաշտութիւն, պահպանութիւն կենաց, կատարելութիւն, հաւատարութիւն, ինքնիշխանութիւն, ազատութիւն, սեփականութիւն, պաշտպանութիւն:

13 Իրաւունք աստուածպաշտութեան տայ

3 Օրէնք արմատն է ձայնիցն յօրինել, յօրինուած, զի առանց օրինաց՝ չիք յօրինել և ոչ յօրինուածութիւն:

մեզ իշխանութիւն կամսկարութեամբ պաշտել զԱստուած ըստ ստոյգ գիտութեանն՝ զոր յաստուածածանօթ ստեղծուածոյ բնութեանս և ՚ի խղճէ մտաց և ՚ի յայտնութենէ նորա ունիմք զնրմանէ իբրև զարարչէ՝ զտեառնէ և զնախախնամօղ հօրէ, և ըստ այնմ սիրել զնա, խնդրել զչընորհս նորա, խոստովան լինել զերախտիսն և պահել զօրէնս նորա, զնա միայն գիտելով առաջին սկիզբն և վերջին վախճան ամենայնի:

14 Իրաւունք պահպանութեան կենացս է, որ տայ մեզ իշխանութիւն ՚ի հոգալ և առնել զամենայն ինչ որ հարկաւոր է առ կենդանութիւն:

15 Իրաւունք կատարելութեան է, որ տայ մեզ իշխանութիւն ՚ի հոգալ և առնել զամենայն ինչ որ կարէ լաւացուցանել զկեանս մեր՝ թէ ըստ զօրութեանց մարմնոյ և ըստ պէտս զգայարանաց, և թէ ըստ զօրութեանց հոգւոյ և յօժարութեանց սրտի ⁴:

16 Իրաւունք հաւասարութեան այն է, զի ամենայն մարդիկ զնոյն բնութիւն ունեւրով յարարչէն Աստուծոյ ՚ի հօրէն հասարակաց, ունին զնոյն իրաւունս, և ոչ զւմեք աւելի ինչ կամ պակաս վիճակեալ է քան այլում ⁵:

17 Իրաւունք ինքնիշխանութեան կամ ինքնա-

4 Եղերո՞ւք դուք կատարեալք, որպէս և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է. Մատթ. Է:

5 Ամենեքին դուք եղբարք էք. Մատթ. ԻԳ:

տէրութեան այն է , որով մարդ , վասն հաւասարութեան իրաւանց ամենեցուն , լինի ինքնատէր 'ի վերայ անձին և զօրութեանց իւրոց , ուստի և կարող 'ի հոգալ և առնել զամենայն ինչ որ պատշաճ է 'ի վարել զիրաւունս իւր՝ առանց բռնի հըպատակ լինելոյ այլում կամաց . որպէս և այլք նովին պատճառաւ չեն հպատակ իւրոց կամացն :

18 Իրաւունք ազատութեան այն է , որով մարդըս տէր գորով անձին իւրոյ և զօրութեանցն , կատարեալ իշխանութիւն ունի յոր և է պատշաճ պէտս վարելոյ զայնս , թէպէտ զանգամոցն և զըզգայարանացն , և թէ զմտացն և զկամացն , առ 'ի գործ ածել զիրաւունս իւր : Պատշաճ պէտս ասեմք , զի ճշմարիտ ազատութիւն ոչ զոր կամին որք առնելն է , այլ զոր իրաւամբքն և արդարութեամբ կարիցէ ⁶ :

19 Իրաւունք սեփականութեան նշանակէ զիշխանութիւն ունելոյ՝ ժառանգելոյ և վարելոյ յինչ և կամիմք զամենայն ինչ որ մեր է , և ոչ այլ որք ունի իրաւունս 'ի վերայ նոցա :

20 Իսկ իրաւունք սլաշտպանութեան յայտ առ-

6 Ծանիջիք զճշմարտութիւնն , և ճշմարտութիւնն ազատեցէ զձեզ . . . ճշմարիտ ազատք լինիջիք . Յ. 14 . 5 : Ազատութեամբն՝ որով Քրիստոս զմեզ ազատեցոյց . Գ. 1 . 14 . 7 : Միայն զի ազատութիւնն ձեր ոչ լինիցի 'ի պատճառս մարմնոյ . անդ : Յառեալ 'ի կատարեալ օրէնս ազատութեանն հայիցի . Յ. 14 . 10 :

նեն զիշխանութիւնն վարելոյ զամենայն զօրութիւնս մարմնոյ և հոգւոյ՝ ՚ի պահպանել զամենայն իրաւունս մեր յորմէ որ խափանելն կամիցի զվայելս նոցին ՚ի մէնջ: Եւ այս իրաւունքս է՝ որ զայլսն ամենեսին ամբողջ պահէ: Զի եթէ չկարէր մարդ վարիլ ամենայն զօրութեամբն ՚ի պաշտպանութիւն իրաւանց իւրոց ընդդէմ խափանչաց, ոչ ինչ կամ յոյժ սակաւ ինչ արժէին իրաւունք իւր: Վասն զի, որովհետև միայն ազատ վայելք իւրոց իրաւանցն է հնարք պահպանութեան իւրոյ և լաւանալոյ վիճակի կենացն, յայնժամ ամենայն բախտ իւր ՚ի կամս այլոց լինէր կախեալ:

ԳԼՈՒԽ Գ.

Աւելիչսկասն սկիզբն և պատճառ իրաւանց 7:

20 Տեսաք հեռաւոր կամ միջական սկիզբն և պատճառս իրաւանց լինել զօրէնան արարչին՝ ըզյաւիտենական և զբնական: Իսկ անմիջական կամ մերձաւոր սկիզբն և պատճառք իրաւանց ՚ի

7 “Յուցից զի արդարութիւն և բարութիւն՝ չեն սոսկ ձայնք անգոյք, մտացածին ստեղծուածք բարոյականք, այլ՝ ճշմարիտ յօժարութիւնք հոգւոյ՝ բանիւ լուսաւորելոյ. և ոչ այլ ինչ են, բայց կարգաւոր զարգացումս նախկի յօժարութեանցս. և զի բանիւ լոկով՝ առանց խղճի մտաց՝

մարդն՝ է օրէնք աստուածաստեղծ բնութեան իւրոյ՝⁸ . այս ինքն է բուն իսկ ստեղծուածն իւր , յորում կարգեալ և եղեալ են յարարչէն օրէնք սեփական բնութեան իւրոյ , որով միշտ անարգել բերի 'ի խնդրել զբարեկեցութիւն իւր , այս ինքն՝ 'ի գործ արկանել զիրաւունսն :

22 Այս բերումն ծագի 'ի կարեաց պիտոյիցն : Կարիք պիտոյիցն է անձկութիւն ինչ անհանգիստ , վիշտ իմն , որ ցորչափ տևէ 'ի նմա՝ տագնապեալ տանջեալ չարակեաց առնէ զնա . և հարկաւ մարդն ջանայ հնարի հելքել զայն և դադարեցուցանել :

չմարթի հաստատել օրէնս , ինչ բնականս . և բովանդակ իրաւունք բնութեան , եթէ չիցեն 'ի բնական ինչ պէտս սրտի մարդոյն հիմնեալ , եղջերուաքաղ են և ոչ այլ ինչ : . . . Ոչ է ճշմարիտ , թէ պատուիրանք բնական օրինաց՝ 'ի վերայ բանին և եթ հաստատեալ իցեն . է նոցա այլ իմն ամբագոյն և անաստան հիմն : Սէր մարդկան ծնեալ 'ի սիրոյ անձին՝ սկիզբն է մարդկային արդարութեան : Բարոյականն համօրէն աւանդեալ կայ յաւետարանին՝ 'ի բովանդակութեան անդ օրինացն , , : Այս ինքն 'ի պատգամս « Ամենայն օրէնք 'ի մի բան բովանդակին , 'ի Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո , , : Իմաստաւէր ոմն :

8 « Առաջին հիմն բարոյական գիտութեանց է բնութիւնն մարդկային . երկրորդ՝ հազորդութիւն իրաց ընդ մեզ , (յորմէ պէտքս) . երրորդ՝ օրէնք այնր հազորդութեան , , . Անբոն Ճէնովէլի : Տես և 'ի Սոաւէ . Արուեստ բանական գիրք Թ . պրակ Դ . յօդ Դ :

Այս հերքումն և դադարումն լինի լցուցանելով զկարխս պիտոյիցն, որ է ասել՝ ՚ի դործ գնելով զիրաւունսն պատշաճեալս ՚ի լրումն տագնաաւօղ պիտոյիցն :

23 Այսպէս ահա իրաւունքն ծագեն անմիջաբար ՚ի պիտոյիցն, որ են նոցա բուն մերձաւոր ըսկիզբն և պատճառք ըստ կամաց և օրինաց յօրինողին զմարդն՝ Աստուծոյ : Եւ մարդոյ իրաւունք ինչ չէին բնաւ, եթէ չէին ինչ պիտոյք⁹ : Եւ քանզի պիտոյքն՝ կարևոր հանգամանք և օրէնք են ստեղծուած ի հուլթեան նորա, որով և բնականք նմա, ապա ըստ այնմ՝ և իրաւունքն, որով և օրինաւոր լինին :

Ասան այսորիկ հարկ է ասել, թէ նախաճառեալ իրաւունքդ՝ իւրաքանչիւր առ պէտս ինչ կարգեալ են . զի որովհետև ուր չիք պէտք՝ անդ և ոչ մի ինչ իրաւունք, հարկաւ սոքա առ իրեարս պատշաճեալ են : Յառաջիկայ գլուխդ ասացուք՝ թէ առ մէն մի ՚ի վերոյիշեալ իրաւանց ո՞ր պէտք համեմատիցին :

9 Սմին իրի և ՚ի լեզուս մարդկան լսի՝ Քեզ զն՝ պիտի . Ինչ չբար պէտք է . փոխանակ ասելոյ՝ Քեզ զն՝ իրաւունք իցեն զայս կամ զայն ասելոյ կամ առնելոյ :

ԳԼՈՒԽ Դ .

Մեն մի յիրաւանց առ որ պէտս մարդոյն
պատշաձին :

24 Աստուածապաշտութեան իրաւունք կար-
գեալ են առ կարևոր պէտս՝ որով ՚ի բնէ աս-
տուածածանօթ ստեղծուած իսկարօտիմք միշտ Աս-
տուծոյ՝ յամենայն բնական և բարոյական կեանս
մեր, իբրև արարչի, տեառն և հօր . ուստի և խընդ-
րել պարտիմք զայնս, և հաճել զնա և սիրել ի նմա
լինել օրինապահութեամբ, առանց որոյ չիք և
չմարթի լինել՝ ոչ բարի և ոչ բարեկեաց ՚ի կեանս
աշխարհիս ¹⁰ :

25 Պահպանութեան իրաւունք կարգեալ են
առ պէտս պահելոյ զկեանս մեր, և վանելոյ ՚ի
մէնջ զամենայն ինչ որ կարէ բառնալ զայն :

26 Կատարելութեան իրաւունք կարգեալ են
՚ի պէտս լաւացուցանելոյ ըստ կարի ամենայն օրի-
նաւոր հնարիւք զվիճակ կենացս : Ասան զի ամե-
նայն ոք զգայ յանձին, թէ յորժամ բարւոք կամք,
ցանկամք և հնարիմք լաւ ևս կալ :

27 Հաւասարութեան իրաւունք կարգեալ են

10 Աստուածապաշտութիւնն առ ամենայն ինչ
օգտակար է, և զաւետիս կենաց ունի՝ զարդիս և
զհանդերձելոյն . Թ . Տիմոթե . Գ . 8 :

առ 'ի պէտս 'ի վայր չմնալոյ քան զայլս 'ի կարևոր
հնարս հոգալոյ զպիտոյս մեր : Զի եթէ 'ի ստորև
մնայաք քան զայլ նմանիս մեր 'ի կարևոր հնարս
հոգալոյ զպիտոյս մեր, յայտ է թէ չունէաք զա-
մենայն ինչ որ հարկաւորն է 'ի սահպանել զմեզ
և 'ի լաւացուցանել զվիճակ կենացս . և այսպէս
ունենլով զանձուկ ինչ պիտոյից, և ոչ զհնարսն
ցուցանելոյ զայն, անշուշտ թշուառ լինէաք :

28 Ինքնիշխանութեան որպէս և Ազատութեան
իրաւունք՝ երկոքին ևս ծագեն 'ի մի և նոյն պի-
տոյից, յորմէ ծագէ հաւասարութեան իրաւուն-
քն . զի երեցուն ևս մի և նոյն սկիզբն է : Եւ այս
սկիզբն այն է, զի եթէ բռնի ընդ այլոց իշխանու-
թեամբ էաք, և 'ի ձեռն այլոց և ըստ նոցա կամաց
հարկ էր զմարմնական և զհոգեկան զօրութիւնս
մեր վարել 'ի գործ իրաւանցս մերոց, ապա 'ի
սակասել կամաց յայլս կամ՝ կարողութեան 'ի
շարժել զմեզ 'ի գործ, մնայաք 'ի կարիս պիտոյից
մերոց՝ առանց կարող լինելոյ ընուլ զայնս . վասն
որոյ և չարաւ կայտք, և չունէաք զհնարս լաւ ևս
կալոյն՝ յոր 'ի կարեաց պիտոյիցս գրդիմք միշտ ան-
արգելաբար :

29 Սեփականութեան իրաւունք յառաջ գան
'ի պիտոյից վարելոյ այն ամենայն իրօք՝ որ պատ-
շաճ իցեն 'ի սահպանել զկեանս կամ՝ 'ի լաւա-
ցուցանել զվիճակ նորա . և զիրսն զայն՝ մեր ստա-
ցեալ իցէ մերով ճարտարութեամբս կամ՝ հաւա-
սարազօր իրաւամբք իւրիք :

30 Պաշտպանութեան իրաւունք ծագեն 'ի պի-

տոյիցն՝ զոր ունիմք ՚ի յարգել և ՚ի շահեցուցանել զիրաւունս մեր . զի քաջայայտ է՝ թէ ոչինչ օգնէ ունելն զայնս , եթէ չկարիցեմք յարգել և շահեցուցանել զնոսա մերով զօրութեամբքս :

31 Բայց զօրութիւնս մեր չէ իրաւունք , այլ ճար և գործի յարգելոյ և շահեցուցանելոյ զիրաւունս : Եւ յայնժամ միայն իրաւացի է վարիչնս վաւ , յորժամ ունիցիմք իրաւունս ինչ սաշտաւնութեան . և այնչափ և եթ սպարտիմք ՚ի կիրարկանել զայն , որչափ իրաւունքս սրահանջեն , և ոչ աւելի : Եթէ որ ազատութեամբն ՚ի ֆրասանձինն և եթ վարիցի , առանց ինչ զոք կամ զընկերութիւնն զրկելոյ , չունիմք իրաւունս բռնի արգելոյ , բայց սարսու և եթ սիրոյ և գթութեան : Այնքան է ազատութեանն սրբութիւն , զի ՚ի մուտրելն իսկ և ՚ի մուլել և զզուել զիրաւունս իւր և զանձն՝ տակաւին արժանի ակնածութեան է : Անչափ կամք խափանելոյ զամենայն ֆրաս՝ արտաքոյ է իրաւանց և սպարտուց մարդոյ , և Աստուծոյ միայն անկ :

ԳԼՈՒԽ Ե .

Պարտականութիւն յիրաւանց ծագեալ :

32 Ի բռնութենէ կարեաց պիտոյիցս և 'ի բնաւոր անյաղթելի բերմանէ 'ի բարեկեցութիւնս՝ պարտական գտանիմք և ստիպիմք ազատորէն և անընդդիմաբար 'ի վար արկանել զիրաւունս մեր : Զորեթէ չառնիցեմք, զրկեմք զիրաւունս մեր, կամ որ նոյն է՝ անիրաւիմք առ մեզ, ուստի և փաստասանէ մեզ չարաչար կելոյ. փաստ՝ որ կարէ տանել զմեզ մինչև 'ի կորուստ :

Վասն այսորիկ կանխեցաք ասացաք 'ի սկզբանէ, թէ մարդս պահելով զիրաւունս իւր կարողանայ գոհ լինել զանձնէ. զի այսու օրինակաւ՝ չառնէ ինչ որ վիշտ կամ փաստ բերիցէ ինքեան, այլ՝ մանաւանդ զամենայն ինչ որ պահպանէ և լաւացուցանէ զբարեկեցութիւն, զայն առնէ :

ԳԼՈՒԽ Զ .

Անկատար իրաւունք , և սկզբունք ընկերակա-
նոշքեան :

33 Մինչև ցայս վայր նախաճառեալ իրաւուն-
քն՝ կատարեալք կոչին . վասն զի մարդ իւրով
զօրութեամբն կարէ վարել զնոսա 'ի սէտս , այս
ինքն իրաւամբքն պաշտպանութեան՝ որ 'ի ձեռն
իւրոյ զօրութեան 'ի գործ ելանէ : Բայց են այլ
ևս երկու իրաւունք , որ կոչին անկատարք . վասն
զի չկարէ մարդ զզօրութիւնն 'ի վար արկանել առ
'ի վայելել 'ի նոսա : Այս կրկին իրաւունք այն են ,
որ ծագեն յայլոց կրկին պիտոյից մարդոյն՝ զորս
այժմ՝ ծանուցուք :

34 Մի սէտքն այն է , զի յազատ գործս իրա-
ւանց մերոց ապահով և վստահ ընկցիմք 'ի կող-
մանէ այլ մարդկան , թէ չեմք ինչ կրելոց 'ի նո-
ցանէ արգել և ընդդիմութիւն : Միւս սէտքն այն
է , զի ուր սոսկ զօրութիւն մեր չբաւէ 'ի գիւտ
կարևոր հայթայթանաց առ 'ի լրումն պիտոյիցս ,
օգնութիւն գտանիցեմք յայլմէ մարդկանէ :

35 Իրաւունքն՝ որ յառաջնոյ անտի ասացեալ
պիտոյիցն ծագէ , կոչի իրաւունք Ապահովութեան
կամ վստահութեան , որոյ զօրութեամբ անվըր-
գով թողեալ ընի մարդ 'ի գործս իրաւանց իւ-
րոց : Իրաւունքն՝ որ յասացեալ երկրորդ պիտո-

յիցն ծագէ, կոչի իրաւունք Օգնութեան, որոյ զօրութեամբ ձեռն տան նմա այլք՝ ուր ինքնին չէ բաւական ՚ի ընուլ զկարօտութիւն իւր :

36 Երկուց իրաւանցս այսոցիկ գործ է կապել զմարդիկ ընդ իրեարս ՚ի ձեռն երկուց հիմնական օրինաց բարոյականին՝ գրոշմեւոց յարարչէն ՚ի ներքին զգայութեան մերում՝ կամ ՚ի գիտակցութեան, այս ինքն է ՚ի խղճի մտացս : Առաջին, Մի առնել այլում զոր ինչ չկամիմք մեզ իրաւամբք ¹¹, որ այն ինքն է արդարութիւն և սէր, և է իրաւունքն ապահովութեան : Երկրորդ, Առնել այլում զոր ինչ կամիմք մեզ իրաւամբք ¹², որ այն ինքն է դարձեալ արդարութիւն և սէր, և է իրաւունքն օգնութեան ¹³ :

37 Ասացաք թէ մարդս չկարէ ՚ի կիր արկանել զզօրութիւնն առ ՚ի վայելել յայս երկուս իրաւունս . վասն զի ապահովելն և օգնելն կարօտելոյն՝ է ազատ գործ կամաց այլոց յարդարութեանէ և ՚ի սիրոյ : Իսկ եթէ ՚ի նախաբուն յինքնագլուխ վիճակի մարդոյս զօրութիւն ՚ի կիր արկա-

11 Զոր դու ատես, ումեք մի առնիցես . Տ՝ԼԲ . 7 :

12 Զամենայն զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք արարէք նոցա . զի այս իսկ են օրէնքն և մարդարէք . Մատթ . 5 :

13 Արդարութիւն առ այլս՝ սէր է առ մեզ . Մտնիւնս . 13 :

նեւ կամք իցեն ստիպելոյ զայլս առ 'ի տալ մեզ
ապահոյութիւն կամ օգնութիւն, բռնն առնել
սխտի ինքնիշխանութեան և ազատութեան այլոց,
առ որ չիք մեր բաւական զօրութիւն, և կամ
կեանք մարդոյ սլատերաղմ լինիցի անդու՛ ան-
գադար :

38 Բայց թէպէտ և չկարէ մարդ բռնադատել
զայլս զօրութեամբ՝ յապահովել զվայելս իրա-
ւանցն, և յօգնել՝ ուր անձամբ չիցէ բաւական,
սակայն կարէ անշուշտ վայելել յիրաւունս ապա-
հովութեան և օգնութեան գեղեցիկ մարթանօքն՝
զոր բնութիւնն ուսուցեալ է և մարդս հայթայ-
թեալ, և ահա ասասցի յառաջիկայդ :

ԳԼՈՒԽ Է.

Ընկերական միաբանոց իւնք :

39 Որովհետև առանց հարստահարելոյ զայլս
և զրկելոյ յիրաւանց ինքնիշխանութեան և ազա-
տութեան՝ չիք հնար 'ի կիր առնուլ զզօրութիւն
առ 'ի կարող լինելոյ ժառանգել զերկոսին իրա-
ւունսն՝ զապահովութեան և զօգնութեան, յայն
սակս՝ յետ առաջնոյ անական աստուածակարգ-
բնական ընկերութեան առն և կնոջ¹⁴ և ազգա-

14 “ Ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել. ա-
րասցուք դմա օգնական ըստ դմա ”. Ծննդ. Բ :

տոհմի ընտանուծեան, 'ի բնաւոր մարդասիրու-
ծեանէ և 'ի կարօտուծեանէ միմեանց բերեալ՝ մար-
ծեցին դտին մարդիկ զհնարս գալոյ 'ի միաժողով
միաբանուծիւն, և կազմեցին զմեծ ընկերչակու-
ծիւն կամ զովոզուծիւն ազգաց և ժողովրդոց,
և սոքա՝ զմիահամուռ ազգի մարդկան, որ է տիե-
ղերական ազգատոհմ և ընտանուծիւն :

40 Զայս արարին՝ գնեցով 'ի միջի ամենեցուն
առհասարակ զիրաւունս իւրեանց, և տէր առ-
նեցով նոցա զբոլոր հասարակուծիւնն միաժողով
անձանց, որպէս զի տա այնուհետև լիցի սրաշապան
իւրաքանչիւր նոցա, և ըստ մարծեցոյ գործակից
առ հասարակաց և առ անձնիւր բարին և զար-
գացումն :

41 Արդ՝ յորժամ ընկերուծիւնն տէր եկաց
ամենայն իրաւանց զովոզակից մարդկանն, ոչ ու-
մեք մնաց ինչ յայնմհետէ առանձինն, և այսպէս
ամենեքեան մտին 'ի վիճակ զուգահաւասար-
վան զի ամենայն ոք տալով զամենայն ինչ զոր ու-
նէր՝ ետ որչափ ինչ և այլքն :

42 Ապա այնուհետև հասարակուծիւնն ըստ
օրինաց արդարուծեան բաշխեաց ետ իւրաքան-
չիւր ումեք զիրաւունսն զայն ամենայն, տալով
նմա բաժին հաւասարամասն և զուգակշիռ եդե-
լցն 'ի նմանէ 'ի հասարակաց գումարն : Յայտ ու-
րեմն է, թէ չափ այսր հաւասարամասն և զու-
գակշիռ բաժնի՝ եղև ըստ չափոյ արկեւլցն 'ի միո-
ջէ միոջէ :

43 Վասն որոյ նախ՝ ոչ ոք կորոյս ինչ զի որ-

պէս ոչ կորնչի անձն մարդոյ, նոյն և իրաւունք
ոչ երբէք կորնչին և ոչ օտարանան, վասն զի կա-
պեալ են ընդ բնութեան մարդոյ և ընդ անձին :
Երկրորդ, որպէս իւրաքանչիւր ոք զամենայն զոր
ինչ ունէրն ետ՝ չխորելով ինչ անձին, ըստ այնմ
և զարգար զկշիռն ՚ի հասարակութենէն ընդու-
նելով էառ բաժին հաւասար :

44 Եւ ահա աստի եղև իւրաքանչիւր ումք կա-
տարեալ իրաւունս ստանալ ապահովութեան և
օգնութեան գտանելոյ յայլոց ամենեցունց առ ՚ի
վայելէլ ՚ի վիճակեալ իւր բաժինն : Եւ զայս այ-
նիւ ժառանգեաց իրաւունս, զի որովհետև հա-
ղորդս արար զայլս՝ ամենայնի զոր ինքն ունէր, և
ինքն հաղորդ եղև ամենայնի՝ զոր այլք ունէին,
և զի որչափ ինչ ստացանն ապա ամենեքին և մէն
մի իւրաքանչիւր՝ ՚ի հասարակաց համարուէ անտի
առեալ է ամենայն, և ՚ի հասարակութենէն կամ
յընկերութենէն ՚ի հաւասար բաժինս բաշխեալ,
ապա որպէս ինքն ընկերութիւնն ետ, նոյնպէս
ինքն պարտի պահպանել և պահպանէ զոր ինչ
եան :

45 Յայսմ գաշնակցութեան՝ որպէս ասացաքս՝
չկորուսին մարդիկ և ոչ մասն ինչ յիրաւանց իւ-
րեանց . նա մանաւանդ յայն սակս միայն յայս
գաշն միաբանութեան եկին յայնապէս կամ լուե-
լեայն, զի լաւ ևս անվճար պահեսցեն զամենայն
իրաւունան, և կատարեալ կացուսցեն զերկոսին
ևս իրաւունս՝ զապահովութեան և զօգնութեան,
որ որպէս տեսաք՝ անկատարք էին ՚ի սկզբանէ :

Եւ կատարեալս կացուցին զնոսա , սահմանելով՝ զի զովոլուծիւնն զանձամբ առեալ զգէն զօրուծեան հասարակաց՝ ապահովեսցէ իւրաքանչիւր ումեք զանվրդով վայելս իւրոց իրաւանցն , և օգնեսցէ նմա՝ երբ միայնակ ոչ բաւէ . ուր յառաջն՝ ապահովուծիւն և օգնուծիւն յազատ կամս մասնաւորաց ասաստան կայր :

46 Ընկերուծիւնն ապահովելով և օգնելով ընկերակցացն՝ ՚ի վայելս իրաւանց՝ զայս օգուտ մեծ շահի , զի և ինքն զինքն պահպանէ : Այսն զի ինքն իսկ ընկերուծիւնն չկարէ կալ առանց ապահովուծեան և օգնուծեան , զոր միաբանեալքն՝ ՚ի շահ օգտի իրերոց հաստատել կամեցան :

47 Այս ուխտ և դաշն և միաբանուծիւն ընկերուծեան՝ չէ մտացածին ինչ վարկած , այլ արդեամբք եղեալ է ճշմարտիւ , և կայ իսկ յետկարն և արձանագիր ՚ի վկայել արդեանցն ճշմարտութեան : Այն արձան յիշատակի կանգնեալ կայ ՚ի հաւաստի հաստատութեան մարդկային ընկերութեան զոր տեսանեմքս . և յետկարն գրեալ է ՚ի տախտակն՝ յորում՝ գրուցեալ կայ բնուծիւն մարդոյն . այս ինքն է բովանդակ ամենայն պիտոյք իւր՝ զոր ոչ ոք կարէ ժխտել , զի ամենայն ոք զգայ զայնս , և անդու՛ անպարտելի բերումն իւր ՚ի ինդիր դարմանոյ պիտոյիցն , առանց որոյ անհրաժեշտ և աններելի պատուհասի դատաստանք են՝ չարակեաց լինելոյ և մինչև ՚ի կորուստ իսկ գնալոյ :

48 Ի սկսանել մարդկան , երբ և իցէ և որով և է օրինակաւ , առ իրեարս գալ և միաբանիլ , ան-

չուշտ անմարթ էր նոցա չտանել փոյթ և հոգ
խնամոյ յապահովութիւն ազատ վայելից բնակա-
ւոր իրաւանցն իւրեանց . և ոչ այլ ինչ պատեհա-
գոյն և անվրէպ հնարս առ այն մարթէին իմանալ ,
բայց միայն զգաշնակցութիւն ասացեալ միաբանու-
թեա . զի զամենայն պէտս օգտի նոցա այն վճարէ :

49 Եւ հարկ է ասել , թէ ոչ այլով իւրիք ճա-
նապարհաւ եկեալ իցեն 'ի միասին կենակցու-
թիւնս . վասն զի ոչ այլ ինչ իբրև զգա յարմա-
րագոյն արահետ ցուցանեն խելքս , և ոչ տեսաւ
երբէք՝ թէ թողին մարդիկ զմիանգամ յօժարա-
կամ եդեալ ուխտն միաբանական՝ առ 'ի ցրուիլ
կամ յայլ գաշնակցութիւն մտանել . զի այն զոր
'ի վերդ ցուցաք՝ առ ամենայն պէտս նոցա լի բո-
վանդակ է : Վասն զի հիմնեալ է յերկուս մեծ
երաշխաւորս բարեաց ընկերութեան՝ յարդարու-
թիւն և 'ի սէր , որ են երկոքին ամենամեծ օրէնք
միաբանական կենաց , և արդեամբքն իւրեանց՝ ա-
պահովութեամբ և օգնութեամբ՝ են չորեքին ան-
կիւնակալ վէմք յօրինուածոյ ընկերութեանն :
Վասն որոյ և յաջորդք նոցին առաջին ընկերչա-
կելոցն , որդիք և որդւոց որդիք և թոռունք նո-
ցա , յարդարագատ խղճէ մտացն ծանուցեալ ըզ-
հարցն և զհաւուց իմաստութիւն , և զօգուտն առ
'ի նոցունց պիտայից և իրաւանց , որ և նոցուն ին-
քեանց կարևորքն են , սովորութեան լռելեայն
հաւանութեամբն արդեամբք ընդունին և հաստա-
տեն տակաւ զնոյն նոցա գաշն և զպայմանս ուխ-
տից , և այնպէս մշտնջենաւորէ ընկերութիւնն :

ԳԼՈՒԽ Ը .

Արգասիք ընկերական միաբանութեանց :

50 Դուքին ասացեալ դաշամբդ հաստատեալ ընկերութիւնն , եգիտ և զմարթանս կարող լինելոց պահպանել զհասարակաց իրաւունսն , զբնաւոր իշխանութիւն անձանց գումարելով 'ի մի , և կարգելով այնու զհամաշխարհական իշխանութիւնն , որ ըստ օրինաց ընկերութեանն հսկէ 'ի պահպանութիւն իրաւանց իւրաքանչիւր , ուստի և 'ի բարին ամենեցուն :

51 Այս համաշխարհական իշխանութիւն այն է , որ առեալ է 'ի ձեռս պաշտօնէիցն կամ ուստիկանացն . և հսկեն նոքա 'ի բարին ամենեցուն՝ կատարել տալով զօրէնսն , որ են հրամանք ազատ և յօժար կամաց հասարակաց ¹⁵ : Իսկ ազատ և յօժար կամքն հասարակաց , ըստ սկզբանց բնական օրինաց արգարութեան , հպատակ և նշանակ է կամացն Աստուծոյ , որ ընդ բարին ամենեցուն կամի յաւիտենական արգար օրինոքն : Ուստի և հասարակաց միտք և կամք միաբանութեան քաղաքա-

15 Օրէնք են այն ամենայն , զոր միաժողով բազմութիւնն ընտրեալ հաւանեալ , գրով յայտառնէ զոր պարտն իցէ առնել և զոր ոչ . Պետիւնէսս Բսենոփոնի :

ժողով անձանց՝ է հարկաւ բերումն յիւր բարեկեցութիւն ըստ այնմ՝ օրինաց . և ՚ի մի վախճան հաւասարութեան իրաւանց բոլորեցուն ուշ առնէ :

52 Վասն որոյ այն հնազանդութիւն օրինաց՝ ոչ է ծառայութիւն հակառակ իրաւանց ինքնիշխանութեան և ազատութեան՝ որ անկ է իւրաքանչիւր ումէք . այլ է հպատակել բանին և արդարութեան և մտացն խղճի . նա մանաւանդ հնազանդել և հրամայել նոյն մի ինչ է նմա յընկերութեան անդ : Վասն զի դիտաւորութիւն և կամք օրինաց ըստ յաւիտենական արդարութեան և ըստ բանի և խղճի մտաց մարդոյս՝ է պահպանել զամենեցուն իրաւունս . ուստի որ ոչն հնազանդի օրինաց , մեղանչէ իրաւանցն այլոց և իւրոցն իսկ , ուստի և Աստուծոյ մեղանչէ ¹⁶ :

53 Այլոցն իրաւանց մեղանչէ՝ ՚ի բաց ելանելով անհնազանդութեամբ՝ ՚ի հաւասարութենէն , զոր ամենեքեան միաբան կամօք ՚ի հասարակ հաւանութենէ ուխտ եդեալ հաստատեցին : Եւ իւրոց իսկ իրաւանցն մեղանչէ այնու , զի որովհետև

16 Ոչ ուստեք է իշխանութիւն , եթէ ոչ յԱստուծոյ . . . Աստուծոյ պաշտօնեայ է՝ քեզ ՚ի բարիս . Հո . ԺԳ : Այնու զի ընդ ամենեցուն բարին կամի Աստուած , առ որ և կարգեալ է օրինաւորն իշխանութիւն և որ ՚ի նմանէն օրէնք : Իսկ որ ոչն յայն բերիցին , չիցեն և յԱստուծոյ և ոչ նորին պաշտօնեայք :

անհնազանդութիւնն օրինաց՝ անձամբ զանձն հատանել է յընկերութենէն, նոզլին իսկ զըկի յիրաւանց ապահովութեան և օգնականութեան՝ որում կարօտի, զոր և միաբանելովն յուխտ ընկերութեան ժառանգեալ էր : Մեղանչէ և Աստուծոյ, զի արհամարհէ զօրինօք իմաստութեան և արդարութեան նորա, որ անկեալ է ՚ի միաս և ՚ի սիրտ նորա առ ՚ի բարին հասարակաց :

54 Իսկ յորժամ մարդս հպատակեալ կամաւ ներքոյ անկանի օրինաց, ինքնատէրութիւն իւր և ազատութիւն ոչ կորնչին. զի ՚ի նոյն իսկ օրէնսն յեցեալ են, որ ոչ ներելով առանձին կամաց ուրուք բռնանալ ՚ի վերայ կամաց հասարակաց, նոզլին և պահպանեն զիւրաքանչիւր ուրուք ինքնատէրութիւն և զազատութիւն : Եւ զայս այնիւ վըճարեն օրէնքն, զի ուր հասարակաց կամքն տիրէ, որոյ հրամանք են օրէնք ըստ ասացելումս, յամրի կայանդ հաւասարութիւն իրաւանց բոլորեցուն . իսկ ուր առանձին ուրուք կամք իշխիցեն, անդ միայն վեր ՚ի վայր հարեալ վտրովեալ խանգարի հարթարդակ արդարամէտ կշիռ հաւասարութեանն ¹⁷ :

55 Մարդ յառանձնական վիճակէն ՚ի միաբա-

17 Իրաւունք հարթհաւասար ՚ի բնէ բուսաւ ՚ի մարդիկ,

Եւ նըւազն՝ առաւելին պատերազմօղ միշտ էկաց :

Նահանն անցեալ՝ ընկերական դաշամբն, կոչի այնուհետև Քաղաքացի. որ նշանակէ՝ թէ մարդս յայնմհետէ եղեալ է կենդանի մասն և անդամ քաղաքին, այս ինքն ընկերութեանն կամ քաղաքական մարմնոյն՝ զոր ընդ այլն միաբանութեամբ ըն կազմեաց: Ասան այսօրիկ իրաւունքն՝ ՚ի շնորհս այնր դաշին ընձեռեալք նմա յընկերութենէ անտի, կոչին այնուհետև իրաւունք քաղաքացւոյ կամ քաղաքացութեան, նա և սարգաբար Հասարակաց իրաւունք:

56 Այս ամենայն խելամտութիւն իրաւանց՝ տայ մեզ ՚ի միտ առնուլ զպատիւ մեր, միանգամայն և զպարտս:

ԳԼՈՒԽ Թ.

Պարտք մարդոյ և առև քաղաքացոյ:

57 Պարտս իմանամք մեզ զայն ամենայն՝ զոր ազատ կամօքս սարտական եմք առնել համեմատ իրաւանցս: Ասացաք ՚ի վերդ, թէ ՚ի բռնութենէ կարեացս և ՚ի բնական անյալթելի բերմանէս ՚ի բարեկեցութիւն, սարտական եմք ազատօրէն և անընդդիմաբար ՚ի գործ արկանել զիրաւունս մեր: Ապա ուրեմն չիք իրաւունք առանց յարակից սարտուց, ամենայն իրաւունք բերէ սարտականութիւն՝ կամ առ Աստուած կամ առ մեզ ինքեանս կամ առ այլս, և սարտականութիւնն ծնանի ըզսարտս:

58 Որ է ասել, թէ չգոյին մեր բնաւ պարտք ինչ առ Աստուած կամ առ անձինս մեր կամ առ այլս, եթէ չկային ինչ նախ իրաւունք յԱստուած և ՚ի մեզ և յայլս, որպէս և չեն բնաւ ՚ի մեզ կամ յայլս իրաւունք ինչ, թէ չգտանիցին ինչ նախ պիտոյք ՚ի մեզ կամ յայլս: Աստուած միայն չունի ինչ պէտս, այլ իրաւունս և եթ՝ իբրև ասպնիազ ամենատէր: Եւ զի պիտոյք մեր յաստուածագիր օրինաց բնութեանս են ծագեալք, ըստ որմէ և իրաւունքն, ասպա և պարտքն յԱստուծոյ օրինազրին մեզ առ ինքն և առ միմեանս, որպէս յայս է ՚ի սկզբանէ ցայսր ասացելոցս:

59 Ամենայն ճշմարիտ պիտոյք՝ իրաւունս ինչ ՚ի գոյ ածեն ՚ի մեզ: Ճշմարիտ պիտոյք այն են, որ ՚ի բնական ստեղծուածոյ մարգոյն հարկաւ յառաջ գան, և հասարակաց են ամենեցուն, թէպէտ և ըստ պատահական ինչ հանգամանաց՝ յաւէտ կամ նուազ երևիցին ՚ի մին քան ՚ի միւսն, որոց և լրումն ոչ ինչ գործէ զէան իրաւանց ինչ մերոց կամ այլոցն:

60 Յասացելոցս յայտ է անըստերիւր խոհակա նութեամբ, թէ ուշագրութիւն և հաշիւ ինչ պիտի ՚ի ճանաչել զիսկն և զչափ պիտոյից մերոց և այլոցն՝ առ ուղիղ խմանալ զպարտս մեր և ասպա կատարել զայնս¹⁸: Եւ ստուգիւ այգ հմտու-

18 Ատաիկեցիք օրինօք եգիպտացւոյն Վեկրոպայ խրատեալք, «Այսելեցին յանրնգոսս խաղաղութեան: Ընդելեալք ՚ի հեշտութիւնս և ՚ի

Թիւնն և այդ հաշիւ՝ կարևորք են յանսխալ առաջ-
նորդել մարդոյս 'ի պահպանութիւնն իրաւանց իւ-
րոց և օտարին . որ է ասել, 'ի կատարել առ Աս-
տուած՝ առ ինքն և առ այլս զպարտան ըստ իւրա-
քանչիւր իրաւանցն , և չգրկել և ոչ զմի յայնցա-
նէ , և անիրաւել առ Աստուած , առ անձն իւր և
առ այլս :

61 Իրաւունք անձին՝ զամենայն ինչ յանձն ժո-
ղովէ , պարտքն՝ 'ի ճանաչմանէ ընդհանուր բա-
րւոյն և իրաւանցն այլոց՝ արդարութեամբ և սի-
րով առ այլս սփռէ 'ի բարի հասարակաց ¹⁹ : Զի
և սիրոյ պարտք են , վասն որոյ և արդարութիւնն
'ի հատուցանելն : Առանց սարտուց առ այլս՝ լոկ
յանձինն իրաւունան և եթ հայել՝ չար անձնասի-
րութիւնն լինի , կամ լաւ ևս ասել՝ անձնասպա-
տութիւն և ինքնահայեաց ամբարտաւանութիւն .
և ըստ հին առածին՝ Սոսկ ծայրայեղ իրաւունքն

սպաս հարկի միաբանական կենաց , զպարտան 'ի
պիտոյիցն ուսանէին , : Պարթեւէ՛լ՛ի . Աստուած . 'ի
խառն . մասն ա :

19 Ճշմարիտ պարտք այն են , յարմարիլ 'ի մե-
ծագոյն բարին մարդկային ընկերութեան . Պօսիւնէ :

Զերկոսին մէտաք բարոյական բնութեան՝ հա-
ճոյ թուեցաւ ոմանց , կարծեմ՝ և ճշմարտութեան ,
նմանեցուցանել կենդրոնաձիգ և կենդրոնախոյս
զօրութեան , որ արի է 'ի բովանդակ զգալի բնու-
թեան , որով և կայ իսկ սա . և 'ի հարթ պահել
երկոցուն՝ կացցեն բարոյական և նիւթական բնու-
թիւնք :

լինի ծայրագոյն անիրաւութիւնն : Թէպէտ և 'ի
յետին կարօտութեան տուայալցի ոք , չունի իրա-
ւունս բռնի ինչ պահանջելոյ . բայց այլոց պարտք
են սիրոյ և արդարութեան օգնել նմա : Պար-
տուց օրէնք յայանի են , զգուշանալ իրաւանցն
այլոց . իսկ սիրոյ սահման և չափ ոչ է՝ մինչև 'ի
գիւցաղնական նուիրումն և զոհ անձին : Բարե-
կիրթն զպարտան առ ինքն և առ այլս կատարես-
ցէ՝ ուղիղ վարելով անձնասիրութեամբն և 'ի բա-
րիս 'ի գործ արկանելով զկիրս իւր :

ԳԼՈՒԽ Ժ .

Անձնասիրոջքիւն և կիրք :

62 Անձնասիրութիւն է անհատ յօժարութիւն
կամ ձկտումն և յարձակումն կամաց՝ զոր յօրի-
նաց բնութեանն ունի մարդ 'ի բարեկեցութիւն
իւր : Ծնանի 'ի պիտոյից բարեկեցութեան , զորս
ազգէ 'ի նա կարիք չարակեցութեան : Ամենայն
մարդիկ հարկաւ ունին անձնասիրութիւն . վասն
զի այնպէս ստեղծեալ են 'ի բնէ , զի զգան զչարն
և զբարին անձանց :

63 Անձնասիրութիւնն կամ սէր անձին՝ ինք-
նին բարի ինչ է , զի նա է որ տայ մեզ իմանալ
զանձնաւորութիւն մեր . այս ինքն՝ որ տայ մեզ
զգալ և գիտել՝ թէ զատ և որիչ ինչ եմք յայ-
լոց . նովաւ կայ և երևի մեզ այն՝ զոր Եսն կամ

ինքնութիւն ասեմք . և նա տայ հսկել մեզ 'ի պահ-
պանութիւն ամենայն իրաւանցս , որ զի և առ-
ւեալ իսկ են մեզ 'ի հոգալ զպէտս կարեաց մե-
րոց՝ որ գիտեն չարակեաց զմեզ առնել :

64 Չար ասի անձնասիրութիւնն , յորժամ 'ի
թիւր զառաժեալ՝ ըստ արտուղի մոլորական տա-
նիցի զմեզ 'ի վնաս իրաւանց մերոց կամ օտարին .
և լինի մոլութիւն , զի երկոքեան իսկ մոլոց խելա-
գարի գործ են : Որ անձին վնասէ , արդարև իսկ
խելագարեալ մոլի . իսկ և 'ի վնասելն այլում՝ դարձ-
եալ անձինն ²⁰ մեղանչէ . զի զնորա իրաւունան
ուրանալով և առ թոն հարկանելով՝ զիւրն ուրա-
նայ և 'ի կոխ տոյ . զի նովին իսկ իրաւունս և իչ
խանութիւն տուեալ լինի նմին՝ յանգրէն դարձ
փոխարինի իւր վնասելոյ ըստ արդարութեան կար-
գի , թէպէտ և ոչ սիրոյ : Զի ոչ եթէ անկարգու-
թեամբ յաղթի կամ դարմանի անկարգութիւն ,
և միշտ ճշմարիտ է՝ թէ չարն բարեան յաղթի , և
ոչ չարան . հոռի . ԺԷ :

20 Զի զըրկանք և բռնութիւն զամենեսին
ցանցէ 'ի հաղբս ,

Եւ ուստի ելեալն իցէ՝ անգրէն առ նոյն
դառնայ յաճախ .

Եւ չիցէ ինչ գիւրին անգորր և հեշտ վա-
րել կենցաղ

Ում գործովք զհասարակաց լուծանէ
զուխտ խաղաղութեան :

' Լ - կ ե ր :

65 Անձնասիրութիւն յայնժամ առեալ տանի խարդաւանէ զմեզ 'ի վիհ կորստեան իրաւանցս 'ի վնաս մեզ կամ այլոց, յորժամ ըստ վայելուչ չափն անդր անցանիցեմք 'ի կիրս մեր՝²¹ :

66 Կիրք ոչ այլ ինչ են, բայց մասնաւոր և առանձին կերպարանք կամ հանգամանք, զոր անձնասիրութիւն մեր զգենու՝ զհետ կրթելով այս ինչ կամ այն ինչ իրի, ուր և դէպն տացէ : Որ մեզ զհետն տայ կրթիլ այս նիշ կամ այն նիշ իրի վայրապար ըստ դէպն տալոյ, ոչ այլ ինչ է՝ բայց կարեք պիտոյիցս, որոց յայանութիւն և ցուցակութիւն են կիրք. վասն որոյ և զանազանին 'ի բարի և 'ի չար ըստ այլ և այլ իրաց պիտոյիցս՝ զոր յայտ արարեալ ցուցանեն :

67 Կիրք ինքնին 'ի բնէ իւրեանց բարի են, որ որպէս և զանձնասիրութեանէն ասացաք՝ թէ 'ի բնէ բարի է : Զի ոչ այլ ինչ են կիրք, բայց կերպարանք ինչ անձնասիրութեան, այս է՝ օգտախնդրութեան անձին²² : Չար լինին կիրք, որպէս և անձնասիրութիւնն, յորժամ ձգեն զմեզ 'ի վնաս իրաւանցն մերոց կամ այլոց :

21 Ագահութիւն և փառաց իշխանութեան կոյր ցանկութիւն

Տաքնասպէն ըզհէք մարդիկ ըստ իրաւանց վազել սահման :

'Լ-կրեք :

22 “Մեծագոյն շահ կրից է բարոյական օգուտ նոցին, զի զմիմեանս յազթահարեալ 'ի չափու

ԳԼՈՒԽ ԺԱ.

Սխորժակք և Սխտք .

68 Կիրք յայնժամ կարեն ձգել զմեզ 'ի վնաս իրաւանց մերոց կամ օտարին , յորժամ ախորժակ մեր անկարգ իցէ : Ախորժակ է փափաք կամ անձուկ իրի՝ զորոյ զգայ մարդ զկարօտութիւն . և այս ախորժակ ըստ ինքեան բարի ինչ է . զի ոչ այլ ինչ է յինքեան , բայց ցուցակութիւն կրիցս . այլ չար կամ յոռի լինի միշտ՝ եթէ անկարգ իցէ :

69 Յամենայն ժամ անկարգ է ախորժակն , յորժամ փոխանակ զճշմարիտ պէտս կամ զճըշմարիտ չափ պիտոյիցն յայտնելոյ , 'ի վեր հանէ սուտ պէտս կամ զսուտ չափ ճշմարիտ պիտոյից . և այս իսկ է Ախտ կամ յոռութիւն : Վասն զի ախտ է զեղծանիլ , այս ինքն չարաչար վարիլ բարեաւն , և այնու զեղծուցանել զայն , յոռեցուցանել և խանգարել :

պահեն : Ոչ եթէ բանն է սանձ և համ կրից , այլ միշտ զօրագոյնն կիրք՝ ակարագունին լինի . թէ լինիցի ևս բանն , այնու լինի՝ զի զօրագոյն իմն կիրս ընդդէմ յարուցանէ , : Ապոն ճէնովէլի :

“ Պորտոյ և քնոյ և վաւաշուութեան չճառայանալոյն զինչ այլ հզօրագոյն պատճառք իցեն , քան թէ այլս իմն հեշտագոյնս քան զայդոսիկ ունեւ , : Սոյրոփ սո փոենոփոնի :

70 Արդ՝ ակորժակն յայտ ածելով պատիր պէտս կամ զմոլար չափ ստոյգ պիտոյից՝ յայնժամ յախտ փոխի, յորժամ յանպատեհս զանամք մեզ զստոյգ պէտս, կամ անխոհեմաբար ըստ չափ ելանեմք ՚ի վճարելն զնոսա: Եւ անտի յայտ է ակներև, թէ զեղծումն է այդ, զի թէ յանպատեհս զլանալով մեզ զճշմարիտ պէտս, և թէ անխոհեմաբար ըստ չափ անցանելով ՚ի վճարել զնոսա, միշտ չարաչար վարեալ լինիմք զայն ինչ՝ զոր ՚ի բարին պարտ էր վարել: Արդ չարաչար վարելն զեղծանիլ է, որպէս ասացաք:

71 Յորժամ անդէպս զլանամք մեզ զճշմարիտ պէտս, զեղծանիմք իրաւամբքն՝ որ ՚ի պիտոյից անտի գան մեզ. զի չկատարեմք զպատշաճեալ պարտսն: Իսկ յորժամ անխորհրդաբար ըստ չափ ելանեմք ՚ի լրումն ստոյգ պիտոյիցս, զեղծանիմք զօրու թեամբքս՝ որ տուեալ են մեզ առ ՚ի գործ դնել զճշմարիտ պարտս մեր. զի այնու անչափու թեամբ՝ յանիրաւի վարեմք զայնս. քանզի չեք իրաւունք աւելի քան զստոյգ պէտս, և ոչ անդր քան զարդար չափ պիտոյիցս²³:

72 Յասացելոցս յայտ է, թէ ըստ իրաց իրաց՝ իւ զեղծանիմքն, նոյնչափ և զանազան ակտք որոշին. որք ամենեքեան առ հասարակ հարստահարեալ զրկեն զմեր կամ զօտարին իրաւունս,

23 “ Իբքն՝ չարք յայնժամ լինին, յորժամ պէտքն օրինօք ոչ վճարեսցին ”. Եղևի:

այլ ոչ բողբոքեցուն նոյնչտի են արգասիք : Զի են տխտք՝ որ իրաւամբք գլխաւոր կոչին . վասն զի բաց ՚ի վնաս մեծ ածելոյ մերոցս կամ այլոցն իրաւանց , պատճառս ասն այլոց ևս ըստ նոցանէ տխտից :

ԳԼՈՒԽ ԺԲ .

Խառնուած և Դաստիարակոչքիւն :

73 Երկու ինչ են որ ազգողաբար իշխեն ՚ի վերայ կրից և ասորժից մերոց . այս ինքն են զօրութիւն խառնուածոյ և զօրութիւն դաստիարակութեան :

74 Զօրութիւն խառնուածոյ է յիւրաքանչիւր մարդ առանձին չտի ինչ զգալոյ զարտաքին իրաց ազգմունս : Այս առանձին չտի՝ յէական հաւատարութեան անդ բնութեան մարդկան՝ յառաջ գայ ՚ի կազմուածոյ գործարանաց , որ յիւրաքանչիւր ոք ձևանայ յառանձին յօգուածոյ նիւթիւնէն տարերցն՝ յորոց հանդերձեալ ստեղծեալ է մարմինն և զգայարանքն : Եւ յայն սակս՝ այս կազմուած այլ և այլ է յիւրաքանչիւր մարդիկ . և այն իսկ է զոր խառնուածն ասեմք :

75 Ի կազմուածոյ աստի գործարանաց՝ որ է ասել ՚ի խառնուածոյն է , զի ոմանք երևին աշխոյժ և եռանդուն , այլք դանդաղ և ցուրտ , յրնդունել և ՚ի պահել զազգ իրաց . ոմանք համբե-

որովք իրաց իրաց, այլք անհամբերք : Եւ այսպէս որոշին կամ զանազանին 'ի բարս իւրեանց իւրաքանչիւր այլ և այլ չափով :

76 Այս առանձին չափ զգալոյ զազդ արտաքին իրաց՝ զոր զօրութիւն խառնուածոյ ասացաք իւրաքանչիւր մարդոյ, պատճառ լինի այլ և այլ կրից և այլ և այլ ակորժակաց, որ երևին 'ի մարդիկ և որոշեն զբարս նոցա և զբնաւորութիւնս, որպէս և այլ և այլ չափոյ կրիցն և ակորժակաց՝ որովք զանազանին : Եւ լինի պատճառ այսու օրինակաւ :

77 Ազգումն արտաքին իրաց՝ ըստ համեմատի առանձին ստեղծուածոյ գործարանացս՝ այլայլութիւն ինչ բերէ 'ի նոսա, որ երթայ յանգի 'ի զգացումն ցաւոյ կամ հեշտութեան. և այս զգացումն շարժէ 'ի մեզ կարիս ինչ պիտոյից : Աիրք՝ որպէս ասացաք՝ ցուցակութիւն է պիտոյից, և ակորժակ է ցուցակութիւն կրից : Այսպէս ահա զօրութիւն խառնուածոյն պատճառս տուեալ բուսուցանէ 'ի մեզ զկիրս և զակորժակս :

78 Արդ՝ 'ի խառնուածոյն գան յառաջ ամենայն առանձնական յօժարութիւնք և միտմունք մարդկան. և 'ի զօրութենէ անտի խառնուածոյն լինին ամենայն պէսպէս և ազգի ազգի կիրք և ակորժակք որ երևին 'ի նոսա : Եւ այսպէս ահա զօրութիւն խառնուածոյն իշխէ 'ի կիրս և յակորժակս :

79 Իսկ Դաստիարակութիւն ազգէ 'ի կիրս և յակորժակս այնու, զի որովհետև գաստիարա-

կութիւն է կրթութիւն յիմաստ, 'ի խրատս և 'ի վարժս՝ որովք բնաւորաբար ուղղիմք 'ի խնդիր և 'ի գիւտ բարեկեցութեան և 'ի հրաժեշտ չարակեցութեան, ինքն առաջնորդէ մեզ 'ի քննել բանաւորապէս զպատեհութիւն կամ զանպատեհութիւն ցաւոյն կամ հեշտութեանն զգալոյ՝ զոր արտաքին իրացն ազդ շարժէ 'ի մեզ :

80 Իսկ թէ զինչ է բանաւորապէսն քննել ըզպատեհութիւն կամ զանպատեհութիւն ցաւոյն կամ հեշտութեանն զգալոյ, զոր շարժէ 'ի մեզ արտաքին իրացն ազդումն, առ 'ի միտ առնուլ զայդ՝ երկուս ինչս պարտ է գիտել նախ : Առաջին, զի մարդն է էակ զգայուն և բանաւոր, այս է՝ ունակ զգայութեան 'ի մարմնի, և բանականութեան 'ի հոգւոջն : Երկրորդ, զի բարեկեցութիւն կամ չարակեցութիւն մարդոյն՝ ոչ յայս կամ յայն առանձին և մեկնակ իրէ ունի զգոյութիւն, այլ՝ 'ի բոլոր բովանդակութենէ համօրէն իրաց, յորոց կայ բարի կամ չար վիճակ կենաց :

81 Արդ՝ քանզի էակ զգայուն և բանաւոր է մարդն, ոչ միայն ներքոյ անկեալ է ընդ զգայութեան ցաւոյ և հեշտութեան, ուստի և կարեաց և կրից և ախորժից, այլ և կարող է զկարիսն՝ ըզկիրս և զախորժս իւր համեմատել կշռել ընդ բարեկեցութիւն իւր և ընդ չարակեցութիւն : Եւ քանզի բարեկեցութիւն կամ չարակեցութիւն մարդոյ կատարի 'ի բովանդակութենէ ամենայն իրաց՝ յորոց կայ բարի կամ չար վիճակ կենաց, զհետ գայ՝ զի 'ի ձեռն բանականութեան դատէ

և ընտրէ, թէ արդեօք մասնաւոր կարիք ինչ սլի-
տոյլց բուսեալք ՚ի նմա ՚ի զգալոյ ազգմանց ար-
տաքին իրաց, ուստի և կիրքն՝ ցուցակութիւնք
կարեաց սլիտոյլցն, և ախորժակքն՝ ցուցակու-
թիւնք կրիցն, իցէն ինչ զոյգ և նման այնմ՝ ամե-
նայնի՝ որ բարի կամ չար կացուցանեն զվիճակ
կենացն, թէ չիցէն :

82 Աւասիկ յայդ ընտրութիւն առաջնորդէ
գաստիարակութիւնն, որոյ գործ է ուսուցանել
մեզ՝ զառաքինութիւն ՚ի ձեռս առնուլ առ ուղիղ
վարելոյ զկիրս և զախորժակս, և առ ՚ի սանձել
զնոսա յանառակ ստամբակութենէ . կամ եթէ
ուրեք երբէք օձտեալ ստահակեսցեն, ՚ի կարգ
ուղղութեան ածել :

ԳԼՈՒԽ ԺԳ.

Առաքինութիւն :

83 Համառօտ և պարզաբար՝ Առաքինութիւնն է զօրութիւն կամ արութիւնն հոգւոյ, որով մարդ տիրէ ՚ի վերայ անկարգ ախորժակի՝ սանձելով զայն և ուղղելով, զի պահէսցի յամենայնի արդար չափ և կշիռ ընդ ճշմարիտ պէտս և ընդ սպասնոցին. կամ, որ նոյն է, զի կատարեսցին պարտքն՝ որ անկ են իւրոց կամ այլոցն իրաւանց²⁴ :

84 Ապա ոչ այլ ինչ գործ է առաքինութեան, քայց կատարումն պարտուց՝ յիւր կամ յայլոց իրաւունս պատկանելոց. սակայն այդ գործ՝ լի բռնական է : Զի ոչ այլով իւրիք է բարեկեցութիւն մարդոյ, քան թէ անմէտ անխոտոր պահելով զիւր և զայլոց իրաւունս, ուստի և կատարելով զպարտսրն առ երկոսեան պաշաճեալս :

24 Ոմանց հաճոյ թուեցաւ առաքինութիւն ասել միայն զկիրթ սովորութիւն փոյթ և յօժար գործոց՝ գեր ՚ի վերոյ քան զպարտս արդարութեան հանդիսանալով : Բայց առ գոյզնագիւտն լինելոյ այնպիսի չքնաղ դիպաց՝ չմիաբանին ընդ կիրթ սովորութեան փոյթ և յօժար գործոց : Այդ՝ դիւցազնութեան կամ քաջութեան թուի սահման, ուստի և աննման հաւաստի ճշմարտութեան իմաստից իրացն որ խնդրի մեզ աստանօր :

85 Այդ՝ առաքինութեանն է սահման առհասարակ . բայց զանազան են առաքինութիւնք ըստ այլ և այլ իրաց՝ յորս նկրտին : Զի թէպէտ և առաքինութիւն պարզաբար՝ է զօրութիւն հոգւոյ դիմամարտ ախորժակի՝ ՚ի սանձել և յուղղել զայն , որպէս զի յամենայնի պահեսցի չափ արգար ընդ սոոյդ պէտս և ընդ սպասնոցին , բայց այս զօրութիւն ոչ միշտ միաչափ է և նոյնազօր , ոչ յիւրաքանչիւր մարդ , և ոչ յամենայն ժամ ՚ի մի և նոյն մարդ :

86 Այդ անտի լինի , զի ախորժակն՝ որ ըստ ասելոյս՝ է տենչումն իրի որում կարօտի մարդ , մերթ սաստիկ է , մերթ նուազ . վասն որոյ և ըստ այդ հանդամանոց՝ աւելի կամ պակաս գտանի դիմակալօղ զօրութիւն հոգւոյն ՚ի նուաճել զայն կամ ՚ի կառավարել :

87 Սակայն չիք ՚ի մէջ առաքինութեանց այր քան զընկեր առաւել պատուական և ազնուագոյն : Զի որովհետև ամենեքեան կարգեալ են ՚ի կատարումն պարտուց՝ որ անկ են առ իրաւունսն , և ամենայն իրաւունք՝ միաբան և միապէս ՚ի բարեկեցութիւն մարդոյն բերին կամ ՚ի լաւագոյն կեանսն , միոյ ուրուք առաքինութեան գործոց չիք ունել յատկութիւն ինչ սեփական , որ զնա պատուականագոյն և ազնուականագոյն քան զմիւսն կացուցանիցէ :

88 Են են արգարև առաքինութիւնք ինչ , որ իբրև հիմունք այլոց՝ գլխաւորք կոչին , ոչ զի քան զայլսն պատուականք իցեն , այլ զի այլք առ հա-

սարակ առ մին կամ առ միւսն 'ի նոցանէ սլաա-
կանին , որպէս շառաւիղք առ բուն կամ ստե-
ղունք առ ոստ : Զի և նոքին իսկ ինքեանք առ-
հասարակ 'ի նոյն բուն անկեալք են , և մի ինչ են
ամենեքին , այսինքն զօրութիւն կամ արութիւն
հոգւոյ՝ դիմակաց փսոյեան ընդդէմ փսորժակին
'ի զսպել զնա և յուղղել , զի կշիռ պահեսցի չափ
ընդ ճշմարիտ պէտս և ընդ սպասահարկութիւն
նոցին :

89 Արդ , քանզի առաքինութիւնք առհասա-
րակ առնութիւն են հոգւոյ՝ հակառակամարտ
առ փսորժակն՝ 'ի նուաճել զայն և յառաջնոր-
դել , յայտ ուրեմն է անշուշտ՝ զի և ամենեքեան
կարևորք են մարդոյ , առանց և ոչ միումն 'ի բաց
մնալոյ . վասն զի պիտի մարդ զսպել և կառավա-
րել զքնաւ փսորժակս իւր : Եթէ մին յառաքի-
նութեանց պակասէր մարդոյս , յեանեալ գտա-
նէր և ինքն 'ի կատարմանէ այնր պարտուց՝ զոր
պարտէր գործել առ բարւոք կամ լաւագոյն
կեանս իւր ըստ անկից իրաւանց իւրոց կամ այ-
լոցն . և այսպէս չսանձելով կամ չուղղելով ըստ
պատշաճի զփսորժակ իւր , անկանէր յախտ , և 'ի
յոռութիւնս հասանէր :

ԳԼՈՒԽ ԺԴ.

Անգաւակաւ գործք :

90 Ձիք 'ի մարդն և չմարթէ իսկ լինել գործ ինչ անզանազան կամ անխտիր, իմա այնպիսի՝ յորում չիցէ նշանակ ինչ առաքինութեան, և ոչ ատաւորութեան: Ձի գործ՝ զոր միանգամ առնէ մարդ և զոր կարէ առնել, կամ 'ի բարեաց սակի հաշուելի է ամենայն՝ իբրև առաքինական, կամ 'ի չարեաց կողմանէ՝ իբրև ատաւոր: Եւ ցուցանի այդ աներկբայ հաւաստեօքս :

91 Ձամենայն զոր միանգամ խորհի և գործէ մարդ՝ ոչ յայլմէ իմեքէ շարժեալ գայ յայն, բայց 'ի դրդմանէ պիտոյիցն: Ասան զի ասացաք իսկ կանխաւ, և փորձ իսկ իրացն ցուցանէ, զի մարդս չառնէ և ոչ ինչ, բայց եթէ առ բարւոք կամ լաւ ևս կալ, և զի ջննդրէ զբարւոքն կալ՝ եթէ ոչ դրդեալ 'ի կարեաց չարակեցութեանն. կարիք՝ որ զբուն իսկ զպէտան յայտ առնեն: Ապա ամենայն ինչ, թէ մեծ թէ փոքր, զոր խորհիցի կամ գործիցէ մարդ, քանզի 'ի շարժելոյ պիտոյիցն գայ յայն, ըստ այնմ և առ մի յիրաւանց անտի պատշաճիցի՝ որ 'ի կարգս պիտոյիցն են դասեալք:

92 Այդմ զհետ գայ, զի թէ ճմարիտ իցեն պէտքն, խորհուրդն կամ գործն արարեալ 'ի մարդոյն՝ լինի բարի, իբրև ծնունդ կատարման պար-

տուց առ իրաւունս ինչ պատշաճելոց : Եւ չար լինի, եթէ կամ պէտքն սուտ իցեն, կամ չափ պիտոյիցն սնիրաւ . զի յայնժամ գործն լինի առանց իրաւանց, կամ թէ հակառակ ևս իրաւանց օտարին :

93 Որ է ասել կարճաբոս, թէ ամենայն գործ մարդոյ՝ կամ իրաւացի կատարումն է իւրոց իրաւանցն, և կամ լուծումն իւրոյ կամ այլոյ ուրուք իրաւանցն : Ասան որոյ՝ եթէ յիրաւի կատարումն է իւրոց իրաւանց, գործն բարի է . եթէ իւրում կամ այլում իրաւանց է լուծումն, չար է գործն : Եւ ահա ինքնին իսկ պարզ և մերկապարանոց եկաց բանն, թէ ՚ի մարդն չիք մուտ և ոչ տեղի բընաւ անզանազան կամ անխաիր գործոց :

94 Հարկ է ասլա ասել, թէ ամենայն գործ մարդկային՝ ծնունդ է առաքինութեան կամ աստի : Առաքինութիւն, որպէս ասացաքն, է առնութիւն հոգւոյ ընդդիմամարտ ասորոժակի ՚ի սանձահարել զնա և ՚ի բարեկարգել՝ առ ՚ի կշիռ և հարթ պահելոյ զչափ արգար ընդ ստոյգ պէտս և ընդ սպաս նոցին . և այս իսկ է իրաւամբքն գործել : Ախտ է զլանալ յանդէպս զպէտսն, կամ անիմաստաբար անցանել զանցանել ըստ չափ ըսպասու նոցին . և այս իսկ է մեղանչել առ իրաւունս մեր կամ առ ընկերին :

95 Եւ զի դովին օրինօք են դատելի ամենայն գործք մարդոյ, ևս և դուզնաքեայք, յամենայն ժամանակի և յամենայն դէպս, յայդմ չիք ինչ երկևան : Ասան զի և դուզնաքեայք անգամ ՚ի

գործս նորա, որպէս զիարդ ինչ և իցեն, առ իւր կամ առ այլոյ բարեկէնդանութիւն հային միշտ. և ազգեն իսկ յայն նովին պատճառաւ, որով այլ ամենայն երևելի ինչ արարուած կարէ ազգել: Իսկ առաւել կամ նուազ չափ ազգեցութեանն ոչ փոխէ զքնութիւն գործոյն. զոր և դիւրին է ցուցանել բիւրուք օրինակօք յերաց յաճախելոց:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Շահնդ զառաքիկոչիւն:

96 Քանզի չիք ինչ անզանազան և անխտիր 'ի գործս մեր, և բարիքս յառաքիկութենէ առնուն զլաւութիւնն, տեսցուք զիարդ ընդիցի մեզ շահել զառաքիկութիւն: Յաջողեսցի մեզ ստանալ զայն, եթէ հանապազ ո՛ւշ արասցուք իրաւանց մերոց և այլոցն, ո՛ւշ և բարի և չար արգասեաց՝ զոր պահպանութիւն կամ լուծումն մերոց կամ այլոցն իրաւանց ծնանին առ բարեկեցութիւն, յոր անդու՛ անարդել ձկախմբ:

97 Եւ առ այս օգնեսցէ յոյժ գիտութիւնն բարոյական: Զի նա է որ համեմատութեամբ իմն ցուցանէ մեզ ընտրութիւն առնել ընդ ճշմարիտ շահս մեր և ընդ սխալսն և վրիպակս: Եւ համառօտ վճիռ վարդապետութեան նորա այն է, զի աստք դառնան միշտ 'ի տոյժ աստաւորին, և առաքիկութիւնք՝ ցանգ յօգուտ առաքիկոչիւն:

98 Վասն որոյ՝ զգուշանալ իրաւանց մերոց և օտարին՝ ի բարեկեցութիւն տանի զմեզ, իսկ արհամարհութիւն մերոյ կամ՝ այլում իրաւանց՝ ածէ զմեզ ՚ի չարակեցութիւն : Զի ոչ այլ ինչ է բարոյականն գիտութիւն, բայց բարւոք ճանաչել զիրաւունս, և բարւոք վճարել զպարտս պատշաճեալս առ մեր կամ՝ առ այլոց իրաւունս :

99 Բայց այս գիտութիւն իրաւանց և այս կատարումն իւրաքանչիւր պարտուց՝ որ անկ էն առնոսա, պարտի կրթութեամբ՝ ի սովորութիւն դառնալ մարդոյն, եթէ ճշմարիտ առաքինի լինել ցանկանայցէ :

ԳԼՈՒԽ Ժ.Զ.

Կիրք սովորոցիւն :

100 Կիրթ սովորութիւնն է հաստատուն բարք, զոր ստանայ մարդ՝ վաղուսումն և ստէս կրթութեամբ յաճախելով զնոյն գործս :

101 Սովորութիւնն եթէ յառաքինութիւնս է՝ բարի է, եթէ յախտս՝ չար է : Սովորութիւնն ՚ի ճանաչել զիրաւունս՝ կոչի կրթութիւն իմաստութեան . և ստանայ ոք զայն հաւանութեամբ մտացն ընդ ամենայն վարդապետութիւնս Բարոյականին : Սովորութիւնն ՚ի կատարումն պարտուց՝ կոչի կրթականութիւն լաւութեան կամ բարեգործութեան . և լինի ստանալ զայն կանխագոյն

վարժելով 'ի բարւոք կատարումն ամենայն պարտուց՝ զոր ունիմք առ Աստուած, առ մեզ ինքեանս և առ այլս : Եւ ահա այդ իսկ է վախճան Բարոյականին :

102 Ապա առ 'ի լինել մարդ բարի՝ հարկ է սարասել յանձին զսովորութիւն իմաստութեան և լաւութեան . զի այլ է առնել զգործ ինչ բարի, և այլ լինել մարդ բարի : Եւ չարագոյնք 'ի մարդկանէ կարեն երբեմն առնել գործ ինչ բարի, բայց ոչ այնու մերկանան 'ի չարութենէն և փոխին 'ի բարի :

103 Վասն որոյ՝ օգտեսցէ անշուշտ վաղագոյն կրթիլ 'ի սովորութիւն իմաստութեան և բարեգործութեան : Եւ երանի որոց այնպէսն առնիցեն . աներկմիտ լիցին առնուլ զառհաւատչեայ ճաշակ երջանկութեան 'ի վերայ երկրի . զի աներկբայ են թէ հաճոյ են Աստուծոյ, գոհ միշտ զանձանց, և արժանի գոհութեան և յարգի և սիրոյ այլոց :

104 Բայց և մարդ բարի ներքոյ անկեալ է ձախորդութեան, այդ յայտ իսկ է և չիք երկեան . սակայն և յամենայն ազգի ազգի ձախողանսն անդ՝ մարդ բարի ունի զբարւոք վկայութիւն խղճի մրտացն . գովեստ պատուական և վսեմ, բաւական 'ի հատուցումն փոխարինի ամենայն չարեացն . զոր և ոչ ոք փոխանակեսցէ ընդ մեծամեծ յաջողուածոց : Եթէ չարակրութեանց մարդոյ բարւոյ իցէ ինչ դարման 'ի մարդկանէ, յոյս հաստատուն ունի գտանելոյ զայն . իսկ թէ ոչ, ունի գէթ զափո

փանս մխիթարութեան, զոր բարիոք մտացն խիղճ
և յոյս ոգւոյն անարատի առ արդարադատն Աս-
տուծոյ և զոր բարեացն գթութիւն և կարեկցու-
թիւն յաստիս մատուցանեն: Հազիւ երբեք պա-
տահէ, զի այր բարի Լքեալ թողեալ բոլորովին ընդ
վայր հարցի 'ի սպառ 'ի մարդկանէ. թող զառ 'ի
յԱստուծոյ քաջալերութեան շնորհսն:

105 Հուսկ ապա, որով արութեամբ և որով
հանգարութեամբ չակնարկիցէ նա 'ի վախճանն
մերձեալ: Խաղաղական մահ մարդոյ բարւոյ՝ հան-
դէս և վարձ է միանգամայն առաքինութեան նո-
րա. զի չունի ինչ փաշաման կրել յանձնէ կամ
բնաւ 'ի մարդկանէ, և ոչ ըստգիւտ 'ի մտացն խըղ-
ճէ առաջի արդար դատաւորութեանն Աստու-
ծոյ, յորոյ յուսայ մանաւանդ յաւետիսն և ակն
ունի յաւէժական փոխարինաց: Իսկ մարդ չար,
ամենաթշուառ, ընդ բարեկեցութիւն կամէր,
զերջանկութիւն խնդրէր, բայց ճանաստարհ զյո-
ւեգոյն կալաւ: Եբեր յանձին զյիմարութեան
սարաս և զապիրատութեան, ամենայն կեանք իւր
չար իմն էր ախտից, վասն որոյ և առ կենդանու-
թեամբն ոչ այլ ինչ ժառանգեաց, բայց նեղու-
թիւն, տրտունջ, տագնապ և ամօթ, թէ և չփե-
տեցին զնա ահք սպառնալեաց աստուածային
պատուհասիցն, որ կան և պահին նմա 'ի հանդեր-
ձելուսն:

106 Թէպէտ և եղեն նորա մեծութիւնք,
փառք, պատիւ և իշխանութիւն, որչափ ինչ ու-
նի տալ բարեյաջող և բարեբախտ վիճակ, կարծի-

ցենս թէ իցէ այնիւ գոհ լիեալ զանձնէ : Ի վերին երեսս ձեացաւ զայն երբեմն պատճառանօք յաջս այլոց , և ուրախ թուեցաւ . հնարէր խաբել զանձն . բայց սիրտ իւր ոչ ծանեաւ երբէք երկուս ևեթ անհպտ վայրկեանս ճշմարիտ հանգրտեան : Չունի աներկիւզ դիմագրաւել մահու . չիք ինչ 'ի սիրտ նորա մխիթարութիւն , զի մտացն խիլճ հանապազ յանդիմանեալ կշտամբեալ կռփէ զնա յիշատակաւ չարաչար վարուց կենացն՝ զոր 'ի յոռութիւնսն ծախեաց :

107 Իսկ արդ իցէ ինչ արդեօք նմա յայլոց յոյս : Գիտէ՞ զի չէ ինչ յումեքէ այնմ արժանի : Այնուհետև հարկ է նմա ուխտիւք հրաւիրել յանձն զմահ , զի զերծցի 'ի դառնադառն տանջանաց խայթոցաց մտացն : Եւ ո՛վ , որպիսի՛ ինչ իցէ մահ մարդոյ չարի :

108 Յայտ ուրեմն է , թէ ճշմարիտ օգուտ է մարդոյ՝ մարդ բարի լինել , և բարոյական ուսմանն է ըստ համօրէն մասանցն վարդապետել զայն :

ԳԼՈՒԽ ԺԷ .

Բաժանուռն և Բարոյականիկն :

109 Բարոյականն յիրաւունս հաստատեալ է . իրաւունք 'ի յաւիտենական և 'ի բնական օրէնս աստուածայինս , որ հրամայեն առնել զայն ամենայն՝ զոր յարդարութենէ պարտական սիրոյն Աստուծոյ և անձին և ընկերին հարկ է առնել առ

երջանկութիւն պատշաճեալ բանական բնու-
թեան, և 'ի հակառակացն նահանջել: Չի ամե-
նայն օրէնք և պատուիրանք 'ի մի բան բովանդա-
կին, 'ի տէր Աստուծոյ, և ընկերին՝ իբրև անձին .
Մաթի . ԻԲ . Հա . ԺԳ . Գաղ . Է :

110 Ըստ այսմ՝ վարդապետութիւնք Բարոյա-
կանին բաժանին ըստ կարգի պարտուց մարդոյն .
յորոց ամանք են հասարակ պարտք մարդոյ առ
Աստուած արարիչ և տէր՝ իբրև արարած նորա
և ծառայ, ըստ առանձնական կենացն . կէզք՝
պարտք առ ինքն և առ այլս պարզաբար ըստ ըն-
կերական վարուց և եթ, և այլք՝ պարտք առ ինքն
և առ այլս՝ ըստ որում անդամ է մարդս այս ինչ
կամ այն պետութեան, և ըստ քաղաքական օրի-
նոց աշխարհին իւրոյ: Ի զանազանութենէ աստի
պարտուց ծագի օրինաւոր բաժանումն մասանց
Բարոյականին, և ըստ նմանէ կարգ վարդապե-
տութեանն:

111 Արդ՝ ըստ այդմ Բարոյականն բաժանեացի
'ի Բարոյական ընդհանրական և 'ի Բարոյական
ազգային կամ միոյ աշխարհի:

112 Առ ընդհանրական և համաշխարհական
Բարոյականն պատկանին պարտք մարդոյ առ Աս-
տուած ըստ առանձնաւոր կենացն, և պարտք
մարդոյ առ ինքն և առ այլս ըստ ընկերական վա-
րուց: Եւ սորա այն յատկութիւն է, զի մի և նոյն
է առ մարդիկ համօրէն աշխարհաց և ամենայն
ժամանակաց, այնու՝ զի պարտքն զոր ուսուցանէ՝
հային առ իրաւունսն որ անընդմիջաբար հիմնեալ

էն 'ի վերայ օրինաց անփոփոխ բնական ստեղծուածոյ մարդոյն, որ յամենայն տեղիս և յամենայն ժամանակս նոյն և մի է :

113 Իսկ առ ազգային կամ միոյ աշխարհի Բարոյականն պատշաճին պարտք մարդոյ առ Աստուած, առ ինքն և առ այլս՝ ըստ որում է անգամ այս ինչ կամ այն ինչ պետութեան, և ըստ քաղաքական օրինաց իւրոյ աշխարհին : Եւ սորայն է յատկութիւն, զի զանազան պարտս բովանդակէ ըստ զանազանելոյ քաղաքական վիճակաց մարդոյն և քաղաքական օրինաց աշխարհացն :

Եւ պարտքն իսկ առ Աստուած՝ փոփոխութիւն կրէ ըստ քաղաքական օրինաց աշխարհի և աշխարհի, ոչ 'ի բունն՝ որ է ճշմարիտ և ուղիղ աստուածապաշտութիւն և սրբութիւն կրօնից, այլ 'ի հանգամանս ինչ՝ որ զկարգս արտաքին պաշտամանն կամ զարարողութիւնսն յօրինեն :

114 Վատարեալ բարոյական գիտութեան անկ է զիւրաքանչիւր մասանց պարտուցն զպատշաճն ուսուցանել բովանդակ . զոր մեք այլում թողումք, այսու ևեթ շատացեալք՝ զի զտեսական սկզբունս գիտութեանն ցուցաք կարճաբար բաւականութեամբ, զբուն ասեմ զառաջին զհաստատուն հիմունսն, յորոց վերայ կառուցանելի է շինուածն առհասարակ :

ԳԼՈՒԽ ԺԸ .

Վերջաբան իւրաւո՛ր յօրինուած հասարակաց
Բարոյականի :

115 Ի ցայս վայր ցուցելոցդ ինքնին իսկ յայտ
է , թէ ուղիղ յօրինուած հասարակաց Բարոյա-
կանի , յետ հիմն գնելոյ զբնական պարտս մար-
դոյն առ Աստուած , պարտի սկսանել 'ի պար-
տուց մարդոյն առ ինքն և առ այլս , յորս իրա-
ւունք իւր հարկեցուցանեն զնա առ առաջնորդե-
լոյ գործոց իւրոց 'ի պահպանութիւն և 'ի կա-
տարելութիւն իւր , և 'ի պաշտպանութիւն այդո-
ցիկ և այլոց ամենայնի իւրոց իրաւանց , — և թէ՛ 'ի
տեսութեան անդ իրաւանց հաւատարութեան ,
ապահովութեան և օգնութեան երևի կերպարան
արդարութեան , որ հիմն է պարտուց մարդոյն՝
յորս ստիպեն զնա իրաւունք այլոց , — և թէ՛ գի-
տութիւնս այս հաստատի 'ի սկիզբն ինչ յայտնի ,
աներկիւփն և անգրգուելի , յայն ասեմ՝ որ ծա-
գէ 'ի պիտոյից բարեկեցութեան և 'ի լուսագոյնսն
նկրտելոյ , — և թէ՛ պիտոյք զիրաւունսն ծնանին և
իրաւունք զպարտսն , — և թէ՛ քննութեամբ 'ի վեր-
ելանեն համեմատութիւնք իրաւանց ընդ պար-
տրս , և ներքին ազգելք սրտին և վկայութիւն՝
յանկուցեալ հաւանեցուցանեն զմիտսն :

116 Ապա յայտ ուրեմն է ևս , թէ զհասարա-
կաց Բարոյականն պարտ է 'ի վերայ այսց սկզբանց

հիմնել, որով և հատցին սպառսպուռս ամենայն երկբայութիւնք՝ տարակուսանք և վէճք շարժեալք ցայսօր առ ամենայն բարոյախօսս, և յայտնի լինիցին անշուշտ արժանիք ամենայն պարզ և խառն գործոց մարդոյն :

117 Յետ իմաստասիրական և բնազննական հրմտութեանցս՝ չստեմ կատարելոյ, այլ գէթ բացէ 'ի բաց աճմամբ յառաջագէմ զարգանալոյ, քաջայայտ է այժմ առ անաչառ և անպղտոր յստակամիտ հանճարեղսն, զի անվըէպ հնարագիտութիւն ուղղութեան մարդկայնոց իրաց՝ 'ի նոյն ինքն 'ի մարդումն է, — զի յաստուածակերտ ստեղծուածի անդ իւրում կան բովանդակ տարերք այնր զօրութեան, որով կարող գտանի ճանաչել զկենցաղօգուտսն իւր, և 'ի ճանաչմանէ անտի քաղել պտուղ 'ի շահ գործոցն, — և զի սկզբանցն ճշմարտութիւն անեղծ է և յաւիտենական :

118 Իսկ ընդ հակառակն՝ առժամայնք միայն են ըստ բնութեան և ըստ զօրութեան օրէնքն հանեալք յինքնաստեղծ կարգածոյ՝ օտար եղելոյ 'ի բնութենէ մարդոյն, և կառուցելոյ յայնպիսի պատճառս՝ յորս այնչափ և եթ հաւանել գիտացեն միտք, որչափ կարասցեն տալ նոցա զօրութիւն մտացածին գուշակութիւնք կարծողականք :

119 Այսմ յայտյանդիման և մեծ հաւաստիս ընծայէ բազմագարեան պատմութիւն մարդոյս, եթէ մանր միտ դնիցի՝ թէ զնարգ առածք Բարոյականին կամ ամենեւին այլ ընդ այլոյ կարգեալ են ըստ պէսպէս օրինակի խորհելոյ մարդկան, կամ

ի բազում օտարոտի պէտս վարեալք . մինչև երբեմն
առ լաւութիւնս ունել զայնպիսի գործս՝ որ այլ
երբէք ընդ այլանդակ յուրութիւնս համարեցան ,
և թէ զհարգ մեծամեծ արք բանիբունք սաստիկ
մարտիւ մաքառեալ կան ընդ միմեանս զընտրու-
թենէ այլոց ինչ գործոց , կիսոց գովելով զայնս և
կիսոց նզովելով , և զայլոց բազմաց ոչ իշխելով առ
տարակուսանացն վճիռ ածել , և այսպէս մեծաւ
փրասու ՚ի վարանի կացուցանելով զաւամիկն , կամ
խիղճ իմն մոլար ՚ի ներքս տնկելով :

120 Այս ամենայն անհարթութիւնք ինքնին
դիւրեալ հորդեացին , եթէ բարոյական ուսումն
կառուցի ՚ի մի ինչ սկիզբն միայն և յակներև ,
յայտանդիմանութեամբն անժխտելի , և միու-
թեամբն առ ամենայն պէտս պատշաճեալ . զի և
այդ իսկ է ճշմարտութեանն նշանակ ²⁵ :

121 Եւ որպէս այդ կանոն հաւատարիմ է ՚ի
գաառումն վարդապետութեան ամենայն ազգի ազ-
գի իմաստասիրաց և բարոյախօսաց , նովին արդա-

25 “ Է՞ր չիցէ մարթ ՚ի միողէ յանժխտելի սկզբ
բանէ Բարոյականին հանել անհրաժեշտ հետևու-
թիւնս յօրէնս արգարութեան և անիրաւութեան :
Չև է այդ եղեալ , զի չև ուրուք ուշի ուշով և
յստակ խորհրդով պարասպեալ է յայն՝ որպէս ՚ի
չափաբերականն , , . Լ^ո 4 :

“ Որպէս չափաբերութեանց՝ նոյն և Բարոյա-
կանին գոյ հասանել ՚ի հաւաստի ստուգու-
թիւնն , , . Ն^ո 5 :

րապէս դատեսցի և առաջիկայ Բարոյականիս
հանգերձեալ յօրինուած : Զի եթէ ոչ սկիզբն
առնուցու յօրինաց անտի՝ զոր ամենայն ոք յա-
մենայն ժամ կենդանի յանձին իւրում հաստա-
տեալ տեսանէ, և եթէ ոչ պատշաճիցի առ ամե-
նայն պէտս նորա, ապա և ոչ յանշարժ հիմանն
համարեսցի կառուցեալ, կամ գէթ ոչ ուղիղ ամ-
բարձեալ ՚ի շինուածն, որպէս և այլք առհասա-
րակ :

122 Բայց մի այնպէս ինչ թուեսցի, թէ զար-
դիս առ մեօք և եթ նորահնար ինչ իցէ սկիզբնդ
այդ Բարոյականի . նա մանաւանդ ՚ի վաղ ժամա-
նակաց՝ յորմէ հետէ առին մարդիկ բարոյախօսել՝
ուրուագրեալ է այն այլ և այլ կերպարանօք, և
յերկերիւր ամաց և այսր՝ փոքր մի առաւել անա-
ղօտ ճառեալ ՚ի գերագունիցն իմաստասիրաց, և
յոմանց ՚ի յետին ժամանակս յստակագոյն ևս ա-
ւանդեալ : Բայց միայն զի չիք ուրուք երևեալ մին-
չև ցայժմ, որոյ ճշգրիտ շարագրական ոճով²⁶ և
վայելուչ ճշգուծեամբ բացատրեալ իցէ զայն բո-
վանդակ, և այնպիսի կարգաւ և հաւաստեօք առ
՚ի պէտս արկեալ ՚ի վար, զի յամենայն դէպս բա-
րոյականս յայոյանդիման տեսանիցի ստուգու-
թիւնն նորա և զօրութիւնն :

26 Զի այս ոճ գիւր և հեշտ է համբակաց քան
զվերլուծականն, և պատեհագոյն առ ուսումն
տարերց գիտութեանց :

123 Արդ՝ այդմ՝ արժան է մտադիր և ուշակալ լինել անվրէպ կատարելոյ 'ի նորոգ յօրինուածի անդ հանդերձելոյ Բարոյականին՝ 'ի հաստատուն սկիզբնն յայն կառուցելոյ . զի որոց խուն մի միտ դնիցեն՝ ակն յանդիման երևիցի , թէ ամենայն հետեանք սկզբանն այնորիկ և որոց անտի տեսու թիւնք՝ յարուցեալ հիւսեալ և ընդելուզեալ կան ընդ միմեանս , առանց ինչ յամելոյ 'ի ճօխաբանել զնոցանէ . զի և անպատեհ իսկ է :

124 Եւ քանզի այն լինելոց է նորա գիտաւորութիւն , 'ի գիտութիւն բազմաց ածել որ ինչ միում միում անկն իցէ գիտելոյ 'ի յայտանկատ և աներկեան օրինակ բարւոք կենցաղավարութեան , վասն որոյ՝ թէպէտ և յիրաւի կարևոր է բարոյախօսին բազում և խոր հմտութիւն Բարոյականին , սակայն 'ի ճառսն իւրում առ ռամիկն՝ զարուեստն և եթ պարտի աւանդել , որ է շար իմն բարեկարգ պատուիրանաց 'ի տեսական գիտութենէն բղխելոց : Եւ զի մատեանք՝ յորս հմտութիւնն այն բովանդակի , օտար մնացին միշտ և անօգուտ 'ի ռամկաց , այն միայն շահաւէտ եղիցի նոցա՝ որ առանց բազում խորազնին և նուրբ քննութեանց , նոցա անհասից , և առդ իմն նախագիտելէօք կարի կարևորօք և եթ՝ զսոսկ պայման գործոյիցի բացատրեսցէ ²⁷ :

27 « Պարտ է մարդկան խնամով պարապել 'ի Բարոյականն , զի ամենեցուն պիտոյ է նկրտել յաւարտակէտն բարեաց , և 'ի ձեռս նոցա է դամագիտ այնմ լինել և ժաման » . ' Լ՜+ :

125 Թէպէտ և լոկ իմաստասէր և ոչ աստուածաբան բարոյախօսդ այդ ամփոփեալ կայցէ 'ի սահմանի ևեթ բնական պարտուց մարդոյն առ Աստուած՝ առ ինքն և առ համաբնեայս իւր, ոչ եթէ այնու վրէպ ինչ և վասնդ հասանիցէ գերաբուն աստուածպաշտութեանն մեծագանձ խրատուց : Չի 'ի կատարած գործոյ բնախրատ բարոյախօսիդ յաւելլի է և գլուխ մի մեծ, ճառել թէ որով օրինակաւ 'ի բարձրագոյն կատարումն հասանիցեն աւանդեալ բարուախօսութիւնքն :

126 Որ և լինիցի այն 'ի կապէն և 'ի զօդել զամենայն գործ մարդկային ընդ միայնոյ վեհագոյն և ամենաբաւական պատճառին կարգի տիեզերաց, որ այն ինքն իսկ է արարիչն Աստուած : Որով և 'ի յայտ գայցէ ամենեցուն, թէ բարեպաշտութեան իսկ կրօնք 'ի հարկէ բնութեանս աւանդին՝ իբրև միայն ճանապարհ 'ի գիտութիւն գերօթբուն վախճանի մարդոյս ժաման լինելոյ, և նըպաստիցն մատակարարելոց նմա առ այն վսեմական նպատակ՝ յայնմանէ որ ասացն « Առանց իմ ոչինչ կարէք առնել », Յ.Վ. Ժ. Է :

127 Անմոռաց 'ի մտի պարտ է ունել, զի ոյծ և ցամաք հաշիւք բանականութեան ևեթ, թէ և բաւական ևս իցեն որոց կիրթ և հրահանգ են միտք, սակայն ծանր իմն բեռն են մտաց ռամկին . յորոց յոլովագոյնք՝ թէպէտ և ընդ կատարելագոյն օրինօք քաղաքականութեան սնեալք, սին լքեալ մնացեն միշտ աւելորդ յաղգեցուծենէ իմաստասիրական ճարտարմտութեանց : Եւ վասն այսպի-

սեաց՝ իմաստասիրութիւնն ինքնին ուսուցանէ զկարևոր պէտս սրտեռանդն հոգեբուղի Բարոյականին, որ միայն իշխէ խորհրդոց և սրտի պարզամտաց :

128 Բայց յաւելևս, թէ երախտիք իւր ոչ առ սոսա ևեթ սահմանին, այլ և մոքրագարդէ զգործըս՝ որոց առաջնորդ են ստուգագէտ հաշիւք բանաւորութեան, ամբառնայ զբանն ՚ի վերքան զպարունակ մարդկայնոցս, բանայ նմա նոր իմն և ընդարձակ ոլորտս, և տանի հանէ զնա յիմաստն գերակայ, ՚ի գերաբնագոյն և գերագոյական Էն ճշմարտութեան և արդարութեան, որ ևնոյն իսկ ինքն լինի արիտուր գործոցն բարեաց և վայելք ճշմարտասէր արգարոյն :

129 Գամ մի ՚ի նախակարգեալ հիմանցդ վերայ յորժամ ամրակառոյց կանգնեսցի բնականն Բարոյական, անշուշտ ապա այնուհետև առաւել ՚ի դէպ և հզօրեղապէս ՚ի վերայ գայցեն տիրաւանդ վարդապետութիւնք քրիստոսակրօն Բարոյականին, զմիտսն ՚ի բանէն յարդարեալս և կազմս գտանելով, մինչև չմնալոյ ինչ անդ երկեան զկարևոր պիտոյից գործելոյ զառաքինութիւն և խորշելոյ ՚ի չարութենէ. և մտադիւրագոյնս ընդգրկեսցեն զգեղեցիկ զքաջալեր յոյսն՝ ամրագոյն իմն հաստարան ունելոյ ՚ի նպաստս անգր վերին ամենազօր հայրախնամ տեսչութեանն :

130 Եւ զայս շատ համարեալ բնական Բարոյականին, զորոյ զհիմունսն և զսկզբունսն ևեթ ցուցեալ մեր, որպէս կանխեցաք ասացաք, բաւա-

կանս արդեօք նրբախնդիր և սրատես հանճա-
րեղաց յուղղութիւն կամաց և գործոց, զման-
րամասն յօրինուածոյն կատարումն այլոց թո-
ղեալ լիցի մտավարժից աշխատասիրաց : Շատ իսկ
մեք զսպիտակ 'ի սեաւ ներկաք, քան զոր չիք ինչ
երկիւղալից, զի բազում ուրեք խաւար 'ի լոյս
խառնել է. սակայն և այդ 'ի պէտս գայցէ՝ յա-
ռաւել պայծառութիւն լուսերանդաց :


Վ Ե Ր Զ

ՅԱՆԿՔԻ ԳԼԽՈՅ

Յառաջաբան	5
Սկզբունք Ուղիղ խորհելոյ կամ Բանականին	16
ԳԼ. Ա. Ձինչ էր, և ղինչ պարտի շինել օրենս Ուղիղ խորհելոյ	—
ԳԼ. Բ. Աստուջին սքոտութեան՝ գոյութեան մեր . և է այն ՚ի ղգալ	22
ԳԼ. Գ. Այլեայլ յեզանակի գրացողութեան	25
ԳԼ. Դ. Իմացմանս կամ գաղափարս	29
ԳԼ. Ե. Գոյութեան էից արատոյ անջանց մերոց	34
ԳԼ. Ձ. Գաղափարս ժամանակի, շարժման, աս- րածութեան	39
ԳԼ. Է. Նշանակի գաղափարաց, շեղութեան և հարկաւոր	46
ԳԼ. Ը. Նշանակի գաղափարաց, շեղութեան արտեւ- րական և կամաւորական	50
ԳԼ. Թ. Տանել հեղեղութեան գաղափարաց	64
ԳԼ. Ժ. Սերջին խորտաւոր ուղիղ խորհել	77

ԳԼ. Յ.	Զինչ է Բարոյականն և զինչ նորա գործն	—
ԳԼ. Բ.	Իրաւունք Տարգոյ	89
ԳԼ. Գ.	Անժնական սկիզբն և պարստաւորաւանց	93
ԳԼ. Դ.	Մէն թ յիրաւանց առ ո՛ր պէտս Տար- գոյն պարզաճին	96
ԳԼ. Ե.	Պարպականութիւն յիրաւանց ծագեալ .	99
ԳԼ. Զ.	Անկարար իրաւունք, և Սկզբունք ըն- կերականութեան	100
ԳԼ. Ե.	Ընկերական ժաբանութիւնք	102
ԳԼ. Ը.	Արգասիք ընկերական ժաբանութեանց .	107
ԳԼ. Թ.	Պարպ Տարգոյ և Ասն քաղաքացոյ .	110
ԳԼ. ժ.	Անյնասիրութիւն և Կիրք	113
ԳԼ. ժԱ.	Ախորժակք և Ախպք	116
ԳԼ. ժԲ.	Խառանաւթ և Դասախարակութիւն .	118
ԳԼ. ժԳ.	Առաքինութիւն	122
ԳԼ. ժԴ.	Անգանազան գործք	125
ԳԼ. ժԵ.	Շահել զառաքինութիւն	127
ԳԼ. ժԶ.	Կիրք սովորութիւն	128
ԳԼ. ժԷ.	Բաժանումն Բարոյականին	131
ԳԼ. ժԸ.	Վերջաբան խրատ 'ի յօրինաւթ հաս- րակաց Բարոյականին	134





1510

0025627

2013

